ԿԱՌԱՍ

Պատմություն և ժառանգություն

ՀՏԴ 39(=19):94(479.25)
ԳՄԴ 63.5(5Հ)+63.3(5Հ)
Կ 295

Հրատարակության երաշխավորող՝
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհուրդ

Խմբագիրներ՝ Միքայել Բադալյան, Արսեն Բոբոխյան

Նախագծի համակարգողներ՝ Հռիփսիմե Հարությունյան, Միքայել Բադալյան

Կ 295 Կարաս. պատմություն և ժառանգություն.– Եր.: Սարոմմ Գրաունդս («Վալե Դը Լ Արփա» ՍՊԸ), 2025.— 152 էջ:

Կարասն ուրույն տեղ է գրավում հայոց ինքնությունը խորհրդանշող տարրերի խճանկարում: Կարասի օգտագործումը Հայաստանում ունի հազարամյակների շարունակականություն և ժառանգականություն: Հետաքրքիր է, որ կարասի հետ առնչվող տարբեր ընկալումներ ասոցացվում են կյանքի, ծննդյան և մահվան, բարեկեցության, առատության, գինեգործության հնագույն մշակույթի ու այլ երևույթների հետ:

Հարկ է նշել, որ այս աշխատությունը բացառիկ է իր բնույթով: Այն հայկական կարասի վերաբերյալ դեռևս միակ ամփոփ հետազոտությունն է, որի ստեղծմանը մասնակից են դարձել իրենց ոլորտներում մեծ հեղինակություն վայելող հայ և օտարերկրացի գիտնականներ: Առաջին անգամ մեկ աշխատության մեջ գիտահանրամատչելի կերպով մեկտեղվել են հայկական կարասին առնչվող տարբեր թեմաներ՝ հնագիտություն, պատմություն, ազգագրություն, բանահյուսություն, լեզվաբանություն, գինեգործություն և այլն:

ՀՏԴ 39(=19):94(479.25)
ԳՄԴ 63.5(5Հ)+63.3(5Հ)

ISBN 978–9939–1–2219–9

© Սարոմմ Գրաունդս («Վալե Դը Լ Արփա» ՍՊԸ), 2025
© «Բնօրրան» պատմական հուշարձանների պահպանման հայկական ընկերություն», 2025
© ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2025
© ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2025
© «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց–թանգարան, 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

■ ՄԵԿԵՆԱՍԻ ԽՈՍՔ 6

■ ՆԱԽԱԲԱՆ 7

■ ԱՆՈԹԻ, ԿԱՐԱՍԻ ՈՒ ՍԱՓՈՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ 8
Հրաչ Մարտիրոսյան



■ ԿԱՐԱՍԸ ՆԱԽԱՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 11
Նորա Ենգիբարյան, Արսեն Բոբոխյան

■ ԿԱՐԱՍՆԵՐ ՄԵԾԱՄՈՐԻՑ 26
Մատեուշ Իսկրա, Տիգրան Ջաքյան



■ ՈՒՐԱՐՏՈՒ (Համառոտ ակնարկ) 32
Միքայել Բադալյան

■ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԿԱՐԱՍՆԵՐԸ 38
Ռոբերտո Դան



■ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԿԱՐԱՍԸ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ 44
Միքայել Բադալյան

■ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԿԱՐԱՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԻՐԱՌՎԱԾ ՏԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ 51
Միքայել Բադալյան

■ ԷՐԵԲՈՒՆՈՒ ԸՆԴԱՐՁԱԿ ՍՅՈՒՆԱՔԱՐԴ ԴԱՀԼԻՃՈՒՄ 2016–2018 ԹԹ. ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 56
Միքայել Բադալյան



■ ԷՐԵԲՈՒՆԻ ԱՄՐՈՑԻ «ՓՈՔՐ ԴԱՀԼԻՃԻ» ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ ԿԱՐԱՍԱՅԻՆ ՍՐԱՀՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 62
Միքայել Բադալյան, Ստեֆան Դեշամպ, Ֆրանսուա Ֆիշե դը կլեֆոնտեն, Օրելյա Լյուրո

■ ԹԵՅՇԵԲԱԻՆԻ (ԿԱՐՄԻՐ ԲԼՈՒՐ) ԿԱՐԱՍԱՅԻՆ ՍՐԱՀՆԵՐԸ 68
Վահե Սարգսյան

■ ՊՈՒՇԿԻՆԻ ԱՆՎԱՆ ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՄՈՒ ԳՏՆՎՈՂ ԱՄԵՆԱՄԵԾ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԿԱՐԱՍԸ, ՈՐ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է ԷՐԵԲՈՒՆԻՈՒՄ 79
Անաստասիա Յասենովսկայա



■ ԱՐԱՄՈՒՍ ԱՄՐՈՑԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԿԱՐԱՍԱՅԻՆ ՍՐԱՀԸ 83
Վալտեր Կունտներ, Սանդրա Հայնշ, Հայկ Ավետիսյան

■ ԿԱՐՄԻՐ ԲԼՈՒՐԻՑ ԳՏՆՎԱԾ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՐԽԵՈՄԵՏՐԻԿ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 89
Տիլդե դե Կարո, Մոհամմադ Քեշավարզ Դիվկոլաի, Միքայել Բադալյան, Ռոբերտո Դան

■ ԿԱՐԱՍԸ ՀԵՏՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ 94
Արմինե Գաբրիելյան



■ ԿԱՐԱՍԱՅԻՆ ԹԱՂՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀՈՒՄ 98
Արմինե Գաբրիելյան



■ ՆՈՐ ԱՐՄԱՎԻՐ ՀՆԱՎԱՅՐՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԿԱՐԱՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ 104
Սիմոն Հմայակյան

■ ԿԱՐԱՍՆ ԱՆՏԻԿ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ 109
Արմինե Գաբրիելյան

■ ԿԱՐԱՍԻ ՖԵՆՈՄԵՆԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ 113
Ավետիս Գրիգորյան



■ ՆՇԱՆԱԳՐԵՐՈՎ ԿԱՐԱՍՆԵՐ ՄԵՂՐԻԻՑ 122
Արման Նալբանդյան

■ ԿԱՐԱՍԸ 18–ՐԴ ԴԱՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ 129
Սուրեն Հոբոսյան, Անի Սարատիկյան



■ ԿԱՐԱՍԸ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐՈՒՄ, ԱՎԱՆԴԱՊԱՏՈՒՄՆԵՐՈՒՄ, ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ 137
Սուրեն Հոբոսյան, Անի Սարատիկյան

■ ԿԱՐԱՍՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՆԵԳՈՐԾԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ. ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ 142
Ավագ Հարությունյան

■ ՎԵՐՋԱԲԱՆ 147

ՄԵԿԵՆԱՍԻ ԽՈՍՔ

Հազարամյակներ շարունակ մենք ունեցել ենք կարասներ պատրաստելու և դրանց մեջ գինի պահելու գեղեցիկ ու յուրատիպ ավանդույթ, որը, ցավոք, ժամանակի ընթացքում մոռացության է մատնվել: Որպես հայ ընտանիք և որպես գինու մշակույթով հետաքրքրված մարդիկ՝ մեզ համար առանձնահատուկ կարևորություն ուներ այդ ավանդույթին նորից անդրադառնալը՝ ուսումնասիրելու, հասկանալու և հնարավորության դեպքում նաև՝ վերականգնելու նպատակով:

Միտքը, որ կարասագործությունը դարձել է «անցյալ», ոչ թե ներկա, մեզ հանգիստ չէր տալիս: Եվ գիտակցեցինք, որ եթե ուզում ենք, որ կարասը վերադառնա մեր կյանք, պետք է այն նախ ճանաչել:

Մեր մտքերով ու գաղափարներով կիսվեցինք «Բնօրրան» պատմական հուշարձանների պահպանման հայկական հիմնադրամի ղեկավար Հռիփսիմե Հարությունյանի հետ: Մենք միասին սկսեցինք փնտրել ուղիներ, որոնք մեզ կօգնեին հնարավորինս ամբողջական ուսումնասիրելու կարասի ավանդույթը: Այցելեցինք «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց–թանգարան, զրուցեցինք տնօրեն Միքայել Բադալյանի հետ: Նրա գիտելիքն ու անկեղծ հետաքրքրությունը դարձան այն սյուները, որոնց վրա հիմնվեց այս գիրքը: Մեր թիմային աշխատանքը միահյուսվեց մի նպատակի շուրջ՝ ստեղծել մի աշխատություն, որը կլինի կարասի կենսագրությունն ու, միաժամանակ, վերակենդանացման մանիֆեստը:

Ի վերջո, գիրքը համախմբեց հնագետների, պատմաբանների, լեզվաբանների, ազգագրագետների և գինեգործության փորձագետների ավելի քան քսան տարվա ուսումնասիրությունները՝ ներկայացնելով կարասի անցած ուղին նոր քարի դարից մինչև մեր օրերը: Գրքում զետեղված են հնագիտական բացառիկ նյութեր՝ Մեծամորից, Շենգավիթից, Էրեբունուց, և դրանց վերլուծությունները՝ ներառյալ ուրարտական կարասների տարողության չափման համակարգերը, գինու պահեստավորման ձևերը և կիրառությունները:

Մենք դեռ անելիք ունենք՝ վերականգնելու ավանդույթը և դարձնելու այն մեր կյանքի մի մասը: Գիրքը մեր այդ ճանապարհի առաջին հանգրվանն է միայն:

Մենք պատրաստ ենք անցնելու այդ ճանապարհը և կարասը վերադարձնելու ոչ միայն որպես հնագույն հուշ, այլև որպես կենդանի ժառանգություն և մեր ինքնության բաղադրիչ:

Լիլիաննա և Կարեն Մխիթարյանների ընտանիք

ՆԱԽԱԲԱՆ

Կարասն ուրույն տեղ է գրավում հայոց ինքնությունը խորհրդանշող տարրերի խճանկարում: Կարասի օգտագործումը Հայաստանում ունի հազարամյակների շարունակականություն և ժառանգականություն: Հետաքրքրական է, որ կարասին առնչվող տարբեր ընկալումներ զուգորդվում են կյանքի, ծննդյան ու մահվան, բարեկեցության, առատության, գինեգործության հնագույն մշակույթի և այլ երևույթների հետ:

Հարկ է նշել, որ այս աշխատությունը բացառիկ է իր բնույթով: Այն հայկական կարասի վերաբերյալ դեռևս միակ ամփոփ հետազոտությունն է, որի ստեղծմանը մասնակից են դարձել իրենց ոլորտներում մեծ հեղինակություն վայելող հայ և օտարերկրացի գիտնականներ: Առաջին անգամ մեկ աշխատության մեջ գիտահանրամատչելի կերպով մեկտեղվել են հայկական կարասին առնչվող տարբեր ոլորտներ՝ հնագիտություն, պատմություն, ազգագրություն, բանահյուսություն, լեզվաբանություն, գինեգործություն և այլն:

Նման ձևաչափով գրքի ստեղծման նպատակն է՝ առավել ընկալելի կերպով աշխարհին ճանաչելի և հաղորդակից դարձնել հայկական կարասը, որը, անշուշտ, արժանի է իր տեղը զբաղեցնելու մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցանկում:

Նման բովանդակությամբ գրքի ստեղծման գաղափարն ու նախաձեռնությունը «Վալե Դը Լ Արփա» ՍՊԸ–ի տնօրեն Կարեն Մխիթարյանինն է: Առիթից օգտվելով՝ մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում Կարեն Մխիթարյանին, որի առաջարկով և մեկենասությամբ իրականություն դարձավ այս կարևոր աշխատության տպագրությունը:

Արդյունքում սեղանին է դրվել մի ամփոփ գիտահանրամատչելի աշխատություն, որը համակողմանի և բազմաբովանդակ կերպով ներկայացնում է հայոց ինքնության կարևորագույն խորհրդանիշներից մեկի՝ հայկական կարասի ֆենոմենը:

Միքայել Բադալյան, Արսեն Բոբոխյան, Հռիփսիմե Հարությունյան

ԱՆՈԹԻ, ԿԱՐԱՍԻ ՈՒ ՍԱՓՈՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հրաչ Մարտիրոսյան

Հայոց լեզուն ունի հեղուկ պահելու անոթների տեսակների բազում անվանումներ ու դրանց հոմանիշներ: Ըստ ծագման՝ դրանք կարող են դասակարգվել այսպես.

1. բնիկ հայկական բառեր՝ հնդեվրոպական ժառանգություն.
2. փոխառություններ (հիմնականում՝ իրանական).
3. հնչաիմաստային բառեր, որոնք նույնպես, ըստ էության, հիմնականում բնիկ հայկական են:

Այս փոքրիկ հոդվածում կներկայացնեմ մի շարք օրինակներ այս երեք խմբերից:

1. Քննվող իմաստախմբի գլխավոր բառն է՝ ***աման*** ‘աման, անոթ’, որ՝

- հայ մատենագրության մեջ վկայված է 5–րդ դարից,
- ներկա է գործնականում բոլոր բարբառային տարածաշրջաններում
- և ածանցված է *ամ(ան)ամ* ‘լցնել, դատարկել, հոսեցնել’ բնիկ հայկական բայից, որ սերում է հնդեվրոպական **h₂(e)mH-* ‘լցնել, ջրել’ բայից, հմմտ. սանսկրիտ *ámatra-* n. ‘անոթ, թաս’, հունարեն *ἀμάομαι*, *ἀμάω* ‘հանել, հավաքել’, *ἀμνίον* n. ‘patera, զոհաբերական արյան թաս’ և այլն:

Հայերեն *ամանամ* բայի և *աման* գոյականի համատեքստային առնչության համար նկատենք հետևյալ ոսկեդարյան ուշագրավ վկայությունը.

Եւ եթէ մտանիցես յայգի ընկ/գերի քո(յ), կերիցե՛ս խաղող մինչեւ ցյագել անձին քո. բայց յա–ման մի՛ ամանայցես «Եվ եթե մտնես քո ընկերոջ այգին, խաղող կուտես մինչև հագենալդ, բայց ամանդ չլցնե՛ս» (Երկրորդ օրէնք իգ.25):

2. Իրանական ազդեցության շրջանում հայերենը ձեռք է բերել ամանեղենի ու խեցեղենի բազում անվանումներ: Դրանք հիմնականում գործածված են 5–րդ դարից, իսկ մի քանիսը նաև տարածված են բարբառներում:

2.1. Մի խումբ բառեր պարունակում են իրանական **udan-* ‘ջուր’ արմատը՝ միջձայնավորային դիրքում *-d-* > շփական *-δ-* (հյուսիսարևմտյան իրանական) > հայ. *ր* կանոնավոր զարգացումով.

- ***դաշխուրան*** ‘ջրաման, տաշտ’ բառի հնագույն վկայությունը գտնվում է Դեբորայի երգում. *Ջուր խնդրեաց, եւ ետ կաթն դաշխուրանաւ զօրաւորաց* «Ջուր խնդրեց, և [նա] ջուր տվեց զորավորների ամանով» (Դատաւորաց ե.25, որտեղ հայերեն *դաշխուրան* բառը թարգմանում է հունարեն *λακάνη* ‘տաշտ, աման’ բառը): Այն գործածված է նաև «Անկանոն գիրք Հին կտակարանաց»–ում: Փոխառված է պարթևերեն **(u)daxšōδan* < հին իրանական **uda-xšaud-ana-* ‘ջուր լցնելու (աման)’ բառից, որ կազմված է **udan-* ‘ջուր’ և **xšaudana-* ‘լվացում’ բաղադրիչներից.
- ***կահոյր*** ‘կուժ, սափոր’ բառը վկայված է միայն մի անգամ՝ Փաւստոս Բուզանդ 4.ծդ (*կահոյր մի ջուր*). փոխառված է պարթևերեն **kafōδ* < հին իրանական **kafauda–* ‘ջրաման’ բառից, որ կազմված է **kap-* ‘ճանկել, ուտել, խփել’ և **udan-* ‘ջուր’ բաղադրիչներից.
- ***սափոր*** ‘ջրաման, սափոր, անոթ’ բառը հայ մատենագրության մեջ վկայված է 5–րդ դարից և պահպանվել է որոշ բարբառներում: Այն փոխառված է պարթևերեն **sapōδ* < հին իրանական **sapauda-* (հավանաբար՝ արամեերեն **sappoḏ* ձևի միջնորդությամբ) բառից, հմմտ. պարսկերեն *sabūy* ⁄ *sabūd* ‘գավաթ, սափոր’, բակտրերեն *σαβολο* ‘գինու սափոր’ և այլն:

2.2. Հատկապես կարևոր է հայերեն ***կարաս*** ‘գինու և ջրի կավե մեծ աման’ բառը, որ հայ մատենագրության մեջ վկայված է 5–րդ դարից և տարածված է բարբառներում: Դրա ծագումը լիովին պարզ չէ: Այս բառը, ամենայն հավանականությամբ, փոխառված է իրանական չվկայված **karasa-* բառից, հմմտ. սանսկրիտ *kaláśa-* ‘սափոր, ջրաման, թաս’: Ուշագրավ է սրանից ածանցված ***կարասի*** բառը, որ նշանակում է ‘կայք, կահ-կարասի, գույք’: Այս հավաքական իմաստով ունենք նաև *կահ եւ կարասի* հարադրությունը, որի առաջին ***կահ*** ‘կենցաղային առարկաներ, սպասք, գույք, կարասի’ բաղադրիչը փոխառված է միջին իրանական **karhr-* < հին իրանական **karθra-* ‘սպասք, պիտույքներ’ բառից, հմմտ. պարսկերեն *kālā* ‘տնային գույք, կահույք, բարիքներ’ և այլն: Այսպիսի իմաստային ընդլայնում տեսնում ենք նաև հետևյալ բառերում.

- հայերեն *անօթ* ‘անոթ, աման’ > ‘սպասք, կահ-կարասի, ռազմական գործիք’.
- լատիներեն *vās* ‘անոթ, սպասք, ջրի կամ սննդի աման’ > *vāsārium* ‘փաստաթղթերի պահատեղ, արխիվ’:

Վերջապես, ունենք նաև հայերեն ***կուժ*** ‘ջրաման, սափոր, կուժ’ բառը, որ նույնպես հայ մատենագրության մեջ վկայված է 5–րդ դարից և տարածված է բարբառներում: Այն նույնպես իրա–

նական փոխառություն է, հմմտ. միջին պարսկերեն *kūz* [*qwz*] ‘կուժ, սափոր’, նոր պարսկերեն *kūza* ‘կավե երկարավիզ ջրաման’ և այլն:

3. Հնչաիմաստային (sound-symbolic) բառերը հաճախ նշանակում են փոքր ու կլորիկ առարկաներ, ինչպես, ասենք, ‘բողբոջ’, ‘պղպջակ’, ‘գնդակ’, ‘բիբ’, ‘ամորձի’, ‘ուռուցք’, ‘անվակունդ’ և այլն: Դրանք հաճախ նաև բնաձայնական են և կարող են նշանակել ‘կլկլալ, կարկաչել’ և այլն: Այսպիսի բառերը կարող են նման կերպարանք ունենալ ցեղակից և ոչ ցեղակից լեզուներում: Դրանցից հաճախ ածանցվում են նաև կժերի, սափորների ու այլ ջրամանների անվանումներ: Ահա որոշ նմուշներ հայերենից.

***կուլ–**. *կլիկ* ‘մի տեսակ կլորիկ հաց’, *կլուզ* ‘մանկիկ’, *կուլուլակ* ‘կլորիկ առարկա’, *կուլուր* ‘մի տեսակ խողովակաձև հաց’, *կուկլազ* ‘ծաղկաբողբոջ’, *կուկլիկ* ‘տիկնիկ’, **կուլ-* ‘առնանդամ’ և այլն: Այս հնչաիմաստային արմատից ունենք *կուլա* ‘ջրի կավե փոքրիկ երկարավիզ կուժ’ բառը Արարատյան, Թիֆլիսի, Արցախի, Շամախիի և Խոյի բարբառներում, ինչպես նաև Թավրիզ *կուլիկ* ‘նույնը’ և Արարատյան *կուկկուլ(ակ)* ‘ջրի կուժ’:

***պուլ–**. *պուլի* ‘փոքրիկ, կլորիկ ու թմբլիկ’, *պուլպուլ-իկ*, *պլպլ-ուկ* ‘բողբոջ’, *պլպլկել* ‘բողբոջել, ծաղկել’, *պլլիկ* ‘իգական սեռական անդամ’, *պլոր* ‘ամորձիք’, *պպլուկ* ‘ծլիկ’, *պուպուլ* ‘մանկան առնանդամ’ / *բուլբուլ* ‘բիբ, գնդաձև առարկա’, *պըլըլլեկ* ‘կարկուտի հատիկ’ և այլն: Այս հնչաիմաստային արմատից ունենք **պուլ-իկ* ‘բռնակով կավե ջրաման’ Արարատյան, Կարին / Շիրակի, Արցախի, Թիֆլիսի, Վանի և այլ բարբառներում, նաև Արարատյան *պուլպուլ(ա)* ‘կավե սափոր ջրի համար’, Բալու *բղ-իկ* ‘սափոր’ և Սեբաստիա *բըլբըլ* ‘ջրի փոքր սափոր’:

Այս երկու արմատներն ունեն մի շարք ընդհանրություններ.

- երկուսն էլ հաճախ կրկնավոր են.
- դրանք նաև ցուցաբերում են բնաձայնական իմաստներ՝ *կըլ-կըլ-* և *պըլ-պըլ-* ‘կլկլալ, կարկաչել, կլկլացնելով լցնել կամ խմել ջուրը’.
- դրանք բնութագրական են բարբառային խոսքի համար և հիմնականում չունեն մատենագրական վկայություններ.
- դրանք հնդեվրոպական լեզուներում ունեն տպավորիչ համեմատելի ձևեր և տեսականորեն կարող են լինել հին ժառանգություն, օրինակ՝ (1) սանսկրիտ *gola-* ‘գունդ’, ‘գնդաձև սափոր’, *gula-* ‘glans penis (առնանդամի գլխիկը)’, խոտանասակերեն *gūla-* ‘գունդ’, գերմաներեն *Kugel* ‘գնդակ’, խեթերեն *kulli-* ‘մեղրի կամ յուղի աման’ և այլն. (2) սանսկրիտ *buli-* ‘իգական սեռանդամ’, մարաթի *bulī* ‘առնանդամ’, լատիներեն *bulla* ‘պղպջակ, ցցվածք, ելունդ, պալար’, լիտվերեն *bulìs* ‘հետույք’, *burbulas* ‘ջրի պղպջակ’, *burbulas* ‘բողբոջ, գնդակ’, *bùmbulis* ‘բիբ’ և այլն:

ԿԱՐԱՍԸ ՆԱԽԱՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Նորա Ենգիբարյան, Արսեն Բոբոխյան

Խեցեգործական հնագույն արտադրանքի ամենախոշոր անոթները կարասներն են, որոնք ծառայել են որպես պահեստարաններ՝ հացահատիկ, ալյուր, ինչպես նաև հեղուկ պահելու համար: Կարասների տեսքը և պատրաստման ձևը պայմանավորված են եղել տվյալ ժամանակաշրջանի խեցեգործության ավանդույթներով: Հաճախ կարասներն իրենց ձևով կրկնել են համապատասխան շրջափուլի այլ փոքրածավալ խեցանոթների: Ջուտ կարասների պատրաստումը սկսվել է միջին երկաթի դարում, երբ Հայկական լեռնաշխարհում ծաղկում էր պետական առաջին հզոր կազմավորումը՝ Վանի թագավորությունը (Ուրարտու, Արարատի թագավորություն): Մինչ այդ կարելի է խոսել կարասատիպ անոթների և կարասի նախապատմության մասին:

Նոր քարի և պղնձաքարի դարաշրջաններ

Արտադրող տնտեսության ի հայտ գալով՝ նոր քարի դարում (Ք.ա. 9–7–րդ հազարամյակներ) առաջացան վաղ երկրագործական հասարակությունները, որոնք զարգացման բավականին բարձր մակարդակի հասան պղնձի դարում (Ք.ա. 6–4–րդ հազարամյակի կես): Վաղ երկրագործական հասարակություններում առաջին անգամ ի հայտ եկան կայուն նստակեցությամբ բնորոշվող բնակավայրեր, ճարտարապետություն, արհեստներ: Անցումը արտադրող տնտեսության տեղի ունեցավ «Բարեբեր կիսալուսնի», իսկ ըստ վերջին ուսումնասիրությունների՝ այսպես կոչված, «Ոսկե եռանկյունու» շրջանում (ներկայիս սիրիա–թուրքական սահման), որի կարևորագույն հատվածն էին կազմում Հայկական լեռնաշխարհի արևմտյան և հարավային ենթագոտիները (Ծոփք, Աղձնիք): Վերջին տարիներին կատարված հայտնագործությունները ցույց են տալիս, որ արդեն մինչխեցեգործական նոր քարի դարում և հատկապես Ք.ա. 9–8–րդ հազարամյակներում Հայկական լեռնաշխարհի արևմտյան և հարավային շրջաններում ձևավորվում է մի կենտրոն, որին բնորոշ են կոթողային մտածելակերպ, բարդ պաշտամունքային և նշանային համակարգ (Գյորեքլիթեփե, Նևալիչորի, Չայոնյութեփեսի): Ք.ա. 6–5–րդ հազարամյակներում լեռնաշխարհի հյուսիսային և հարավային Կովկասի կենտրոնական մասերում (Շուլավերիսգորա, Շոմութեփե, Առատաշեն) տարածված էր շուլավերի–շոմութեփեյան մշակույթը, որ ժամանակակից է սիրիա–միջագետքյան հասունյան մշակույթի ուշ փուլին և հալաֆյան մշակույթին: Ք.ա. 6–րդ հազարա–

մյակի երկրորդ և 5–րդ հազարամյակի առաջին կեսին Հայկական լեռնաշխարհի հարավ–արևմուտքն ընդգրկվեց հյուսիսմիջագետքյան հալաֆյան մշակույթի ոլորտում, իսկ Ք.ա. 5–րդ հազարամյակի երկրորդ կեսին ամբողջ լեռնաշխարհում տարածվում է հալաֆյան և հյուսիսուբեյդյան գունազարդ խեցեղենի խառնածին պղնձեդարյան համալիրը, որի բնակավայրերը հայտնի են Վանի (Թիլկիթեփե), Տիգրանակերտի (Գիրիկիհաջիան), Խարբերդի (Թյուլինթեփե), Արարատյան դաշտի (Թեղուտ), Սյունիքի (Գոդեձոր) և Ուրմիայի (Յանիկթեփե) շրջանում:

Հայկական լեռնաշխարհի նորքարեդարյան հուշարձաններում (Ակնաշեն, Առատաշեն ևն) հայտնաբերված խեցանոթների բեկորների մեջ ծավալուն կարասատիպ անոթները բացակայում են: Պղնձաքարի շրջափուլի հուշարձաններում (Ակնաշեն, Առատաշեն, Թեղուտ, Արենի ևն) ի հայտ են գալիս մեծ անոթներ, որոնք ունեցել են տնտեսական նշանակություն: Այս դարաշրջանում խեցեղենը պատրաստվել է հարդի, խոշորահատիկ և մանր ավազի խառնուրդով կավից: Խոշորահատիկ ավազախառը կավից մեծ անոթները պատրաստվել են կավի ժապավենաձև շերտերը իրար վրա ամրացնելու եղանակով: Խեցու կտրվածքում հաճախ երևում է ժապավենաձև շերտերը իրար միացնելու «կարը», երբեմն նաև մատնահետքերի դրոշմը: Այս խառնուրդից պատրաստված անոթների մակերեսը, որի վրա երևում են ավազահատիկները, հարթեցվել է կավի թաց վիճակում: Թեղուտից հայտնաբերված ավազախառը կավից պատրաստված ամբողջացված կարասի (բարձրությունը՝ 70 սմ) մակերեսը բաց դարչնագույն է, ներսը՝ սև, հատակը՝ կլոր, իրանը՝ ոչ կանոնավոր ուռուցիկ, վիզը՝ գլանաձև, շուրթը՝ կլորացող: Հատակի կլորությունը հուշում է, որ կարասը ուղղահայաց չի կանգնեցվել, այլ ամրացվել է կացարանի հատակի մեջ կամ դրվել է ինչ–որ հարմարանքի վրա:

Հարդախառն խեցուց պատրաստված ամբողջական կարաս հայտնի չէ: Այդ խեցուց հայտնաբերված դեղին, բաց կարմրավուն, բաց դեղնավուն երանգի հաստախեցի բեկորներից երևում է, որ կարասները եղել են լայնաբերան, գլանաձև վզով, ուղիղ կտրված կամ կլորացող եզր ունեցող դուրս թեքված շուրթով: Անոթի մակերեսը հարդարելու համար այն պատել են քսուքով և հարթեցրել քարե կոկիչով: Բեկորներից դատելով՝ հարդախառն կավից պատրաստված կարասները ունեցել են 80–85 սմ բարձրություն: Կարասների հաստ շուրթերը հարմար են անոթները տեղափոխելու համար:

Բրոնզի դարաշրջան

Ք.ա. 4–րդ հազարամյակի կեսերից ի վեր Հայկական լեռնաշխարհը թևակոխում է զարգացման որակապես նոր՝ վաղ բրոնզի (Ք.ա. 35–24–րդ դդ.) փուլը, երբ տարածվում է կուր–արաքսյան մշակույթը: Այս դարաշրջանը համապատասխանում է Միջագետքի պատմության ուշ ուրուկյան, ջեմդեթ–նասրյան և վաղ դինաստիական փուլերին: Սակայն եթե կուր–արաքսյան մշակույթի կազմավորման սկզբնական փուլում այն բնորոշ էր լեռնաշխարհի կենտրոնական–հյուսիսարևելյան շրջաններին, ապա արևմտյան և հարավային շրջաններում ուժեղ էին հյուսիսսիրիա–միջագետքյան ազդեցությունները: Մասնավորապես Ք.ա. 4–րդ հազարամյակի վերջերին պատմական Հայաստանի Ծոփք և Փոքր Հայք ենթաշրջանների հուշարձաններում (Նորշունթեփե, Արսլանթեփե) տեսանելի է Ուրուկ IV (կամ շումերական) մշակույթի ազդեցությունը: Ավելի քան մեկ հազարամյակ գոյատևած կուր–արաքսյան մշակութային համակարգը, կենտրոն ունենալով Արարատյան դաշտավայրը, Ք.ա. 3–րդ հազարամյակի առաջին կեսին գրավել էր «Բարեբեր կիսալուսնի» գրեթե ամբողջ գոտին: Այս համակարգին բնորոշ էր նստակյաց տնտեսաձևը՝ զարգացած արորային երկրագործությամբ, անասնապահությամբ և արհեստներով: Մկնդեղային բրոնզի հիման վրա զարգացում ապրեց մետաղագործությունը: Սկսեցին օգտագործվել անիվային փոխադրամիջոցը, դանդաղ պտտվող դուրգը:



Նկ. 1. Կարասատիպ անոթ, Կառնուտ, բարձրությունը՝ 61 սմ, տրամագիծը՝ 50 սմ, Ք. ա. 29–26–րդ դդ., լուսանկարը՝ Վ. Հակոբյանի, © ՀՊԹ 2859–118:

Վաղ բրոնզի շրջափուլում տնտեսության մեջ լայնորեն կիրառվող կարասները առկա են երկու տարբերակով: Մի տարբերակում փոքր, նեղ հատակով, դեպի վեր լայնացող և վերին մասում կլորացող իրանով, գլանաձև կամ գլանաձև և վերին մասում լայնացող վզով, դուրս ծալված շուրթով անոթներն են (բարձրությունը՝ 82–86,5 սմ), որոնց մակերեսը և աստառը նույն գույնի են՝ բաց շագանակագույն կամ դեղնակարմրավուն *(Նկար 1, 3)*: Որոշ օրինակներ վզի և իրանի միացման կամ իրանի վերին մասում ունեն կիսագնդաձև ունկեր: Ապարանի վաղ բրոնզեդարյան բնակա–



Նկ. 2. Կարասատիպ անոթ, Շենգավիթ,
բարձրությունը՝ 75 սմ, տրամագիծը՝ 71 սմ,
Ք. ա. 29–26–րդ դդ.,
լուսանկարը՝ Վ. Հակոբյանի, © ՀՊԹ 2970:



Նկ. 3. Կարասատիպ անոթ, Շենգավիթ,
բարձրությունը՝ 43 սմ, տրամագիծը՝ 46 սմ,
Ք. ա. 29–26–րդ դդ.,
լուսանկարը՝ Վ. Հակոբյանի, © ՀՊԹ 2389–9:

վայրի հետախուզական փոսորակում հայտնաբերված կարասների այս տարբերակի անոթների մեջ եղել են ցորենի և գարու տարբեր տեսակների մնացորդներ: Կարասների մոտ բացվել են նաև բազալտից երկու աղորիքներ:

Վաղ բրոնզի շրջափուլի կարասների երկրորդ տարբերակը ներկայացված է նեղ հատակով, ուռուցիկ իրանով, լայն գլանաձև վզով, կլորացող եզրով շուրթ ունեցող անոթներով *(Նկար 2)*: Եռամաս այս անոթների կիսագնդաձև կանթը կամ կանթերը ամրացված են իրանի և վզի միացման հատվածում (Կառնուտ, Ապարան): Այս տարբերակի որոշ կարասներ անզարդ են, մի մասը՝ պատկերագիր: Իրանի վերին մասում ունեն նախշազարդ ժապավենների մեջ ներառված երկրաչափական պատկերներից (շեղանկյուններ, զիգզագ գծեր, կիսապարույրներ) կազմված գոտի: Կան նաև տեսարանային հորինվածքներով կարասներ, որոնց պատկերները փորագրված են իրանի կենտրոնում: Պատկերված են ալիքաձև և ուղիղ գծերով լցված ժապավեններ, բազմագալար պարույրներ, երկար կտուցով, եռանկյուն իրանով թռչուններ (արագիլ) կամ կենդանիներ (Շենգավիթ, Կառնուտ ևն): Անոթի վրա պատկերված խորհրդանշանները որպես հմայիլ նաև պահպանել են կարասի պարունակությունը:

Ք.ա. 3–րդ հազարամյակի ավարտը Առաջավոր Ասիայում բնակավայրերի և քաղաքային կյանքի անկման շրջան էր՝ կապված կլիմայական փոփոխությունների, էթնիկ տեղաշարժերի, մշակութային մեկուսացվածության հետ: Այս գործընթացից զերծ չմնաց նաև Հայկական լեռնաշխարհը: Նոր իրողությունները լիովին փոխեցին վաղ բրոնզի պատմամշակութային և ժողովրդագրական միջավայրը: Տեղաբնիկ և եկվոր ցեղերի սինթեզից ձևավորվեցին միջին բրոնզի (Ք.ա. 24–16–րդ դդ.) մշակույթները, որոնց բնորոշ էր լիովին այլ տնտեսաձև՝ անասնապահության գերակայությամբ: Սրա հետ մեկտեղ նկատվում են առաջադիմական մի շարք նորամուծություններ, որոնց թվում հատկապես հիշատակելի են քաղաք–պետությունների ի հայտ գալը, անագաբրոնզի, թանկարժեք մետաղների և ոսկերչության, արագ պտտվող դուրգի լայն կիրառությունը, ինչպես նաև ձիաբուծության զարգացումը: Վաղ և միջին բրոնզի սահմանին Հայկական լեռնաշխարհում տարածվում են կուրգանային մշակույթները, ապա նկատվում է ակնհայտ մշակութային բազմազանություն: Այսպես, հյուսիսային շրջաններում ձևավորվում են գունազարդ խեցեղենի չորս մշակութային խմբեր՝ թռեղք–վանաձորյան, սևան–արցախյան (ուզերլիկյան), կարմիրբերդյան, կարմիրվանքյան: Ծոփք–Փոքր Հայք գոտում առաջանում է տեղային մշակութային մի օջախ, որը ցուցաբերում է մասնակի սիրիա–միջագետքյան և փոքրասիական առնչություններ: Մինչդեռ Վանից հարավ ևս ի հայտ է գալիս մշակութային մի ենթագոտի, որին բնորոշ են հյուսիսային Սիրիայի և Միջագետքի, մասամբ էլ Վանի և Մուշի շրջանների հետ կապերը:

Միջին բրոնզի շրջանում ամենախոշոր խեցանոթները, որ հնագիտական գրականության մեջ կոչվում են հիդրիա, կարելի է նաև կարաս անվանել: Հիդրիա/կարասները հարթ և ոչ լայն հատակով, աստիճանաբար դեպի վեր լայնացող կամ ուռուցիկ իրանով, կարճ գլանաձև, վերին մասում լայնացող կամ դեպի վեր նեղացող վզով գլանաձև, դուրս ծալված կլորացող եզր ունեցող շուրթով անոթներ են: Կարասների գերակշիռ մասը սև է, իրանի վերին հատվածը հարդարված է կետազարդ ժապավենների և դրանցով կազմված գոտիներում եղևնակերպ, խաչի, կեռխաչի, զիգզագ գծերով, իրար մեջ ներգծված եռանկյուններով և երկրաչափական տարբեր պատկերներով (Լոռի բերդ, Ներքին Նավեր, Նոր Օշական, Քարաշամբ ևն): Զարդահարդարումը կատարվել է սանրատամ դաջով կամ պտտվող դրոշմիչով: Հայտնի են այս կարասների եզակի երկկանթ օրինակներ (Լոռի բերդ):

Մեծ խումբ են կազմում կարմիր հիմնագույնով կամ նրա երանգներով (կարմրավուն, վարդագույն, աղյուսագույն, դարչնագույն) միագույն (Արտաշավան, Լոռի բերդ) կամ գունազարդ կա–

րասները (Սիսիան, Արծվաբերդ, Արուճ, Ներքին Գետաշեն ևն)։ Միագույն կարասների մեջ եզակի օրինակներով են ներկայացված վերադիր պատկերով անոթները։ Այդ օրինակներից են վերադիր սողացող օձերով կարասները (Սոթք 10, Հայրավանք) *(Նկար 4, 5)*։ Կարասների գունազարդումն արվել է սև ներկով *(Նկար 6)*։ Պատկերվել են իրար մեջ ներգծված եռանկյուններ, սակրաձև կամ թիթեռաձև նախշեր, կեռխաչեր, երկրաչափական պատկերներ (քառակուսի, ուղղանկյուն, շեղանկյուն, եռանկյուն)՝ լցված ուղիղ և ալիքաձև գծերով։ Երկրաչափական ձևերը ուղեկցվում են կենդանիների և թռչունների պատկերներով։ Կենդանիներից առկա են այծ, եղջերու, գայլ կամ շուն, ձի, օձ, թռչուններից՝ հիմնականում ջրլողներ։ Այս կարասները գլխավորապես հայտնաբերվել են դամբարաններից։ Կարասների պատկերազարդումը, դարաշրջանի մտածողության համաձայն, կազմված է երկնային, երկրային և ստորերկրայքի խորհրդանշաններից։



Նկ. 4. Կարասատիպ անոթ, Սոթք 10, բարձրությունը՝ 54 սմ, տրամագիծը՝ 41 սմ, Ք. ա. 20–19–րդ դդ., լուսանկարը՝ Վ. Հակոբյանի, © Էրեբունի թանգարան 207–5։



Նկ. 5. Կարասատիպ անոթ, Հայրավանք, բարձրությունը՝ 40,5 սմ, տրամագիծը՝ 31,8 սմ, Ք. ա. 20–19–րդ դդ., լուսանկարը՝ Վ. Հակոբյանի, © ՀՊԹ 2634–36։



Նկ. 6. Կարասատիպ անոթ, Արծվաբերդ (Տավուշ), բարձրությունը՝ 52 սմ, տրամագիծը՝ 37 սմ, Ք. ա. 19–18–րդ դդ., լուսանկարը՝ Վ. Հակոբյանի, © ՀՊԹ 2311–1։

Ուշ բրոնզի դարում (Ք.ա. 16–12–րդ դդ.) հայկական լեռնաշխարհում նկատվում է աննախադեպ տնտեսական աճ: Դաշտավայրային գոտիներում վերականգնվում է երկրագործական կենսակերպը, արհեստագործական զանգվածային արտադրության առկայության հանգամանքը խոսում է շուկայական տնտեսության ձևավորման մասին: Լայնորեն կիրառվում է (մարտա)կառքը: Առաջանում են խոշոր բնակավայրեր, որոնց շուրջը կենտրոնանում է մեծաքանակ բնակչություն: Լեռնաշխարհի արևմտյան և հարավային գոտիներում առկա են խուռի–խեթական և տեղական մշակութային տարրերից բաղկացած խառը մշակույթներ, մինչդեռ կենտրոնական–հյուսիսարևելյան գոտում իշխում է լճաշեն–մեծամորյան մշակույթը:

Ուշ բրոնզի շրջափուլում մթերքի պահեստավորման և վերամշակման համար օգտագործվող կարասները հանդես են գալիս երկու տարբերակով: Դրանցից առաջինը փոքր հատակով, ձգված կամ ուռուցիկ իրանով, կլորացող ուսերով, կարճ վզով, դուրս թեքված կլորացող շուրթով անոթներն են: Անոթների պատերը շատ հաստ չեն, ունեն սև փայլեցված մակերևույթ: Իրանի վերին հատվածը զարդարված է ակոսներով, ալիքագծով, փայլաներկով արված երկրաչափական պատկերներով: Կարասները հայտնաբերվել են բնակատեղիներից և դամբարաններից (Գեղարոտ, Ծաղկահովիտ, Օշական, Քեթի ևն): Լավագույն օրինակը Գեղարոտի սրբարանից հայտնաբերված նմուշն է *(Նկար 7)*:



Նկ. 7. Կարաս, Գեղարոտ, բարձրությունը՝ 83 սմ, տրամագիծը՝ 97 սմ, Ք. ա. 15–14–րդ դդ., լուսանկարը՝ Վ. Հակոբյանի, © Երևանի պատմության թանգարան, 17805–109:

Ուշ բրոնզեդարյան կարասների մյուս տարբերակը նեղ հատակով, դեպի վեր լայնացող, ուսի մասում թեթևակի կլորացող իրանով, դուրս թեքված շուրթով լայնաբերան անոթներն են (Շիրակավան, Արթիկ ևն): Դրանք ունեն գորշ կամ դեղնագորշավուն գրեթե անմշակ մակերես: Անոթների մի մասի հատակի և իրանի միացման մասով անցնում է թեք գծազարդ, մի մասը ունի ակոսազարդ շուրթ: Կարասների իրանի վերին մասը հարդարված է ակոսագոտիներով, ալիքագծով, հատիկանախշով, հավելադիր ելունդագոտիներով, պարանանախշով: Լայնաբերան այս կարասները հավանաբար նախատեսված են եղել հատիկեղեն պահելու համար:

Վաղ երկաթի դարաշրջան

Վաղ երկաթի դարում (Ք.ա. 12–9–րդ դդ.) հայկական լեռնաշխարհում նկատվում են մշակութային և քաղաքական սերտաճման գործընթացներ: Ինչպես վաղ բրոնզում, այժմ ևս լեռնաշխարհի բոլոր ենթագոտիները, ունենալով զարգացման ուրույն տարրեր, ունեն աշխույժ փոխառնչություններ և կազմում են մեկ միասնական մշակութային աշխարհ՝ արտահայտված նախ և առաջ նույնատիպ մոխրագույն–սև փայլեցված խեցեղենով և նմանատիպ պատմամշակութային զարգացումներով, որոնց ազդակները գալիս էին լճաշեն–մեծամորյան մշակույթի տարածույթից: Բնակավայրերի քանակի աննախադեպ աճ է տեղի ունենում: Հասարակությունը ռազմականացվում է:



Նկ. 8. Կարաս, Դվին, բարձրությունը՝ 90 սմ, տրամագիծը՝ 80 սմ, Ք. ա. 10–9–րդ դդ., լուսանկարը՝ Վ. Հակոբյանի, © ՀՊԹ 2121–276:

Վաղ երկաթի դարում ի հայտ են գալիս նոր ոճի անոթներ, որոնք հիմք են դառնում ուրարտական կարասների համար: Նմանատիպ կարասների կարևոր խումբը ներկայացված է Դվինի սրբարաններում *(Նկար 8–10)*: Դրանք 0,7–1,0 մ բարձրությամբ, սև կամ մոխրագույն մակերևույթով, նեղ հատակով, ուռուցիկ իրանով անոթներ են, որոնց դուրս ծալված, կլորացող եզրով շուրթը կազմում է իրանի շարունակությունը: Ծիսական նպատակներով պատրաստված այս կարասները պատկերազարդ են: Բոլոր նմուշները բոլորված են հորիզոնական 3–5 գոտիներով: Հաջորդական այս շարքերում, որտեղ վերին գոտիների մեջ պատկերած կենդանինե-



Նկ. 9. Կարաս, Դվին, բարձրությունը՝ 85 սմ, տրամագիծը՝ 90 սմ, Ք. ա. 10–9–րդ դդ., լուսանկարը՝ Վ. Հակոբյանի, © ՀՊԹ 2121–275:



Նկ. 10. Կարաս, Դվին, բարձրությունը՝ 85, տրամագիծը՝ 76 սմ, Ք. ա. 10–9–րդ դդ., լուսանկարը՝ Վ. Հակոբյանի, © ՀՊԹ 2121–277:

րին ուղեկցում են լուսատուները, վերադիր եղանակով պատկերված են այծեր, եղջերուներ, շուն. մեկ օրինակի վրա ամրացված է ցուլերի ծեփածո երեք գլուխ: Բոլոր կարասների վրա առկա են երկու և ավելի օձերի վերադիր գալարվող պատկերներ: Կարասների մեջ հայտնաբերվել է հացահատիկ, իսկ շրջակայքում՝ աղորիքներ: Ծիսական այս խեցանոթների վրա պատկերված խորհրդանշանները և կենդանիները առնչվում են երկնային և երկրային ջրերին, անձրևին, հողին և պետք է ապահովեին բերրիություն ու առատ բերք: Փոքր կարաս կարելի է համարել սրբարանների տարածքից հայտնաբերված նեղ հատակով, հատակից շեշտակի լայնացող և վերին մասում գնդաձև իրանով, դուրս թեքված շուրթով սև գույնի անոթը (բարձրությունը՝ 46 սմ): Այն ունի ելուստ–կանթեր, որոնցից մեկը սկավառակաձև է: Ելունդավոր բաժանարարներով գոտիների բաժանված իրանի վրա պատկերված են ուռուցիկ թեք գծեր և օձ խորհրդանշող ալիքաձև գիծ:

Վաղ երկաթի շրջափուլում հանդես է գալիս կարասների նոր՝ երկկանթ տարբերակը (Արթիկ, Շիրակավան ևն): Կարաս կարելի է անվանել այդ անոթների խոշոր օրինակները: Դրանք սև կամ մոխրագույն մակերեսով, ոչ լայն հատակ, ձգված կամ գնդաձև իրան, կարճ վիզ, դուրս թեքված շուրթ, իրանի լայն մասում երկու աղեղնաձև կանթ ունեցող անոթներ են: Հարդարված են ալիքագծով և ակոսագծով:

Վաղ երկաթի շրջափուլում շարունակում են գոյատևել ուշ բրոնզի դարին բնորոշ լայնաբերան կարասները, որոնց ձևի և հարդարման մեջ առանձնակի փոփոխություններ չեն նկատվում:

Կարասը նախաուրարտական Հայաստանի հասարակական զարգացումների համատեքստում

Կարաս երևույթի մեջ ուղղակիորեն արտացոլվում են Հայկական լեռնաշխարհի հասարակական գործընթացները: Արդեն Ք.ա. 4–րդ հազարամյակի վերջերից սկսած՝ կարասային տիպի անոթները եղել են թաղման միջոցներ (Արտաշատ, Նորշունթեփե, Քորուջութեփե), որոնցում արտացոլվել է կարաս երևույթի ծիսապաշտամունքային կողը: Սակայն կարասը նախ և առաջ հացահատիկի և խմիչքի, մասնավորապես գինու պահեստարան է եղել. նյութեր, որոնց արտադրության կազմակերպումն ուղղակիորեն կապված է եղել տվյալ հասարակության բարդվածության մակարդակի հետ: Կարասները տեղադրված են եղել որոշակի տնտեսական միավորների պահեստարաններում, որոնք աստիճանաբար վերածվել են վարչատնտեսական/պալատական համալիրների:

Հայկական լեռնաշխարհում երկրագործական ապրանքների պահեստավորման մասին առաջին տվյալները վերաբերում են վաղերկրագործական հասարակություններին: Որոշակի բարդվածության մասին են խոսում հատկապես լեռնաշխարհի հարավարևմտյան շրջանների բնակավայրերից հայտնի տվյալները: Այսպես, վերինեփրատյան ենթաշրջանում, Արսլանթեփեի տիպի բնակավայրերում փաստագրված է երկրագործական ապրանքների (ցորեն, գարի, գինի) բաշխման բավականին բարդ համակարգ՝ սկսած Ք.ա. 3–րդ հազարամյակի սկզբից: Ք.ա. 3–րդ հազարամյակի վերջում Խարբերդի հովտում գտնվող Նորշունթեփե բնակավայրի պալատական համալիրն ունեցել է տնտեսական խոշոր հատված, որտեղ հատուկ կարասներում պահվել են հարակից շրջաններից մթերված երկրագործական բարիքները: Այս պալատական համալիրն իր չափերով ավելի մեծ է, քան ժամանակակից փոքրասիական կառույցները, իսկ ամրացված տարածքը տեղական իշխանավորի համար զբաղեցնում է 100/100 մ մակերես, որ հասնում է Տրոյա II–ի համապատասխան շինության չափերին: Տարածաշրջանն անշուշտ կառավարվում էր այդ պալատի կողմից: Ոսկեղենիկ Խարբերդի հովտում տարածվող այս գոտին խեթական դարաշրջանում հայտնի էր Իշուվա անվամբ և շարունակում էր կարևոր երկրագործական կենտրոն

լինել իր պալատական համալիրներով: Այս տեսանկյունից ուշագրավ է նաև վերին տիգրիսյան Քենանթեփե բնակավայրը (Աղճնիք), որի՝ Ք.ա. 2–րդ հազարամյակով թվագրվող միջինբրոնզե–դարյան շերտում հայտնաբերվել է արհեստանոց–գինու շտեմարան: Պահեստարանների վերա–բերյալ ավելի մանրամասն տվյալներ են հայտնի՝ սկսած ուրարտական շրջանից. Մանազկերտ–Բոստանկայայի կամ Կարմիր բլուրի տիպի հուշարձաններում հզոր պահեստային համալիրները վկայում են բարդ տնտեսական հարաբերությունների և կենտրոնացված կառավարում ունեցող հասարակության գոյության մասին: Սակայն այս ոճի հասարակության արմատները հասնում են նախաուրարտական Հայաստան:

Կարասներում պահվող ցորենի, խաղողի կամ գինու պատրաստումը բնականաբար պա–հանջում էր հասարակության կազմակերպվածության որոշակի մակարդակ: Մինչպետա–կանության շրջանում ցանքատարածքների, այգիների մշակման և ոռոգման համակարգեր անցկացնելու հիմնական կազմակերպիչը պիտի լիներ համայնքը: Պետական կառույցների ի հայտ գալով (դրանք լեռնաշխարհում տեսանելի են առնվազն միջին բրոնզի դարից, իսկ ուշ բրոնզի դարից արդեն առկա են լուրջ պետական կազմավորումներ, և կարելի է խոսել արքա–յական ու տաճարային տնտեսությունների առկայության մասին, որոնք իրենց իշխանության ուժով շահագործում էին համայնական աշխատանքը)՝ կարող էր նաև օգտագործվել ստրկա–կան աշխատանքը՝ ընդ որում, ստրուկների ձեռքբերման հիմնական աղբյուր ունենալով պա–տերազմները:

Եթե ցորենի արտադրությունը համայնքին բնորոշ երևույթ էր, ապա գինու արտադրությունը նախ և առաջ վերաբերում էր վերնախավին, և հենց իշխանական շրջանակներն էին առաջին հերթին մտահոգված այգիներ հիմնելու հարցով: Սա հստակ երևում է ուրարտական տեքստերից, բայց տեսանելի է նաև նախաուրարտական Հայաստանում:

Ցորենի և գինու արտադրությունը հին Հայաստանում սրբագործված էր. այն հաճախ կազ–մակերպվում էր տաճարներում: Տաճարային տնտեսության գոյությունը ենթադրվում է արդեն նախաուրարտական Հայաստանում: Հավանական է, որ խաղողագործական շրջաններում տա–ճար–սրբարաններն ունեցել են սեփական ցանքատարածքները և այգիները (հմմտ. Գեղարո–տի ուշ բրոնզեդարյան, Մեծամորի, Դվինի, Ագարակի, Սարիթեփեի վաղ երկաթեդարյան սրբա–րանները՝ գինեգործության մասին վկայող տվյալներով): Մոտ 360 լիտր տարողությամբ կարաս է հայտնաբերվել Գեղարոտի սրբավայրում, որի ձևի և զարդաբանվածքի հիման վրա կարելի է ենթադրել, որ դրանում հեղուկ՝ հավանաբար գինի է պահվել *(Նկար 7)*: Դվինի վաղ երկաթեդա–րյան III սրբարանի հորերից մեկում հայտնաբերվել են խաղողի վազի այրված մնացուկներ: Գի–նու երկու կարաս և խաղողի ածխացած ողկույզներ են հայտնաբերվել Սարիթեփե բնակավայ–

րի (Գարդման) սրբարանում: Ակնհայտ է, որ Ուրարտական թագավորության շրջանում նկատվող տաճարային տնտեսության հստակ կապը ցորենի և խաղողի արտադրության հետ արմատնե–րով հասնում է ավելի վաղ ժամանակներ:

Ոռոգման համապատասխան կառույցներն ինչպես նախաուրարտական (Արագած, Գեղա–մա լեռներ), այնպես էլ ուրարտական և հետուրարտական Հայաստանում պիտի ծառայեին ոչ միայն պետական տնտեսությանը, այլ նաև ազատ համայնականներին: Բնական է, որ ազատ համայնականները, որոնք պիտի կազմեին բնակչության հիմնական հատվածը, ունեին սեփա–կան ցանքատարածքներ, այգիներ, որոնց համար համապատասխան հարկեր էին վճարվում պետական կառույցներին:

Կարասներն ակնհայտորեն օգտագործվում էին նաև առևտրում: Առկա տվյալների վերլու–ծությունը ցույց է տալիս, որ Հայկական լեռնաշխարհում հատուկ արտադրում էին բարձրորակ հացահատիկներ և երկարատև պահպանության, այդ թվում նաև արտահանման համար նա–խատեսված գինիներ: Եվ իսկապես, լեռնաշխարհն առնվազն Ք.ա. 3–րդ հազարամյակից սկսած ընդգրկված էր մերձավորարևելյան հացահատիկի (հատկապես գարու) և գինու առևտրում: Ըստ միջագետքյան տեքստերի՝ միջագետքցիները Ք.ա. 3–րդ հազարամյակի երկրորդ կեսին լեռ–նաշխարհի հարավային շրջաններում գտնվող Լուլուբում, Կուր և Հարալի երկրներից գարի էին արտահանում դեպի Նուզի և Աքքադ քաղաքներ: Հայկական լեռնաշխարհի գինին հիմնականում արտահանվում էր Միջագետք և հյուսիսային Սիրիա: Միջագետքցիները պատրաստում էին ոչ բարձրորակ գինի, իսկ լավ գինին, որը շատ թանկ էր, ներմուծում էին լեռներից: Գինին և հա–մապատասխան անոթները դեպի եգիպտոս նույնպես գալիս էին խուռիական շրջաններից, այ–սինքն՝ լեռնաշխարհի հարավային գոտուց:

Հայաստանից գինու արտահանման մասին վկայում է Հերոդոտոսը: Նա ասորեստանցի առևտրականների մասին պատմում է, թե նրանք Արմենիայում կտրում էին ուռիներ, որոնցով պատրաստում էին վահանի նման կլոր նավի կմախք և այն պատում էին կաշվով: Նավը լցնում էին ծղոտով, բեռնում գինով լի կարասներով և գետի հոսանքն ի վար նավելով՝ հասնում Բա–բելոն: Պարզվում է, որ Պատմահոր այս նկարագրությունն ունի հնագույն արմատներ: Այսպես, Ք.ա. 2–րդ հազարամյակի սկզբին սիրիական Մարի քաղաքը վերահսկում էր առաջավորա–սիական գինու առևտուրը: Մարիի տեքստերից պարզ է դառնում, որ գինին Մարի, այնտեղից էլ Բաբելոն տեղափոխվում էր Տավրոսի լեռներից՝ եփրատով ցած, հատուկ անոթների մեջ, նավերով: Այս առևտրում կարքեմիշ քաղաքը միջնորդի դեր էր տանում: Կարքեմիշում էր գոր–ծում մի առևտրական՝ Ծիդքում–Լանասի անվամբ, որը Մարիի արքայի անունից զբաղվում էր մեծ ծավալի գինու փոխանակությամբ: Մարիի տեքստերից պարզ է դառնում նաև, որ գինին

մեծ, մինչև 1000 լիտր և ավելի տարողությամբ անոթներով (որոնք աքքադերեն կոչվում էին *նաշպակում*) տեղափոխվում էր Մարի և պահվում տեղի պալատում: Ըստ հայտնի հնագետ Մակ Գովերնի՝ գինին նույն մեթոդներով էր տեղափոխվում Մարի, ինչպես նկարագրված է Հերոդոտոսի՝ Հայաստանին վերաբերող պատումում: Նույն Մարիի տեքստերում Ասորեստանի արքա Շամշի Ադադի՝ Մարիի արքա Յասմահ Ադադին գրած մի նամակում (Ք.ա. 18–րդ դարի սկիզբ) խոսվում է նրա մասին, որ Խառանի տիրակալ Սին Տիրին իր՝ մինչև երկու տաղանդ արծաթ եկամուտը ստանում էր Կեբանի (Կապան, Ծոփք) արծաթի հանքերի շահագործումից. հընթացս նա զբաղվում էր նաև գինու առևտրով: Իսկ Կեբանի շրջանը հայտնի էր իր խաղողով՝ սկսած բավականին վաղ շրջաններից: Մասնագետները միակարծիք են այն հարցում, որ Ուրի III հարստության և վաղբաբելոնյան աղբյուրներում նկարագրված գինու առևտուրը Ք.ա. 3–2–րդ հազարամյակների սահմանին նույն մեթոդներով է ընթացել, ինչ Մարիում՝ Հայկական Տավրոսից Եփրատն ի վար, և հետագայում արտացոլվել է Հերոդոտոսի հիշյալ նկարագրության մեջ:

Ավելին, արդեն Ք.ա. 4–րդ հազարամյակի վերջին՝ շումերական (ուրուկյան) առևտրականների լայն գործունեության դարաշրջանում, ինչպես ցույց են տալիս ուրուկյան տափաշշերի գտածոները, Արսլանթեփե բնակավայրը գինի էր արտահանում հարավային ուղղությամբ նույն կերպ, ինչպես նկարագրված է Մարիի տեքստերում: Գինու առևտրի՝ դեպի հարավ տարածման գործում, Ք.ա. 4–3–րդ հազարամյակների սահմանից սկսած, կարևոր դեր պետք է խաղացած լինեին կուր–արաքսյան մշակույթի կրողները, որոնց առևտրի ապրանքատեսակների մեջ էին խաղողն ու գինին: Ըստ Հերոդոտոսի՝ ասորեստանցիները գինին Հայաստանից տանում էին կարմիր անոթներով, որոնց զուգահեռները գտնվել են կուր–արաքսյան մշակույթի կրողների կողմից վերաբնակեցված Գոդինթեփե հուշարձանում (կենտրոնական Իրան), և որոնք առնչվում են հարավկովկասյան խաղողի արտադրանքին:

Այս համատեքստում ուշագրավ տեղեկություններ են առկա նաև վերին տիգրիսյան Քենանթեփե բնակավայրի միջինբրոնզեդարյան շերտից (Ք.ա. 20–17–րդ դդ.), որտեղ հայտնաբերվել է մետաղագործական արհեստանոց–պահեստարան, ինչի մասին վկայում են մեծ անոթների գտածոները: Գտնվելով Տիգրիսի ջրային ճանապարհի վրա՝ այս բնակավայրը եղել է կարևոր առևտրական կենտրոն, որտեղ, ի թիվս այլ ապրանքների, արտադրվել և փոխանակվել են գինի ու գարեջուր: Այդ մասին են վկայում խաղողի կորիզների մեծ կուտակումները, ինչպես նաև «գինու անոթների» գտածոները: Պեղումներ իրականացնող հնագետները համարում են, որ գինին այստեղից համապատասխան անոթներով տեղափոխվել է գետն ի վար: Վերին Տիգրիսի, մասնավորապես Տիգրանակերտի շրջանից գինու արտահանման մասին տվյալներ են պահպանվել նոր–

ասորեստանյան շրջանում: Գինու առաքումը դեպի հարավ՝ Տիգրիս գետով, նույն մեթոդներով, ինչ Հերոդոտոսն է նկարագրել, հայտնի է նաև նոր շրջանի ազգագրական տվյալներով: Միջին և նորասորեստանյան շրջանում (Ք.ա. 2–րդ հազ. վերջ – 1–ին հազ. սկիզբ) բազմաթիվ տեղեկություններ կան Նաիրի և Ուրարտու երկրներից գինով հարկ ստանալու մասին, բայց առևտրի մասին վկայություններ գրեթե չկան:

Առկա տվյալները խոսում են նրա մասին, որ Վանի թագավորությունից առաջ էլ Հայկական լեռնաշխարհում գոյություն է ունեցել սոցիալական բարդվածությամբ բնորոշ հասարակություն, որն ունեցել է զետեղարան–կարասներով բնորոշվող վարչատնտեսական համալիրներ և մասնակցել է միջազգային առևտրին՝ արտահանելով լեռնաշխարհի հացահատիկն ու խմիչքները: Այս իմաստով ուրարտական հզոր վարչատնտեսական համակարգը բրոնզ–երկաթեդարյան Հայաստանի ուղղակի զարգացումն է:

ԿԱՐԱՍՆԵՐ ՄԵԾԱՄՈՐԻՑ


Մատեուշ Իսկրա, Տիգրան Զաքյան

Կարասները Մեծամոր հնավայրին բնորոշ արտեֆակտներ են: Հայ–լեհական արշավախմբի իրականացրած պեղումների ժամանակ գտնվել են առնվազն յոթ նմանատիպ կարասներ, որոնք հայտնաբերվել են տարբեր քարե շինություններում՝ թվագրվող նախաուրարտական և ուրարտական շրջաններով: Մեծամորի կարասները ունեն 70–ից 120 սմ բարձրություն, տարողությունը կարող է հասնել անգամ 1000 լիտրի, իսկ քաշը՝ 150–250 կգ–ի *(Նկար 11)*: Վերը ներկայացրած չափերը և հատկապես կավամանների կշիռը այս տեսակ կարասները դարձնում են դժվար արտադրելի, ուստի միայն կավագործների շատ սահմանափակ խումբ կարող էր ձեռքով պատրաստել, ամբողջացնել և թրծել նման կավանոթները: Եթե հաշվի առնենք մեկ կարասի պատրաստման երկար ժամանակահատվածը, պարզ է դառնում, որ նման կավե առարկաները շատ թանկ և արժեքավոր էին Մեծամոր հնավայրի բնակիչների համար:

Մեծ չափերի և կշռի պատճառով կարասները օգտագործվում էին մասնակիորեն հողի մեջ դրված վիճակում և նախատեսված չէին տեղաշարժելու համար *(Նկար 12)*: Դրանք սովորաբար տեղակայվում էին կառույցի ամենասառը և չօգտագործվող մասերում, հիմնականում դրվում էին անկյուններում կամ պատերի երկայնքով: Հետաքրքիր է, որ կարասները տեղադրվում էին այն վայրերում, որոնք երկար ժամանակ օգտագործվում էին որպես պահեստներ, և նույնիսկ դրանք լքելուց հետո: Մեծամորի բնակիչները կարող էին նույն տեղում ստեղծել հաջորդ հարկը՝ նոր կարասներով:

Ռ. Հովսեփյանի ինաբուսաբանական ուսումնասիրությունների շնորհիվ պարզ է դառնում, որ Մեծամորում կարասները ծառայում էին որպես անոթներ տեղական տարատեսակ հացահատիկ, այդ թվում նաև՝ գարի, ցորեն և վարսակ ամբարելու համար: Այնուամենայնիվ, դրանցից մի քանիսը կարող էին օգտագործվել նաև որպես ջրի տարաներ, հատկապես ամռան ընթացքում: Արդյունքում, Մեծամորի կարասները կարելի է դիտարկել որպես ժամանակակից մառանների և սառնարանի համարժեքներ: Ի տարբերություն Կարմիր բլուրից պեղված կարասների՝ մեծամորյան օրինակները ամենայն հավանականությամբ չեն պարունակել ալկոհոլային ըմպելիքներ (գինի, գարեջուր):

Իրենց հիմնական գործառույթից բացի, Մեծամորի հնագույն բնակիչները կարասները կիրառել են նաև այլ նպատակներով, օրինակ՝ վնասված և կոտրված կարասների մասերը երբեմն ծառայել են որպես կավե օջախների կամ հաց թխելու վառարանների խուփ: Ավելին, կան ապացույցներ, որ ամբողջական կարասները օգտագործվել են նաև որպես պահոց կամ թաքստոց արժեքավոր իրերի համար *(Նկար 13)*: Այս երկրորդական գործառույթը հաստատվում է Մեծամոր բնակավայրի քաղաքային թաղամասում պեղված ամենամեծ կարասներից մեկի հատակին հայտնաբերված բրոնզե երկու ապարանջանների միջոցով:




Նկ. 11. Մեծամորում հայտնաբերված կարասներ՝
իրենց գծանկարներով,
© Մեծամորի հայ–լեհական արշավախումբ:



Նկ. 12. Մեծամորում հայտնաբերված կարասներով սենյակը, © Մեծամորի հայ–լեհական արշավախումբ



Նկ. 13. Մեծամորում հայտնաբերված կարաս, © Մեծամորի հայ–լեհական արշավախումբ



«Էրեբունի» պատմամեոգրաֆական արգելոց-թանգարան

Քարտեզ 1. Ուրարտուի տարածման սահմանները:
Հեղինակ՝ Վեհուհի Պոլիկարպոս

ՈՒՐԱՐՏՈՒ

(Համառոտ ակնարկ)

Միքայել Բադալյան

Վաղ երկաթի ժամանակաշրջանում (Ք. ա. 12–9–րդ դարեր) տեղի ունեցող սոցիալական, քաղաքական, ինչպես նաև մշակութային զարգացումների համատեքստում Հայկական լեռնաշխարհում կարելի է առանձնացնել երկու պատմամշակութային գոտիներ, որոնք պայմանականորեն կարելի է անվանել էթիունյան և նաիրյան կամ բիայնական *(Քարտեզ 1)*: Սկզբնական փուլում էթիունյան և/կամ լճաշեն–մեծամորյան գոտին զբաղեցնում էր լեռնաշխարհի գրեթե ամբողջ տարածքը: Այդ թվում՝ Վան և Ուրմիա լճերի միջև գտնվող տարածքում, որտեղ ձևավորվեց բիայնական գոտին, նկատելի են նույն պատմամշակութային դրսևորումներն ու օրինաչափությունները (կիկլոպյան ամրոցների համակարգ, կոմլեքսային հասարակություն, սև մակերեսով խեցեղեն, հասարակության ռազմականացում, նույնօրինակ թաղման ծեսեր և այլն), որոնք արձանագրվել են, օրինակ, Արարատյան դաշտավայրում, Լոռիում, լեռնաշխարհի այլ հատվածներում:

Հայկական լեռնաշխարհի տարածքում տեղի ունեցած սոցիալ–քաղաքական և մշակութային կարևոր գործընթացներից բացի՝ Ասորեստանյան կայսրության ծավալապաշտական նկրտումները ստեղծում էին գործոններ տարբեր ցեղային միությունների միավորման համար: Լեռնաշխարհի տարածքում գլխավորապես ստեղծվել էին երկու կարևոր ուժեր. դրանցից մեկը գլխավորում էր Էթիունի հզոր համադաշնությունը, իսկ մյուսը Վան և Ուրմիա լճերի միջև և փոքր–ինչ հարավ գտնվող գոտում ձևավորված միավորն էր, որը ասորեստանյան աղբյուրներում հայտնի է Ուրարտու անվամբ: Եթե ասորեստանցիներն այդ տարածքն անվանում էին Ուրարտու, ապա տեղի արքաներն իրենց երկիրն անվանում էին Բիայնիլի, Բիայնա կամ, գուցե, Բիա: Իսկ Աստվածաշնչում այն հիշատակվում է որպես Արարատի թագավորություն: Էթիունի համադաշնությունը զբաղեցրել է ներկայիս Հայաստանի Հանրապետության գրեթե ամբողջ տարածքը: Հետաքրքիր է Էթիունիի արքաներից մեկի մեզ հասած անունը՝ Դիուծինի, որ հայերենից թարգմանաբար ստուգաբանվում է աստվածածին և կարծես թե հունական Դիոգենես անվան զուգորդն է:

Ք. ա. 9–րդ դարի կեսերին Վան և Ուրմիա լճերի միջև և փոքր–ինչ հարավ գտնվող տարածքում ձևավորված գոտու վերնախավի գլխավորությամբ Հայկական լեռնաշխարհի տարածքում ստեղծվեց մի պետություն՝ Ուրարտուն (Քարտեզ 1), որը սկսեց լեռնաշխարհի տարբեր հատվածներ իրեն միավորելու և/կամ իր գերիշխանության տակ հաստատելու գործընթաց:

Ուրարտուի ամենանշանավոր մայրաքաղաքը Տուշպան էր (ներկայիս Վան քաղաքը): Գլխավորապես այդ իսկ պատճառով մասնագիտական գրականության մեջ Ուրարտուի համար օգտագործվում է նաև «Վանի թագավորություն» եզրույթը:

Ինչպես նկատել է հայ մեծանուն գիտնական Ն. Ադոնցը, Ուրարտուն «դիցապետական միապետություն էր»: Արքան համարվում էր տերության գերագույն աստված Խալդիի տեղապահը, նրա ներկայացուցիչը երկրի վրա:

Վանի թագավորության արքաներն իրականացնում են մի շարք քաղաքական և կրոնական բարեփոխումներ: Շատ կարևոր էր սեպագիրը որպես պաշտոնական գրային համակարգ ներդնելու քայլը: Այս առումով Արարատի թագավորության արքաների թողած սեպագիր արձանագրությունները նաև տերության խորհրդանշական իշխանության կարևորագույն ցուցիչն են: Բացի դրանից՝ ժայռերի վրա արված մի շարք արձանագրություններ խորհրդանշական սահմանի գործառույթ ունեին:


Կարճ ժամանակ անց Ուրարտուն դառնում է Հին Մերձավոր Արևելքի հզորագույն տերություններից մեկը և վերածվում կայսրության: Արգիշթի I–ի (մոտ Ք. ա. 785/780–756 թթ.) և նրա որդի Սարդուրիի գահակալության առաջին փուլում Վանի թագավորությունը նույնիսկ կարողացել էր խլել գերիշխանության առաջնությունը Հին աշխարհի հզորագույն տերություններից մեկից՝ Ասորեստանից:

Մոտ Ք. ա. 782 թվականին Արգիշթի I արքան իր կառավարման հինգերորդ տարում ներկայիս Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանի տարածքում կառուցում է Էրեբունի քաղաքը: Հենց Էրեբունուց է սկսվում Երևանի գրավոր պատմությունը *(Նկար 14)*: Էրեբունիում իրականացված պեղումների ընթացքում հայտնաբերվել են չորս նույնաբովանդակ սեպագիր արձանագրություններ, որոնցում Արգիշթի արքան իրազեկում է Էրեբունի քաղաքի հիմնադրման մասին: Այդ արձանագրությունները համարվում են Երևանի «քարե անձնագրերը» *(Նկար 15)*:

Ուրարտական տերության հաղթարշավը չէր կարող դուր գալ Ասորեստանին: Արդյունքում Ք. ա. 743 թվականից այդ պետության գահակալ Թիգլաթպալասար III–ը ավերիչ արշավանք է ձեռնարկում դեպի Ուրարտու՝ հասնելով մինչև մայրաքաղաք Տուշպա: Այս ծանր պայմաններում Կովկասից երկիր են ներխուժում կիմմերական ցեղերը: Ռուսա I արքայի դեմ նույնիսկ ապստամբում է որդին՝ արքայազն Մելարտուան: Իսկ ահա ասորեստանյան մեկ այլ միապետի՝ Սարգոն II–ի արշավանքների վերջնանպատակ է դառնում Ուրարտուի հոգևոր կենտրոն Արդինի–Մուծածիրի (Մուսասիր) գրավումը և տեղի Խալդի աստծո տաճարի թալանը: Այս բոլոր հանգամանքները մեծապես խարխլում էին Վանի թագավորության հիմքերը: Հաջորդ արքա Արգիշթի II–ը փորձում էր քայլեր ձեռնարկել տերության երբեմնի համբավը վերականգնելու համար: Ուրարտուի վերջին



Նկ. 14. **Էրեբունի ամրոցը**, օդալուսանկար,
հեղինակներ՝ Արման Սուլեյմանյան, Վահե Այվազյան



Նկ. 15. Արգիշթի Առաջինի արձանագրությունը՝ Էրեբունու հիմնադրման մասին, Երևանի քարե անձնագիրը, Էրեբունի ամրոց, լուսանկարը՝ Կ. Դավթյանի

հզոր արքան էր Ռուսա II–ը (մոտ. Ք. ա. 685–645 թթ.): Նրա օրոք կառուցվում են նոր քաղաք–ամրոցներ, անցկացվում ջրանցքներ: Հենց Ռուսա II–ին են վերագրվում այսօր այնպիսի հայտնի հուշարձանների կառուցումը, ինչպիսիք են Այանիսը և Բաստամը: Դրանց մեջ իր ուրույն տեղն ունի Արարատյան դաշտում կառուցված Թեյշեբաինի (Կարմիր բլուր) քաղաք–ամրոցը, որը նվիրված էր Ուրարտուի տարերքի (հողմի և անձրևի) աստված Թեյշեբային: Ցավոք, Ռուսա II–ին հաջորդած այլ արքաների կառավարման ժամանակ Վանի թագավորությունը անկում է ապրում՝ ընդհուպ մինչև կործանում: Դրան են նպաստում սկյութական արշավանքները, բնակլիմայական խնդիրը (հզոր երկրաշարժեր, հողերի և ջրային աղբյուրների ցամաքեցում) և այլն:

Ուրարտական տերությունը անկում է ապրում Ք. ա. 7–րդ դարի վերջերին: Այնուհետև Հայկական լեռնաշխարհում իշխանությունը ժառանգում է հայ Երվանդունի արքայատոհմը:

Ուրարտական կայսրության զարգացման և հզորացման համար կարևորագույն նշանակություն ուներ տերության միապետների ստեղծած հաղորդակցության համակարգի, պետական չափորոշիչների ներդրումը:

Երկրագործությունը, անասնապահությունը, պալատական կյանքը, Ուրարտուի արքաների հիմնադրած քաղաքները կազմում էին մեկ համակարգի մաս: Ուրարտական ամրոցներում կարևորագույն տեղ էին զբաղեցնում շտեմարանները, մառանները և այլ պահեստներ:

Այս առումով ուրարտական տերության տնտեսական և քաղաքական հզորության խորհրդանիշներից մեկն էլ կարելի է համարել կարասը: Հայկական իրականության մեջ այսօր ընկալվող և գործածվող կարասների նախատիպը հենց Արարատի կայսրության ժամանակ ստեղծված կարասներն են: Այդ կարասի ֆենոմենն աներկբայորեն մատնանշում է ժառանգականություն և շարունակականություն:

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԿԱՐԱՍՆԵՐԸ

Ռոբերտո Դան

Ուրարտական պետության առաջացմամբ ի հայտ եկած մշակութային միջավայրը բնորոշվում է Հայկական լեռնաշխարհի բնիկ տարրերի միաձուլման գործընթացով և ոչ բնիկ տարրերի հետ ունեցած աշխույժ փոխառնչություններով: Այս առումով, անկասկած, նշանակալի դեր է ունեցել «ասորեստանյան աշխարհը», որի մշակույթը Հայկական լեռնաշխարհ է թափանցել առնվազն սկսած Ք. ա. 13–րդ դարից, երբ միջինասորեստանյան ժամանակաշրջանի արքաները ռազմական արշավանքներ էին ձեռնարկում Նաիրիի և Ուրուատրիի ժողովուրդների դեմ: Նման արշավանքների գլխավոր նպատակը լեռնաշխարհի հարուստ բնական պաշարների նկատմամբ հսկողություն հաստատելն էր:

Ուրարտական մշակույթի կարևորագույն չափորոշիչներից մեկը բարձրորակ խեցեղենի արտադրությունն էր: Հատկապես առանձնանում է կարմիր խեցեղենը՝ յուրահատուկ թրծմամբ և փայլեցմամբ: Առանձնահատուկ են նաև ուրարտական կարասները, որոնք, թերևս, ուրարտական խեցեգործական արտադրության ամենաճանաչելի և տարբերվող տեսակներից են: Այս հանգամանքը վկայում է պահեստային նշանակություն ունեցող մեծ անոթների շարքում դրանց կարևորության մասին: Կարասները գլխավորապես օգտագործվել են գինի, քունջութի յուղ, ցորեն, կորեկ և չորացրած մրգեր պահելու համար: Այդ մասին են վկայում, օրինակ, Կարմիր բլուրի ամրոցում իրականացված պեղումների արդյունքները: Ներկայում մեր ունեցած տվյալները փաստում են, որ ուրարտական կարասները լայնորեն օգտագործվել են առնվազն Ք. ա. 9–7–րդ դարերում: Սակայն չպետք է բացառել, որ դրանց նախատիպերը կիրառվել են ավելի վաղ փուլերում և շարունակել օգտագործվել Ք. ա. 7–րդ դարի վերջին հաջորդած տասնամյակներում:

Կարասները սովորաբար տեղադրվել են ուրարտական ամրոցների անմիջապես ներսում՝ մառաններում կամ շտեմարաններում, ինչպես, օրինակ, Կարմիր բլուրում է, և/կամ գետնի մակարդակին, ինչպես Վերին Անձավի ամրոցում է *(Նկար 16)*: Ամենամեծ և լավ պահպանված կարասները հայտնաբերվել են Կարմիր բլուր, Քայալը դերե *(Նկար 17, 18, 19)*, Այանիս *(Նկար 20)*, Էրեբունի, Քեֆ և այլ ամրոցներում: Այստեղ հարյուրավոր կարասներ մի քանի շարքով հայտնաբերվել են կիսով չափ թաղված հողի մեջ: Առանձին կարասներ գտնվել են, օրինակ, Դավթի բլուրի առանձնատներից մեկում: Դրանք օգտագործվել են նաև թաղման ծեսի համար (տե՛ս գրքի «Նոր Արմավիր հնավայրում հայտնաբերված կարասների մասին» հոդվածը):



Նկ. 16. Վերին Անձավի կարասային սրահը: Հաջորդիվ՝ Belli O. 2004 (ed.), Urartu: Savaş ve Estetik / Urartu: War and Aesthetics. İstanbul: Yapı Kredi Yayınları, p. 12



Նկ 17. Քայալը դերե: Կարասային սրահ: Հաջորդիվ՝ Burney Ch.A. 1966,
A First Season of Excavations at the Urartian Citadel of Kayalıdere, Anatolian Studies 16, Plate XIV a:

Կարասները գլխավորապես պատրաստվել են կավից: Սակայն Աջոտակերտում և Սանգարում *(Նկար 21, 22)*, ելնելով հնավայրերի գագաթների ժայռոտ նեղ տեղանքից, «կարասներ» կերտվել են նաև քարից: Կարասների արտաքին մակերեսն ունի տարբեր երանգներ՝ կարմիրից մինչև մոխրագույն: Արտադրության առումով ուրարտական կարասները գլխավորապես կերտվել են ձեռքով՝ կավապարանի օգտագործմամբ, իսկ վերնամասի համար շատ դեպքերում հավանաբար օգտագործվել է նաև դուրգի անիվը: Դառնալով ամբողջական՝ կարասները պատվել են բարձրորակ կավով: Հատակները հաճախ արվում էին այնպես, որ առավել հեշտ լիներ կիսով չափ տեղադրել հողի մեջ: Կավն ու իրանի մակերեսն արվում էին կոպտորեն, իսկ կարասի վերնամասը պատրաստվում էր առավել խնամքով: Ստանալով համապատասխան չափեր՝ դրանք տեղադրվում էին ամրոցների տարբեր հատվածներում՝ կիսով չափ գետնի մեջ:



Նկ. 18. Քայալը դերե: Կարասային սրահ:
Հաջորդիվ՝ Burney Ch.A. 1966, A First Season of Excavations at the Urartian Citadel of Kayalıdere, Anatolian Studies 16, Plate XIV b:



Նկ. 19. Քայալը դերե: Կարաս:
Հաջորդիվ՝ Burney Ch.A. 1966, A First Season of Excavations at the Urartian Citadel of Kayalıdere, Anatolian Studies 16, Plate XIVc:



Նկ. 20. Այանիս: Կարասային սրահ: Հաջորդիվ՝ Çilingiroğlu A. 2012, Ayanis, Çilingiroğlu A., Mercangöz Z., Polat (eds), Ege Üniversitesi Arkeoloji Kazıları. İzmir: Ege Üniversitesi, 16, Resim 22:

Ուրարտական կարասները տարբեր չափսերի են: Կարմիր բլուրից, Քայալը դերեից և Ալթընթեփեից հայտնի որոշ կարասների բարձրությունը տատանվում է 170–211 սմ, տրամագիծը՝ 110–140 սմ, իսկ շուրթերի տրամագիծը՝ 65–79 սմ միջև: Արին բերդից հայտնաբերված մի շարք կարասներ ունեն 2.00–2.20 մ բարձրություն, 90–145 սմ տրամագիծ և 4–5 սմ հաստությամբ պատեր: Այանիսից գտնված մի քանի կարասներ էլ ունեն 1.55–2.25 մ բարձրություն, 1.50 մ իրանի առավելագույն և 65 սմ շուրթի տրամագիծ:

Կարասների զարդարանքն արվում էր թրծումից առաջ: Գլխավորապես կարելի է առանձնացնել կարասների երկու տեսակ՝ հարթ պատերով, վզի հատվածում արված հորիզոնական գոտիներով, պարանի հանգուցային նախշերով և հարթ պատերով, եռանկյունաձև կամ ուղղանկյունաձև խորադիր մոտիվներով: Սովորաբար ուսերին արված հանգուցային նախշերն արվում էին կարասների արտադրության ընթացքում մաս առ մաս միացված հատվածները քողարկելու համար:





Նկ. 21, 22. Աշոտակերտի և Սանգարի ժայռափոր «կարասները»: Լուսանկարները՝ Ռ. Դանի

Կարասներն իրենց ձևով, զարդարանքով և կիրառությամբ ուրարտական տերության կենտրոնացված տնտեսության ակնառու դրսևորումներից են և, ընդհանրապես, ուրարտական մշակույթը բնորոշող կարևորագույն հնագիտական չափորոշիչներից:

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԿԱՐԱՍԸ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Միքայել Բադալյան

Հայկական լեռնաշխարհը գինու և խաղողի նախահայրենիքներից է: Հետաքրքիր է, որ ուրարտական սեպագիր աղբյուրներում հիշատակվում է ***gišḫaluli*** **(**խալուլի) բառը, որը, ամենայն հավանականությամբ, պետք է թարգմանվի կա՛մ գինի, կա՛մ խաղող: Այս առումով պետք է հաշվի առնել, որ ուրարտական պետության սեպագիր համակարգը գլխավորապես վերցված է Ասորեստանից: Իսկ աքքադերենում, ըստ երևույթին, չեն եղել և/կամ քիչ են գործածվել, օրինակ, ջ, օ, ձ, ղ, վ, ճ և այլ հնչյուններ: Բնականաբար, ուրարտական սեպագիր արձանագրությունները կերտելիս այն բառերում, որոնցում հնարավոր չէր գտնել տվյալ բառի հնչյունի աքքադերեն համարժեքը, գրագիրները պետք է փորձեին այն փոխարինել հնարավորինս մոտ հնչյունով: Այս ամենը, օրինակ, կարելի է համեմատել մեր օրերում լատինատառ հայերեն ինչ–որ նախադասություն գրելու հետ: Բնականաբար լատինատառ համակարգում չկան հայերենի բոլոր հնչյուններն արտացոլող տառերը, և մենք պետք է փորձենք դրանց հնարավորինս մոտ հնչյունների տառերը կիրառել: Վերը նշվածի համատեքստում վաղուց արդեն ապացուցված է ուրարտական սեպագիր արձանագրությունների «խալուլի» և հայերեն «խաղող» բառերի հնչյունային և իմաստային նմանությունը:

Հետաքրքրական է, որ ուրարտական արքաները նոր քաղաքներ կառուցելիս սովորաբար միաժամանակ տնկում էին նաև խաղողուտ և պտղատու այգի: Ըստ երևույթին, խաղողուտը և պտղատու այգին կարող էին ընկալվել որպես տերության «մանրակերտ», իսկ Ուրարտուի արքան՝ որպես գերագույն այգեպան և/կամ պարտիզպան, տերության բարեկեցության և արգասաբերության գլխավոր երաշխավոր:

Ուշագրավ է պատմական Հայաստանում՝ Վանա լճի արևելյան ավազանի Կատեպանց գյուղի տարածքում, մինչ օրս գտնվող մի արձանագրություն, որտեղ ուրարտական միապետ Մենուան հաղորդում է իր կնոջ՝ Թարիրիայի պատվին խաղողուտ տնկելու և այն Թարիրիախինիլի անվանելու մասին *(Նկար 23)*: Այս արձանագրությունը գտնվում է Մենուա արքայի կերտած նշանավոր ջրանցքի անմիջապես մոտակայքում: Կատեպանցից են գտնվել Մենուա արքայի թողած հինգ արձանագրությունները, որտեղ խոսվում է արքայի կողմից կառուցվող ջրանցքի շինարարության մասին: Ամենայն հավանականությամբ, Թարիրիային նվիրված խաղողուտն ունեցել է դարավանդաձև տեսք՝ անմիջապես Վանա լճի դիմաց: Ուշագրավ է նաև այն, որ Մենուայի ջրանցքը ժողովուրդն անվանել է նաև Շամիրամի ջրանցք, Շամիրամի առու, իսկ Կատեպանցն իր շրջակայ–



Նկ. 23. Մենուա արքայի սեպագիր արձանագրությունը՝ Թարիրիայի պատվին խաղողուտ հիմնելու վերաբերյալ, լուսանկարը՝ Ք. Ըշըքի:

քով այն տարածքներից է, որտեղ տեղի են ունենում հայոց նախահայրերից Արա Գեղեցիկին և ասորեստանյան կիսաառասպելական թագուհի Շամիրամին վերաբերող իրադարձությունները:

Ասորեստանյան գահակալ Աշշուրնածիրպալ II արքայի (Ք. ա. 884–859 թթ.) սեպագիր տեքստերից մեկում հիշատակվում է, որ Նաիրի երկրի արքաները Ասորեստանին որպես հարկ էին վճարում սայլեր, ձիեր, ավանակներ, ոսկի, արծաթ, բրոնզ, խեցեղեն, խոշոր եղջերավոր անասուններ, ոչխարներ և գինի:

Իսկ ահա Աշշուրնածիրպալ II–ին հաջորդած Սալմանասար III–ի (Ք. ա. 859–824 թթ.) Բալավաթյան դարպասների պատկերաշարերից մեկում դրվագված է մեզ հայտնի ամենավաղ ուրարտական կարասը: Ասորեստանյան տեքստերում նկարագրվում է Սալմանասար III–ի և մեզ հայտնի որպես առաջին ուրարտական արքա հիշատակվող Արամու Ուրարտացու միջև տեղի ունեցող պայքարը: Վերջինս համառ մարտեր է մղել Ասորեստանի տիրակալ Սալմանասար III–ի դեմ՝ փորձելով պահպանել իր երկրի անկախությունը: Համաձայն ասորեստանյան սկզբնաղբյուրների՝ Արամուն ծանր պարտություն է կրել այս պայքարում, նվաճվել են նրա պետության մայրաքաղաք Արծաշկուն, ինչպես նաև մի շարք այլ բնակավայրեր: Արամուին վերաբերող վերջին հիշատակությունը թվագրվում է Ք. ա. 844 թվականով:




Նկ. 24. Բալավաթյան դարպասներ, ասորեստանցիների կողմից ուրարտական կարասը ավար տանելու տեսարան, © Տպագրվում է Բրիտանական թանգարանի հոգաբարձուների խորհրդի թույլտվությամբ:


Բալավաթյան դարպասներին պատկերված է նաև ասորեստանցիների կողմից ուրարտական բնակավայրերը նվաճելու տեսարաններ: Այստեղ խիստ ուշագրավ է մի դրվագ, որտեղ ասորեստանցի զինվորները սայլի վրա դրված կարաս են տանում *(Նկար 24)*: Այս հանգամանքը, մյուս կողմից, վկայում է, որ նմանօրինակ կարասները խիստ մեծ պահանջարկ ունեին:

Կարասանման անոթներ են պատկերված նաև ուրարտական գոտիների տարբեր դրվագաշարերում: Դրանք գլխավորապես առնչվում են տոնակատարություններին և/կամ գուցե խնջույքներին: Խոսքը մասնավորապես վերաբերում է երկկոնիկ ձև ունեցող կարասատիպ անոթներին, որոնց երկու կողմերում պատկերված են ձեռքերում սափորներ բռնած անձինք: Հավանաբար վերջիններս կարասանման անոթներից սափորներով գինի են վերցնում *(Նկար 25 ա., բ.)*:

Ուրարտուում գինեգործության զարգացման մասին խիստ կարևոր տեղեկություններ են հաղորդում ասորեստանյան արքա Սարգոն II–ին (Ք. ա. 721–705 թթ.) վերաբերող սկզբնաղբյուրները: Այսպես, Ք. ա. 714 թ. դեպի Ուրարտու կատարած իր արշավանքի ժամանակ Սարգոն II–ը հիշատակում է, որ Ուլխու քաղաքում (Ուրմիա լճի ավազան) իր զինվորները մտել են ուրարտական արքա Ռուսա Սարդուրդու թաքցրած մառանները և կաշվե խողովակներով ու դույլերով հանել լավորակ գինին, ինչպես ջուրը: Այս տեղեկությունը կարող է վկայել նրա մասին, որ ուրարտական տերության գինու մառանների գոնե մի մասը եղել է կիսամութ:



Նկ. 25ա., Ուրարտական գոտու հատված, գծանկար, հարսանյաց արարողության դրվագաշար՝ կարասանման անոթի պատկերով: Հաջորդիվ՝ Seidl U. 2004, Bronzekunst Urartus, Mainz, Felttafel A–3.3:



Նկ. 25բ., Ուրարտական գոտու հատված՝ կարասանման անոթի պատկերով, գծանկար: Հաջորդիվ՝ Seidl U. 2004, Bronzekunst Urartus, Mainz, Felttafel A–3.4:

Նույն Սարգոն II–ը Ուրարտուի հոգևոր կենտրոն Արդինի–Մուծածիրում Խալդի աստծո տաճարի թալանի իրերի ցանկում հիշատակում է իր բրոնզե պատվանդանով ***haru*** կոչվող մեծ բրոնզե կաթսայի մասին, որն ուներ 80 չափ ջրի տարողություն, և որի առջև Ուրարտուի արքաները զոհաբերվող գինի էին լցնում՝ տերության գերագույն աստված Խալդիի առջև հեղելու համար: Այս տեղեկությունը վկայում է, որ Ուրարտուում կարասները և/կամ կարասանման անոթները օգտագործվել են նաև ծիսապաշտամունքային նպատակներով: Առնվազն ուրարտական վերնախավի համար կարևորագույն հոգևոր կենտրոն հանդիսացող Արդինի–Մուծածիրի Խալդի



Նկ. 26. Մուծածիրի տաճարի բարձրաքանդակի գծանկարը: Հաջորդիվ՝ Radner K., 2012, Between a Rock and a Hard Place: Musasir, Kumme, Ukku and Šubria — the Buffer States between Assyria and Urartu, Biainili–Urartu. The Proceedings of the Symposium held in Munich 12–14 October 2007, edited by Kroll S., Gruber C., Hellwag U., Roaf M., Zimansky P., AI 51, Louvain. Peeters Presse, 252, fig. 17.06:

աստծո տաճարական համալիրում կարասների մեջ լցրել են «սրբազան գինի», որն էլ հեղել են Խալդի աստծո (հավանաբար նրա արձանի և/կամ նրան կերպավորող խորհրդանիշի) առջև: Այս համատեքստում, ըստ ամենայնի, գինու հեղումը խորհրդանշել է մաքրագործում:

Ըստ երևույթին, Մուծածիրից որպես թալան տարված բրոնզե պատվանդանով մեծ բրոնզե կաթսայի պատկերը կարելի է գտնել նույն Արդինի–Մուծածիրի տաճարը և նրա թալանը պատկերող ասորեստանյան հարթաքանդակի մեզ հասած գրչանկարում, որտեղ տաճարի առջև տեղադրված են պատվանդաններով երկու կարասանման անոթներ *(Նկար 26)*:

Հետաքրքրական է, որ ուրարտական կարասները ծառայել են նաև որպես թաքստոց: Այսպես, երբ թշնամական զորքը հարձակվում է Թեյշեբաինի ամրոցի վրա և այրվող նետերով պաշարում այն, Թեյշեբաինիի բնակիչները կարասների մեջ էին փորձում թաքցնել իրենց ամրո–



Նկ. 27. Կարմիր բլուր, միջնաբերդ, 1949 թ., N 25–րդ կարասային սրահ, կարասի միջից բրոնզե թասերի հայտնաբերվելու պահը, © Պետական Էրմիտաժի արխիվ, ֆոնդ 50:



Նկ. 28. Կարմիր բլուրից հայտնաբերված արձանագիր բրոնզե թաս, @ «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց–թանգարան 85/22:

ցի «գանձերը»: Այսպես, օրինակ, 1949 թ. Թեյշեբաինի ամրոցի N 25 սենյակի N 4 կարասի միջից հայտնաբերվել են իրար վրա դրված 97 բրոնզե փայլուն թասեր *(Նկար 27)*: Դրանց մեծ մասի միջնամասում սեպագրով նշված են ուրարտական միապետների (Մենուայի, Արգիշթիի, Սարդուրիի և Ռուսայի) անունները, ինչպես նաև դրվագված են պատկերներ, որոնք կարող էին ունենալ նաև հիերոգլիֆային նշանակություն *(Նկար 28)*:

Հայկական լեռնաշխարհում կարասների արտադրության և դրանց գործածության մասին կարևոր սկզբնաղբյուր կարող է լինել Ք. ա. 5–րդ դարի հույն պատմիչ Հերոդոտոսի հետևյալ վկայությունը.

«Նավերը, որոնցով նրանք (ասորեստանցիները) նավում են գետն ի վար՝ դեպի Բաբելոն, կլոր են և ամբողջովին կաշեպատ: Արմենիայում, որը գտնվում է Ասորեստանից վերև, նրանք կտրում են ուռիներ, (որոնցով) պատրաստում են նավի կողերը և դրանք պատում կաշվե ծածկով, նավի հատակի նման: Նրանք ոչ նավի ետնամասն են լայնացնում, ոչ էլ նրա առաջամասը նեղացնում, այլ տալիս են դրան վահանի նման կլոր ձև: Ամբողջ նավը լցնում են ծղոտով, բեռնում այն և թողնում հոսանքն ի վար: Նրանք մեծ մասամբ փոխադրում են գինի կարմիր կարասներով...» [1]:

Ամենայն հավանականությամբ, կարմիր կարասներով գինին փոխադրելու հաղորդումը վկայում է Ուրարտական կայսրության տնտեսության կարևորագույն խորհրդանիշներից մեկի՝ կարմիր մակերեսով կարասի գործածության շարունակականության մասին: Իսկ Հերոդոտոսի հիշատակած կարասների կերտողները պետք է լինեին հենց հայերը:

[1] Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, թարգմանությունը՝ Սիմոն Կրկյաշարյանի, Երևան, 1986, էջ, 79–80:

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԿԱՐԱՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԻՐԱՌՎԱԾ ՏԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ

Միքայել Բադալյան

Այսօր հեղուկ պարունակող գրեթե բոլոր տարաների և/կամ անոթների վրա մատնանշված է դրանց տարողությունը: Օրինակ՝ եթե մենք ցանկանում ենք գինի գնել, ապա կարող ենք նայել գինու շշի պիտակին և տեսնել, թե որքան է դրա տարողությունը: Մեծ տակառների վրա ևս արտացոլված է դրանց տարողությունը: Մեր օրերում դա արվում է արաբական թվերով և, որպես կանոն, տարողության միավոր է ծառայում լիտրը:

Հետաքրքիր է, որ այդ ամենը Հայկական լեռնաշխարհում կիրառվում էր առնվազն Ուրարտական կայսրությունում, երբ ուրարտական կարասներին մատնանշում էին դրանց համապատասխանող տարողության միավորները: Մեզ հայտնի են նման երեք միավորներ՝ ակարկի, տերուսի և արուսի *(aqarqi, ṭerusi և arusi)*:

Մասնագետների շրջանակում վերը նշված տարողության միավորների ճշգրիտ արժեքի վերաբերյալ արվել են մի շարք ուսումնասիրություններ: Հիմնվելով դրանց վրա՝ կարելի է ենթադրել, որ 1 ակարկին հավասար է 230–300 լիտրի, 1 տերուսին՝ 23–30 լիտրի, իսկ 1 արուսին՝ 1–1.5 լիտրի: Այս համատեքստում խիստ կարևոր է, թե կարասում ինչ է պահվել՝ գինի, ջուր թե յուղ: Վերջինիս դեպքում արդեն կարելի է նաև խոսել կիլոգրամի համապատասխանության մասին:

Տարողության միավորները սովորաբար մատնանշվել են կարասների վերնամասում: Մեզ են հայտնի ուրարտական տարբեր հնավայրերում (Կարմիր բլուր, Էրեբունի, Արգիշթիխինիլի, Հայկաբերդ, Վերին Անձավ և այլն) հայտնաբերված տարողության միավորներով բազմաթիվ կարասներ *(Նկար 29)*:

Ուշագրավ է, որ տարողության միավորները նշվել են ինչպես ամբողջական տարբերակով, այնպես էլ դրանց ակրոֆոնիկ ՝ ***a = aqarqi, ṭi/ṭé = ṭerusi*** (օրինակ՝ ***5 a, 6 ṭi/ṭé*** և այլն)



Նկ. 29. Վերին Անձավից հայտնաբերված կարաս՝ վերնամասում մատնանշված տարողության միավորների արձանագրությամբ: Հաջորդիվ՝ Belli O., Salvini M. 2006, Pithoi with Cuneiform and Hieroglyphic Inscriptions from Upper Anzaf Fortress, – Studi Micenei ed Egeo–Anatolici, 48, p. 67, fig. 16a:




Նկ. 30. Կարասի հատված՝ տարողության միավորների արձանագրությամբ, @ «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց–թանգարան 13/60:

և հիերոգլիֆային ձևերով: Օրինակ՝ Կարմիր բլուրից հայտնաբերված կարասներից մեկին մատնանշված է *3 a, 4 ṭí/ṭé (Նկար 30)*: Այսինքն՝ ակարկիի համար նաև կիրառվել է a–ա, տերուսիի համար՝ *ṭí/ṭé* –տե տարբերակը: Այս համատեքստում խիստ հետաքրքիր է, որ այսօր լիտրը գլխավորապես մատնանշվում է *l* ձևով (օրինակ՝ 2 l, 250 l և այլն):

Արուսին, ամենայն հավանականությամբ, համապատասխանում է միջագետքյան LIŠ/DÍLIM–ին: Մինչև վերջերս մեզ հայտնի էին արուսի–ի հիշատակությամբ առնվազն երեք կարասի բեկորներ, որոնք հայտնաբերվել էին Հայկաբերդից: Սակայն 2024 թ. հունիսին Էրեբունի հնավայրում հայ–ֆրանսիական հնագիտական արշավախմբի կողմից, այսպես կոչված, «Փոքր դահլիճի» հարևանությամբ գտնվող կարասային սրահում իրականացված պեղումների ընթացքում կիսով չափ ջարդված կարասներից մեկի մեջ հայտնաբերվեց կարասի բեկոր, որտեղ ևս մատնանշված է արուսի տարողության միավորը (տե՛ս «Էրեբունի ամրոցի «Փոքր դահլիճի» հարևանությամբ գտնվող կարասային սրահում իրականացված պեղումների նախնական արդյունքները» ենթագլուխը):

Կարասի վերնամասում տարողության միավորներից առաջ սովորաբար դրվում էին դրանց առնչվող սեպագիր համակարգում կիրառվող համապատասխան թվերը: Օրինակ՝ Վերին Անձավից հայտնաբերված կարասներից մեկի վերնամասում մատնանշված է 5 ակարկի, 2 տերուսի *(Նկար 31)*:



Նկ. 31. Վերին Անձավից հայտնաբերված կարասներից մեկի վերնամասում մատնանշված տարողության միավորների արձանագրությունը: Հաջորդիվ՝ Belli O., Salvini M. 2006, Pithoi with Cuneiform and Hieroglyphic Inscriptions from Upper Anzaf Fortress, – Studi Micenei ed Egeo–Anatolici, 48, p. 67, fig. 16c:


Անչափ հետաքրքիր է, որ Ալթըն–թեփե հնավայրում գտնված կարասների վրա կիրառվել է նաև լուվիական հիերոգլիֆային գիրը: Այսպես՝ *aqarqi–ի, ṭerusi*–ի և *arusi*–ի համար համապատասխանաբար ընթերցվել են aharku, turuza և aruza տարբերակները: Այս համատեքստում aharku–ի դեպքում որոշակի նմանություններ կարելի է նկատել հայերեն «ահարկու» բառի հետ:

Բացի կարասներից՝ ակարկիի և տերուսիի մասին հիշատակություններ կան ուրարտական երկու տեքստերում: Այսպես, Բոստանկայայից հայտնաբերված արձանագրությունում Մենուա արքան հիշատակում է 900 ակարկի տարողությամբ մառանի կամ գուցե պահոցի մասին: Այստեղ հավանաբար խոսքը կարող էր լինել ջրի զետեղերանի մասին, քանի որ արձանագրությունում կառույցը հիշատակված է *gi (e)* ձևով և ներկայում ընդունված է թարգմանել որպես պահոց, ցիստեռն, զետեղարան:

Սարդուրի Արգիշթորդու տարեգրության մի հատվածում հիշատակվում է 111 ակարկի (մոտ 30 000 լիտր) գինու և 88 ակարկի և 7 տերուսի յուղի մասին: Այս տեղեկությունը ևս մեկ անգամ հաստատում է, որ կարասների վրա մատնանշված տարողության միավորները կարող էին կիրառվել ոչ միայն գինու համար:

Ուրարտական կարասների վրա միաժամանակ կարող են լինել ինչպես սեպագրով, այնպես էլ հիերոգլիֆային համակարգով մատնանշված տարողության միավորներ:

Վանի թագավորության տարբեր հուշարձաններից հայտնաբերված կարասների վրա կարելի է հանդիպել նաև գրաֆիտիների: Այս առումով, օրինակ, հետաքրքիր են Էրեբունուց հայտնաբերված տարբեր կարասների բեկորներ, որոնց վրա արվել են ուղտի, ձիու և այլ պատկերներով գրաֆիտիներ *(Նկար 32)*:



Նկ. 32. Էրեբունուց հայտնաբերված կարասի բեկոր՝ ուղտի պատկերով խազանկարով: Հաջորդիվ՝ Chodžaš S. 1971, Schizzi preparatorî per gli affreschi di Erebuni, Studi Micenei ed Egeo–Anatolici, 71, Tav. II a:



Նկ. 33. Էրեբունի ամրոցը,
օդալուսանկարը՝ Մակոտո Արիմուրայի:

ԷՐԵԲՈՒՆՈՒ ԸՆԴԱՐՁԱԿ ՍՅՈՒՆԱՁԱՐԴ ԴԱՀԼԻՃՈՒՄ 2016–2018 ԹԹ. ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Միքայել Բադալյան

Էրեբունին գտնվում է Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանի հարավարևելյան ծայրամասում՝ Նոր Արեշ և Վարդաշեն թաղամասերի միջև *(Նկար 33)*: Այս բնակավայրը Ք. ա. մոտ 782 թ. կառուցել է ուրարտական տերության հզոր արքաներից մեկը՝ Արգիշթի I–ը: Ըստ երևույթին, Ուրարտական կայսրության համար Էրեբունին Արարատյան դաշտի կարևորագույն կենտրոններից և հենակետերից մեկն է եղել:

Էրեբունի ամրոցում խորհրդային տարիներին (1950–1968 թթ.) իրականացված պեղումների ընթացքում մասամբ կամ ամբողջովին պեղվել են վեց կարասային սրահներ:

2008–2009 թթ. Էրեբունի ամրոցի, այսպես կոչված, Խալդի աստծո տաճարի հարակից տարածքում հայ–ամերիկյան հնագիտական արշավախումբը հայտնաբերել է սեպագրով մատնանշված տարողության միավորներ պարունակող կարասների երկու բեկոր: 2011 թ. Էրեբունի ամրոցի հյուսիսարևմտյան լանջին իրականացված պեղումների ընթացքում հայկական արշավախումբը գտել է տարողության թիվ պարունակող խիստ վնասված փոքր բեկոր:

2008 թ. Էրեբունի ամրոցի ընդարձակ կարասային կամ N 15 սրահում պեղումներ է կատարել հայկական արշավախումբը (ղեկավար՝ Ա. Փիլիպոսյան, պեղող–հնագետ՝ Գ. Թումանյան):

2016–2018 թթ. այստեղ կրկին պեղումներ է իրականացրել Էրեբունու հայկական արշավախումբը (ղեկավար՝ Մ. Բադալյան): Վերը նշված սրահում խորհրդային տարիներին անցկացված պեղումների ժամանակ հայտնաբերվել են մեծ թվով որմնանկարների հատվածներ: Ընդունված կարծիքներից մեկի համաձայն՝ սկզբնական փուլում այստեղ եղել է աշխարհիկ, գուցե արարողակարգային բնույթի կառույց, այնուհետև այն վերածվել է կարասային սրահի:

2016–2018 թթ. իրականացված պեղումները լուրջ փոփոխություններ առաջացրին մինչ այդ՝ խորհրդային տարիներին, վերը նշված սրահի վերաբերյալ մեր ունեցած ընկալումներում: Այսպես, պարզ դարձավ, որ սրահում առկա են ոչ թե հինգ, այլ չորս արձանագիր կլոր սյան խարիսխներ: Հյուսիսից երկրորդ սյան խարիսխին հաջորդում է տուֆե քառակուսի տափակ խարիսխ: Հյուսիսային խարիսխների մոտ դրված ստուգողական փոսորակների արդյունքում գտնվեցին սյան խարիսխների արձանագրության ջարդված բեկորներ: Բոլոր արձանագրությունները պատկանում են Էրեբունու հիմնադիր Արգիշթի Առաջին արքային, որտեղ հիշատակվում է Խալդի աստծո՝ մեծությամբ Արգիշթիի՝ Մենուայի որդու կողմից «տան» կառուցման մասին:

Սրահի հյուսիսային հատվածում կրկին վերաբացվեցին կիսով չափ ջարդված կարասները *(Նկար 34)*: Պարզ է, որ հեղուկ կամ հացահատիկ հանելու համար այստեղ կարասների միջև թողնվել է մեկ մարդու համար շարժվելու տարածություն:

Խիստ ուշագրավ արդյունքներ գրանցվեցին սրահի հարավային հատվածում: Այստեղ հայտնաբերվեցին քառակուսի չորս պիլլոններ, որոնք սրահի կենտրոնով ձգվում են հարավից հյուսիս *(Նկար 35)*: Պիլլոնների արևելյան արտաքին հատվածի երկայնքով ևս բացվեցին կիսով չափ ջարդված կարասներ: Ընդ որում, հայտնաբերվեց կարասի մեջ դրված կարաս: Պարզվեց, որ պիլլոնները իրար հետ կապված են հզոր հիմնապատով: Պիլլոնից մինչև հիմնապատի ստորին հատվածի բարձրությունը մոտ 3 մ է *(Նկար 36)*: Այս պատկերը շատ նման է Կարմիր բլուրում, Վերին Անձավում պեղված նմանատիպ պիլլոններ ունեցող կարասային սրահներին:



Նկ. 34. Էրեբունի ամրոցի ընդարձակ սրահում բացված կիսով չափ ջարդված կարասներ, լուսանկարը՝ Միքայել Բադալյանի:



Նկ. 35. Էրեբունի ամրոցի ընդարձակ սրահում բացված պիլլոնները և կարասները, օդալուսանկարը՝ Մակոտո Արիմուրայի:



Նկ. 36. Էրեբունի ամրոցի ընդարձակ սրահում բացված պիլլոններն իրար կապող պատի հատված, լուսանկարը՝ Միքայել Բաղալյանի:



Նկ. 37. Էրեբունի ամրոցի ընդարձակ սրահում ամբողջությամբ պեղված կիսով չափ ջարդված կարաս, լուսանկարը՝ Միքայել Բադալյանի:

Հարավից վերջին ֆիքսված պիլլոնի արևելյան արտաքին հատվածի մոտ գտնվող կարասն ամբողջությամբ պեղվեց *(Նկար 37)*: Հետագա հետազոտությունները պարզեցին, որ կարասը պարունակել է հացահատիկ[2]: Կարասի միջից գտնվեց նաև սարդիոնե մեկ ոլոնքահատիկ:

[2] Հետազոտություններն իրականացվել են հնագետ Բ. Գասպարյանի աջակցությամբ, ինչի համար հայտնում ենք մեր խորին երախտագիտությունը:

Այս սրահի խառը շերտում հայտնաբերվեց նաև միջնադարյան ջնարակած խեցեղենի բեկոր, որը կարելի է թվագրել 10–րդ դարով[3] *(Նկար 38)*: Այս գտածոն թույլ է տալիս որոշակիորեն ենթադրելու, որ Էրեբունիում կենսագործունեություն եղել է նաև միջնադարում:

Մեր ունեցած տեղեկություններով՝ երբ սրահի կարասների վերնամասը ջարդվել է, այդ մեծ բեկորներով պատրաստել են ընդարձակ հատակ: Այսինքն՝ ինչ–որ փուլում կարասային սրահը կորցրել է իր նշանակությունը և վերածվել այլ կառույցի:

Ըստ Ռ. Դանի՝ այս սրահը կարող էր լինել երկհարկանի, և խորհրդային տարիներին այստեղ հայտնաբերված որմնանկարների հատվածները կարող էին ընկած լինել երկրորդ հարկի փլուզման ժամանակ:



Նկ. 38. Էրեբունի ամրոցի ընդարձակ սրահում գտնված միջնադարյան ջնարակապատ խեցեղենի բեկոր, լուսանկարը՝ Միքայել Բադալյանի:

[3] Թվագրման համար մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում հնագետ Ա. Բաբաջանյանին:

ԷՐԵԲՈՒՆԻ ԱՄՐՈՑԻ «ՓՈՔՐ ԴԱՀԼԻՃԻ» ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ ԿԱՐԱՍԱՅԻՆ ՍՐԱՀՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Միքայել Բադալյան, Ստեֆան Դեշամպ,
Ֆրանսուա Ֆիշե դը Կլեֆոնտեն, Օրելյա Լյուրո

2024 թ. մայիս–հունիս ամիսներին Էրեբունու հայ–ֆրանսիական հնագիտական արշավախումբը (համաղեկավարներ՝ Մ. Բադալյան, Ս. Դեշամպ) պեղումներ իրականացրին նաև Էրեբունի ամրոցի, այսպես կոչված, «Փոքր դահլիճին» կից կարասային սրահի արևելյան հատվածում *(Նկար 39)*: Այս սրահի արևելյան հատվածում հնագիտական հետազոտություններ իրականացվել էին դեռևս խորհրդային տարիներին:




Նկ. 39. Էրեբունի ամրոցի Սուսի տաճարական համալիրի և «Փոքր դահլիճին» կից կարասային սրահի արևմտյան հատվածի հատակագիծը, @ Էրեբունու հայ–ֆրանսիական հնագիտական արշավախումբ:

2024 թ. իրականացված պեղումների արդյունքում այստեղ բացվեցին կողք կողքի տեղադրված, կիսով չափ ջարդված կարասներ *(Նկար 40, 41)*: Կարասները պեղելիս պարզ դարձավ, որ դրանց վերնամասը ինչ–որ հանգամանքների հետևանքով ջարդվել է և ընկել ստորին հատվածների մեջ: Նման մի կարասի պեղման ժամանակ գտնվեց սեպագրով մատնանշված տարողության միավորներ պարունակող կարասի բեկոր *(Նկար 42)*՝ *[r]u–si a–ru–si*: Այն իր արձանագրությամբ ունի շատ կարևոր նշանակություն և Հայաստանի Հանրապետության տարածքում դեռևս



Նկ. 40. Էրեբունի ամրոցի «Փոքր դահլիճին» կից կարասային սրահի արևմտյան հատվածի օդալուսանկար, © Էրեբունու հայ–ֆրանսիական հնագիտական արշավախումբ:



Նկ. 41. Էրեբունի ամրոցի «Փոքր դահլիճին» կից կարասային սրահի արևելյան հատվածի հատակագիծը, © Էրեբունու հայ–ֆրանսիական հնագիտական արշավախումբ:



Նկ. 42. Էրեբունի ամրոցի «Փոքր դահլիճին» կից կարասային սրահից հայտնաբերված կարասի բեկոր՝ արուսի տարողության միավորի մատնանշմամբ, © Էրեբունու հայ–ֆրանսիական հնագիտական արշավախումբ:

միակն է, որ պարունակում է արուսի տարողության միավորը: Մինչ այդ արուսի մատնանշմամբ երեք կարասի բեկորներ գտնվել էին Հայկաբերդ հնավայրից: Բացի դրանից՝ Ալթըն–թեփեից հայտնաբերվել էին *aruza* տարբերակով լուվիական հիերոգլիֆային գրով մատնանշված ևս մի քանի կարասների բեկորներ:

Վերը նշված սեպագրի պահպանված հատվածում արուսիին նախորդում են ru (առաջին հատվածը վնասված է) և si սեպավանկերը: Ամենայն հավանականությամբ, այստեղ արուսի–ից առաջ սեպագրով մատնանշվել է տերուսի տարողության միավորը: Այս բեկորը խիստ հե–տաքրքրական է նաև նրանով, որ արուսիից առաջ նշված չէ որևէ թիվ: Այս կարասի մեջ գտնվեց նաև կարասի ծածկի և կամ գինին հանելու համար նախատեսված դույլի մի հատվածը՝ մետաղե գամերով, հավանաբար ծղոտե և քաթանե պահպանված մնացորդներով *(Նկար 43 ա., բ.)*:



Նկ. 43ա. Էրեբունի ամրոցի «Փոքր դահլիճին» կից կարասային սրահից հայտնաբերված կարասի ծածկոցի կամ դույլի պահպանված հատված, © Էրեբունու հայ–ֆրանսիական հնագիտական արշավախումբ:



Նկ. 43բ. Էրեբունի ամրոցի «Փոքր դահլիճին» կից կարասային սրահից հայտնաբերված կարասի ծածկոցի կամ դույլի պահպանված հատված, © Էրեբունու հայ–ֆրանսիական հնագիտական արշավախումբ:



Նկ. 44. Էրեբունի ամրոցի «Փոքր դահլիճին» կից կարասային սրահից հայտնաբերված կարասի բեկոր՝ սեպագրով նշված տարողության միավորներով՝ 5 a–qar–qi , 6 [ţe–ru–si]՝ 5 ակարկի և 6 տերուսի: © Էրեբունու հայ–ֆրանսիական հնագիտական արշավախումբ:



Նկ. 45ա. Էրեբունի ամրոցի «Փոքր դահլիճին» կից կարասային սրահի կարասներից մեկի ստորին հատվածից հայտնաբերված ոսկրե նետասլաք, © Էրեբունու հայ–ֆրանսիական հնագիտական արշավախումբ:

Նույն կարասից գտնվել է նաև մեկ այլ բեկոր, որի վրայի տարողության միավորները խիստ վնասված են: Մեկ այլ կարասի պեղումների ընթացքում հայտնաբերվեց սեպագրով նշված տարողության միավորներ պարունակող ևս մեկ բեկոր՝ *5 a–qar–qi, 6 [ţe–ru–si]*՝ 5 ակարկի և 6 տերուսի մատնանշմամբ *(Նկար 44)*:

Պեղված հատվածում կարասներից երկուսի մեջ հայտնաբերվեցին ոսկրե նետասլաքներ *(Նկար 45 ա., բ.)*: Դրանք հար և նման են ուրարտական տիպի մետաղից պատրաստված նետասլաքներին: Մեր նախնական կարծիքով՝ այս ոսկրե նետասլաքները չէին կարող պատահաբար հայտնվել կարասներում, և այդ հանգամանքը կարող էր կապված լինել ինչ–որ ծեսի կամ մոգության հետ: Այս առումով, կարասներից վերցված հողանմուշների իրականացվելիք հնաբուսաբանական հետազոտությունները կարող են ավելի հստակ պատասխաններ առաջարկել: Դեռևս պետք է պարզել՝ վերը նշված կարասները պարունակել են հացահատի՞կ, գինի՞, թե՞ այլ հեղուկ:



Նկ. 45բ. Էրեբունի ամրոցի «Փոքր դահլիճին» կից կարասային սրահի կարասներից մեկի ստորին հատվածից հայտնաբերված ոսկրե նետասլաք, © Էրեբունու հայ–ֆրանսիական հնագիտական արշավախումբ:

«Փոքր դահլիճին» կից կարասային սրահում իրականացված պեղումների ընթացքում հայտնաբերվեցին նաև հիերոգլիֆային համակարգով մատնանշված տարողության միավորներ պարունակող կարասի բեկորներ, տարատեսակ խեցեղենի մնացորդներ և այլն: Խիստ հետաքրքիր է կենդանու (հավանաբար այծի) խազանկարով (գրաֆիտի) կարասի բեկորը *(Նկար 46)*:



Նկ. 46. Էրեբունի ամրոցի «Փոքր դահլիճին» կից կարասային սրահից հայտնաբերված կարասի բեկոր՝ այծի խազանկարով, © Էրեբունու հայ–ֆրանսիական հնագիտական արշավախումբ:

ԹԵՅՇԵԲԱԻՆԻԻ (ԿԱՐՄԻՐ ԲԼՈՒՐ) ԿԱՐԱՍԱՅԻՆ ՍՐԱՀՆԵՐԸ


Վահե Սարգսյան



Նկ. 47. Զվարթնոցի ուրարտական արձանագրությունը, լուսանկարը՝ Միքայել Բադալյանի

Վանի թագավորությունում տնտեսությունը գործում էր պետության կողմից արտադրված երկրագործական և այգեգործական մթերքների հավաքման և աշխատանքի դիմաց վերաբաշխման սկզբունքով: Թագավորության տարածքում կառուցված ամրոցները նախատեսված էին նաև հավաքված բերքը պահելու, վերամշակելու և վերաբաշխելու համար: Երկրի հյուսիսարևելյան երկրագործական բերրի շրջանների համար Ք.ա. 7–րդ դարում նման գործառույթ էր վերապահված նաև վարչատնտեսական կենտրոն Թեյշեբաինիին (Կարմիր բլուր): Դա փաստում է նաև Վանի թագավորության արքա Ռուսա II–ի (Ք.ա. մոտ 685—645 թթ.)՝ Զվարթնոցում գտնված արձանագրությունը *(Նկար 47)*: Նշվում է, որ Կուարլինի (հնարավոր է նաև Կուբլինի ընթերցումը) հովտում՝ Կարմիր բլուրից դեպի ներկայիս Էջմիածին ընկած տարածքում, տնկվել են խաղողի և պտղատու ծառերի այգիներ, ոռոգման համար կառուցվել է Իլդարունի (Հրազդան) գետից սկզբնավորվող, մոտ 400 մետր ժայռափոր թունելով անցնող Ումեշինի անունով ջրանցքը:

Կարմիր բլուր հնավայրը գտնվում է Երևանի հարավարևմտյան հատվածում՝ Հրազդան գետի ձախ ափին *(Նկար 48)*: Շնորհիվ ամրոցի 11–րդ սենյակի մոտ գտնված դռան բրոնզե փականի արձանագրության՝ պարզ դարձավ, որ Ռուսա II արքան բնակավայրը անվանել է Թեյշեբաինի՝ ի պատիվ ուրարտական դիցարանի տարերքի աստված Թեյշեբայի: Կարմիր բլուրի պեղումներից գտնվել է նաև նույն Թեյշեբա աստծո բրոնզե արձանիկը: Ուրարտական ժամանակաշրջանի առավել շատ թվով կարասները հայտնաբերվել են հենց Կարմիր բլուրում:




Նկ. 48. Կարմիր բլուրի միջնաբերդը, © Պետական Էրմիտաժի արխիվ, ֆոնդ 50

Կարմիր բլուրի միջնաբերդի առաջին հարկում պեղումների ընթացքում բացվել են շուրջ 150 նկուղային սենյակներ՝ պահեստներ, մառաններ, արհեստանոցներ և գինի պահելու համար նախատեսված յոթ կարասային սրահներ (1949–1957 թթ.): Թեյշեբաինիի կարասային սրահները, բացառությամբ մեկի, երկու խմբով՝ 25–րդ, 28–րդ և 40–րդ, 46–րդ, 47–րդ, 48–րդ, կենտրոնացված էին միջնաբերդի կենտրոնական հատվածում՝ պարունակելով գրեթե նույնաքանակ կարասներ *(Նկար 49)*:



Նկ. 49. Կարմիր բլուրի կարասային սրահներից մեկի վերակազմությունը,
հեղինակ՝ Հենրիկ Դանիելյան:



Նկ. 50. Կարմիր բլուր, միջնաբերդ, 1949 թ., © N 25–րդ կարասային սրահ,
Պետական Էրմիտաժի արխիվ, ֆոնդ 50:




Նկ. 51. Կարմիր բլուր, միջնաբերդ, 1949 թ., © N 25–րդ կարասային սրահ, կարասի միջից բրոնզե թասերի
հայտնաբերվելու պահը, Պետական Էրմիտաժի արխիվ, ֆոնդ 50:

Կարասային սրահներից ամենամեծը 25–րդն է (երկարությունը՝ 31 մ, լայնությունը՝ 10,30 մ), *(Նկար 50)* քանի որ նման մակերեսով մառանը դժվար էր ծածկել գերաններով, բիայնացի ճարտարապետներն այն բաժանել են երկու մասի՝ կենտրոնական հատվածում կառուցելով երեք պիլլոններ և որմնահեց: Հայտնաբերվել են կիսով չափ հողում թաղված 82 կարասներ՝ կառույցի երկարությամբ դրված, քառաշար: Բոլոր կարասները պռնկից ներքև ունեն իրենց տարողության չափը՝ փորագրված մինչ թրծումը: Կարասներից քսանն ունեն տարողության նշումներ՝ սեպագրով, իսկ մնացած կարասները՝ հիերոգլիֆներով՝ հնգաթև աստղի, խաչի և երեք փոսիկների տեսքով: Կարասներն ունեն տարբեր տարողություններ, բայց տեսքով գրեթե միանման են:

Սրահի արևմտյան պատի մոտ՝ երկու կարասների միջև, հայտնաբերվել է կավե խոշոր ձագար՝ գինի լցնելու համար: Ուշագրավ է, որ ամրոցի անկման ժամանակ 82 կարասից երեքում եղել է ցորեն, և ևս երեքում՝ գարի, կորեկ և ալյուր: Կարասներից մեկում հայտնաբերվել են թաքցված 97 բրոնզե թասեր՝ արքաներ Մենուայի, Արգիշթի I–ի, Սարդուրի II–ի և Ռուսա I–ի արձանագրություններով *(Նկար 51)*:

Սրահի կենտրոնական մասում՝ երկու պիլլոնների միջև, գտնվել է կավե զոհասեղան (երկարությունը՝ 1,8 մ, լայնությունը՝ 0,6 մ, բարձրությունը՝ 0,23 մ): Այն հատակին ունի երեք փոսիկներ, որոնցից մեկ խորը՝ 0,12 մ, և երկուսը՝ միմյանց միաձուլվող: Զոհասեղանի վրա առկա էին մոխրի և այրված ոսկորների մնացորդներ: Զոհասեղանից հյուսիս գտնվող պիլլոնի մոտ կառուցվել էր մոխրի համար աղյուսներից արկղիկ, իսկ հանդիպակաց պիլլոնի մոտ՝ ոչ բարձր նստարան, որի վրա հավանաբար դրվել են մորուքավոր մարդկանց կավե հինգ արձանիկներ, որոնց գլխանոցը նման է ձկան գլխի, իսկ ուսերը և մեջքը ծածկված են ձկան թեփուկներով: Արձանիկները ներկված են եղել կապույտ գույնով և թերևս խորհրդանշել են առողջության պահապան աստվածներին: Ուշագրավ է, որ հարակից սենյակներից մեկի՝ 26–րդի պեղումների ընթացքում հայտնաբերվել են մանր և խոշոր եղջերավոր կենդանիների մոտ 35000 ոսկորներ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրանք այրված են և հայտնաբերվել են զոհասեղանից ոչ հեռու, ենթադրվել է, որ զոհաբերված կենդանիների ոսկորներն են: Համանման իրողություն վկայված է ուրարտական հուշարձաններից Ռուսախինիլիում (Թոփրաքքալե) և Բաստամում, որը, ըստ հետազոտողների, ծխարկված մսից ոսկորները հեռացնելու արդյունք է: 25–րդ սրահից հայտնաբերվել են նաև ձիթաճրագներ և ծխարկման անոթներ՝ ծծումբով սրահներն ախտահանելու համար:

Վերոհիշյալ մառանը միջանկյալ 27–րդ սենյակով հաղորդակից էր 28–րդ սրահին (երկարությունը.՝ 27 մ, լայնությունը՝ 10,3 մ): Ուշագրավ է, որ 27–րդ սենյակի հարավային կից մառանում գտնվել են 1036 սափորներ *(Նկար 52)*՝ 2–6 լիտր տարողությամբ, 40 ձիթաճրագներ:




Նկ. 52. Կարմիր բլուր, միջնաբերդ, © N 27–րդ սենյակի հարավային կից մառանից հայտնաբերված սափորները, Պետական Էրմիտաժի արխիվ, ֆոնդ 50:

28–րդ սրահը նույնպես բաժանված է երկու մասի՝ կենտրոնական հատվածում երկու որմնահեցով և մեկ պիլլոնով: Սրահի պատերը ծածկված էին կավածեփով՝ ուրվագծելով 27 շար աղյուսները: Քառաշար դասավորված 70 կարասների տարողության չափերը նշված էին հիերոգլիֆով՝ ուղիղ և թեք խաչեր՝ երկու փոսիկներով, և ուղղահայաց նշան՝ փոսիկով: Կարասներից երեքում հայտնաբերվել է ցորեն, որոնցից մեկի մեջ՝ երկարուկ անոթ, որով լցրել էին այն, հացահատիկ պարունակող այլ կարասներում՝ հյուսկեն զամբյուղների մնացորդներ, ինչպես նաև մեկական կարաս՝ ալյուրի, գարու, քունջութի և լոբու մնացորդներով: Ուշագրավ է, որ հյուսիսարևմտյան հատվածի կարասներից մեկը ծածկված էր Արգիշթի I–ի արձանագրությունը կրող վահանով, որը վնասվել էր տանիքի փլուզման հետևանքով: Կարասի ներսում դրված էին նիզակի ծայրեր, երկաթե կացինների բեկորներ, մանգաղներ և ձողեր, դանակներ, ուրագներ, ինչպես նաև բրոնզե գոտու հատված: Կարասներից մեկի կողքին գտնվեց երկրորդ բրոնզե վահանը՝ Ռուսա I–ի արձանագրությամբ: Սրահի արևմտյան հատվածում գտնվել է կապարճ, իսկ կարասներից մեկում՝ սաղավարտ՝ Արգիշթի I–ի արձանագրություններով: Սաղավարտի հետ նույն կարասում գտնվել է բրոնզե կաթսայի մի հատված (բարձրությունը՝ 60 սմ), իսկ մյուս հատվածը՝ մեկ այլ կարասում: Գտնվել են նաև բրոնզե 6 ումբոններ՝ մեկը Արգիշթի I–ի և հինգը Սարդուրի II–ի արձանագրությամբ: Հայտնաբերվել է նաև մարդու կավե արձանիկ՝ ասուրա–բաբելական պանթեոնից հայտնի կարիճ աստվածը:

Սրահի հյուսիսարևմտյան հատվածում հայտնաբերվել են գարով լցված երկարուկ անոթ, թասեր, անկանթ սափորներ, մետաղե անոթների բեկորներ, երկու ձիթաճրագներ, իսկ հարավարևելյանում՝ կավե անոթի մեջ մոտ 250 կավե կարծր երկարուկ քերիչներ (7–8 սմ), կավե խնկամաններ և բրոնզե ապարանջան:

Կարասային սրահների մյուս հատվածը խմբված էր 40–րդ (երկարությունը՝ 10,78 մ, լայնությունը՝ 4,14 մ) մառանի շուրջը: Մառանի չորս դռներից երեքը՝ երկու արևմտյան և մեկ արևելյան, նույնպես տանում էին դեպի կարասային սրահներ: Այստեղ հայտնաբերված 20 կարասները եռաշար թաղված էին հողում: Կարասների մեծ մասն ուներ տարողության նշաններ՝ 5 ակարկի 1 տերուսիից մինչև 3 ակարկի հինգ տերուսի: Ուշագրավ է, որ այս կարասներում ամրոցի կործանման ժամանակ եղել է գինի, ինչը վկայում են անոթների հատակի ստորին հատվածի մուգ գույնը և արված հետազոտությունները: Միայն չորս կարասներում են հայտնաբերվել գտածոներ. մեկում՝ բրոնզե ապարանջան, իսկ մյուս երեքում՝ ոսկե թիթեղներ՝ առյուծի արձանիկի բոլորապատի հատվածներ: Ի դեմս այս իրողության՝ ըստ երևույթին, վկայված է ոսկին գինու մեջ նետելու ծեսը: Հայտնաբերվել են նաև մի քանի կավե անոթներ՝ կանթով, գավաթ, տափակ թաս, հացահատիկի անոթ և ձիթաճրագի բեկորներ:




Նկ. 53. Կարմիր բլուր, միջնաբերդ, N 25–րդ կարասային սրահ, © Պետական Էրմիտաժի արխիվ, ֆոնդ 50:

40–րդ կարասային սրահին կից երկու մառաններում (46–րդ և 47–րդ) պեղումների ընթացքում բացվել են 45 և 32 կարասներ, երրորդ (թիվ 48–րդ) սրահը, որտեղ եղել են առնվազն 30 կարասներ, քանդվել է դեռևս միջնադարում: Հայտնաբերված կարասների վրա առկա են տարողության սեպագիր և հիերոգլիֆ նշումներ, որոնցից մի քանիսը որոշ կարասների վրա ջնջված են: Ուշագրավ է, որ այս սրահների պեղումների ընթացքում պարզ դարձավ, որ այստեղ շահագործումից հնացած կարասները փոխարինվել են նորերով՝ հին կարասի ստորին հատվածը թողնելով հողում: 1957 թվ. հայտնաբերվեց 7–րդ մառանը՝ միջնաբերդի հյուսիսարևմտյան հատվածում՝ 48 կարասներով, որոնց վրա առկա էին միայն հիերոգլիֆներով նշումներ:

Միջնաբերդի երկրորդ հարկում 1955 թ. հայտնաբերվել է բացօթյա մառան՝ 150 կարասներով, որոնցից պահպանվել էին միայն հատակները: Կարասների ծանրության պատճառով մառանի ստորին սենյակն ամբողջությամբ լցված է եղել քարերով: Բացօթյա սրահը թերևս ծառայել է արևի տակ գինեգործական հատուկ գործողությունների համար:

Թեյշեբաինիի միջնաբերդի այլ մառաններից նույնպես հայտնաբերվել են բեկորված և ամբողջական կարասներ *(Նկար 53, 54 ա., բ., գ., դ.)*. միջնաբերդի հյուիսարևելյան հատվածի 7–րդ մառանում հայտնաբերվել են 6 կարասների ստորին հատվածների բեկորներ՝ քունջութի հատիկներով: Միջանցքի դեր կատարող 33–րդ մառանում գտնվել են ութ խոշոր կարասներ, որոնք դրված են եղել գետնին, այդ իսկ պատճառով կարասներից յոթը ջարդված էին, պահպանվել էր միայն մեկը, որն իր ձևով տարբերվում էր 25–րդ և 28–րդ սրահների կարասներից: Կարասի կողքին գտնվել են ծծումբի կտորներ:

Ելնելով Թեյշեբաինիի միջնաբերդում հայտնաբերված 400–ից ավելի կարասների տարողության հանրագումարից՝ դրանցում պահվել է մոտ 400.000 լիտր գինի, որը ստանալու համար անհրաժեշտ էին շուրջ 600 տոննա խաղող և 150 հա խաղողի այգիներ: Ակներև է, որ եթե Հին Հուրնաստանի զարգացման գլխավոր խթանը դարձավ ձիթապտղի մշակումը, ապա Վանի թագավորության պարագայում դա խաղողագործությունն էր, որի շնորհիվ զարգանում էին տնտեսության տարբեր ճյուղերը և արտաքին առևտուրը: Թեյշեբաինիի կարասային սրահները արտացոլում են միջնաբերդի պաշարման ժամանակաշրջանի իրողությունները. կարասային սրահներից միայն մեկում էր պահվում գինի, որոշ կարասներ լցված էին հացահատիկով և այլ մթերքով, դատարկ կարասներում պահվել են զանազան իրեր՝ նաև այլ ամրոցներից բերված: Կարասային սրահներում, գինի պահելուց զատ, իրականացվել են ծեսեր, կենդանիների զոհաբերություններ:



Նկ. 54ա. Կարասի տեղափոխման տեսարան, © Պետական Էրմիտաժի արխիվ, ֆոնդ 50:



Նկ. 54բ. Կարասի տեղափոխման տեսարան, © Պետական Էրմիտաժի արխիվ, ֆոնդ 50:



Նկ. 54գ. Կարասի տեղափոխման տեսարան, © Պետական Էրմիտաժի արխիվ, ֆոնդ 50:




Նկ. 54դ. Կարասի տեղափոխման տեսարան, © Պետական Էրմիտաժի արխիվ, ֆոնդ 50:

ՊՈՒՇԿԻՆԻ ԱՆՎԱՆ ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՄՈՒ ԳՏՆՎՈՂ ԱՄԵՆԱՄԵԾ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԿԱՐԱՍԸ, ՈՐ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է ԷՐԵԲՈՒՆԻՈՒՄ

Անաստասիա Յասենովսկայա

Պուշկինի անվան կերպարվեստի պետական թանգարանում է պահվում բազմաթիվ բեկորներից բաղկացած (153 կտոր) մի մեծ կարաս *(Նկար 55)*, որը հայտնաբերվել է Արին բերդ բլրի վրա գտնվող հին ուրարտական Էրեբունի ամրոցի պեղումներից: Այն թանգարան է տարվել 1959 թ. (թանգարանային առարկայի գույքահամար՝ Ս–454): 1952–1977 թթ. ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի և Պուշկինի անվան կերպարվեստի պետական թանգարանի համատեղ արշավախումբը պեղումներ է իրականացրել Էրեբունի հնավայրի տարածքում: Կարասն օգտագործվել է գինի պահելու համար և աչքի է ընկնում իր արտասովոր չափերով, ինչպես նաև առնվազն չորս շարքով դասավորված խորադիր եռանկյունաձև և ուղղանկյունաձև նախշերով:



Նկ. 55. Էրեբունու, այսպես կոչված, N 13 սենյակից հայտնաբերված կարասը, Պուշկինի անվան կերպարվեստի պետական թանգարան, ցուցիչ՝ Ս–454: Հաջորդիվ՝ Демская А. А. 1968, Кладовые Эребуни, “Сообщения Государственного музея изобразительных искусств имени А.С. Пушкина”, вып. IV, рис. 4:

2017 թ. Պուշկինի թանգարանը և «Գարդարիկա» պատմահնագիտական կենտրոնը թանգարանի մեկենաս Վլադիմիր Քարտաշյանի ֆինանսական աջակցությամբ իրականացրել են համատեղ գիտական նախագիծ[4]: Այն նվիրված էր կարասի եռաչափ մոդելի

[4] Վերականգնման մասին տեսանյութը կարելի է դիտել Պուշկինի թանգարանի կայքէջում՝ http://www.arts-museum.ru/news/archive/2017/12/14/:




Նկ. 56. Կարասի բեկոր՝ մասամբ պահպանված տարողության միավորի արձանագրությամբ՝ [6] a-qar-qi (ակարկի), © Պուշկինի անվան կերպարվեստի պետական թանգարան:




Նկ. 57. Կարասի բեկոր՝ հիերոգլիֆ արձանագրությամբ՝ 9 ակարկի, © Պուշկինի անվան կերպարվեստի պետական թանգարան:


ստեղծմանը և դրա ներքին ծավալի հաշվարկին: Եվ թեև աշխատանքի սկզբում անոթի ամբողջական տեսքը, ծավալը հայտնի չէին, դրա չափերի մասին հնարավոր էր պատկերացում կազմել կարասի վերնամասում արված սեպագիր արձանագրությունից և հիերոգլիֆ նշաններից (համապատասխանաբար 6 և 9 ակարկի) *(Նկար 56, 57)*: Էրեբունուց գտնված մյուս բոլոր կարասների վրա առկա էին 3–7 ակարկիին համապատասխանող նշումներ, այսինքն՝ դրանք ավելի փոքր էին: Խորհրդային գիտնականների կարծիքով՝ 1 ակարկին համապատասխանում էր մոտ 240–250 լիտրի, հետևաբար Պուշկինի թանգարանում պահվող անոթի ընդհանուր ծավալը պետք է հավասար լինի կա՛մ 1440–1500 լիտրի, կա՛մ 2160–2250 լիտրի: Այս ուսումնասիրությունը կարող է լույս սփռել նաև հիմնականում Կարմիր բլուրից հայտնաբերված որոշ կարասների վրա սեպագրով և հիերոգլիֆներով նշված տարողության միավորների անհամապատասխանության խնդրի վրա և պատասխանել այն հիմնական հարցին, թե դրանցից որն էր համապատասխանում կարասի իրական ծավալին: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ ծավալին վերաբերող կրկնակի նշումով անոթները Կարմիր բլուրից հայտնաբերված կարասների թվում չնչին տոկոս են կազմում (7%) (290–ից 21–ը): Սա նշանակում է, որ այդ երևույթն այնքան էլ տարածված չէր:



Նկ. 58. Էրեբունուց հայտնաբերված կարասի եռաչափ վերակազմությունը, © Պուշկինի անվան կերպարվեստի պետական թանգարան, © «Գարդարիկա» պատմական և հնագիտական կենտրոն:



Նկ. 59. Էրեբունուց հայտնաբերված կարասի եռաչափ վերակազմությունը՝ տրամագծերի հաշվարկներով, © Պուշկինի անվան կերպարվեստի պետական թանգարան, © «Գարդարիկա» պատմական և հնագիտական կենտրոն:



Նկ. 60. Էրեբունուց հայտնաբերված կարասի եռաչափ վերակազմությունը՝ տարողության միավորների հաշվարկներով, © Պուշկինի անվան կերպարվեստի պետական թանգարան, © «Գարդարիկա» պատմական և հնագիտական կենտրոն:

Կարասի բեկորները թվայնացվել են եռաչափ սկանավորման մեթոդով՝ 3D Sense Next Gen ձեռքի լազերային սկաների և անհատական համակարգչի միջոցով՝ հիմնվելով ներկառուցված ծրագրաշարի վրա *(Նկար 58)*: Թվայնացվել են ամենամեծ բեկորները (ընդհանուր առմամբ 146 կտոր), որոնք տարբերվում են ձևով, չափերով (10–80 սմ), դեկորատիվ տարրերի առկայությամբ կամ բացակայությամբ: Կարասի եռաչափ վերականգնումն իրականացվել է՝ հաշվի առնելով անոթի դեկորատիվ տարրերի և կառուցվածքային տարրերի առանձնահատկությունները (եզրային հատված, հատակ, իրան): Բեկորների կորության շնորհիվ հնարավոր է եղել վերականգնել կարասի և ուղղահայաց լայնակի կտրվածքի ձևը, ինչպես նաև տրամագիծը: Բարձրությունը 250 սմ էր, տրամագիծը՝ ամենալայն հատվածում մոտ 128 սմ *(Նկար 59)*: Ծավալը հաշվարկվել է՝ հաշվի առնելով ներքին մակերեսի տարածքը՝ օգտագործելով հեղուկի լցավորման մոդելավորման ալգորիթմը, և կազմել է 2145 լիտր *(Նկար 60)*: Այսպիսով, ուսումնասիրության համաձայն, այս անոթի համար որպես ծավալի վերաբերյալ հիմնական նշում պետք է ընդունվի հիերոգլիֆներով արձանագրությունը (9 ակարկի): Այս դեպքում 1 ակարկին հավասար է (2145 : 9) 238,3 լիտրի, ինչը հաստատում է խորհրդային գիտնականների վարկածն առ այն, որ 1 ակարկին հավասար է 240–250 լիտրի:

Հաշվի առնելով այն, որ Կարմիր բլուրից գտնված կարասների վրա առկա նշումների ճնշող մեծամասնությունը հիերոգլիֆային է, և միայն մի քանի անոթներ են պարունակում սեպագիր նշումներ, հիերոգլիֆային նշանները պետք է համարվեն հիմնական նշաններ: Սեպագիր նշաններով, հնարավոր է, արտահայտվում էր անոթի մեջ լցված հեղուկի ծավալը: Այնուամենայնիվ, սա կարող է լիարժեք կերպով հաստատվել միայն Կարմիր բլուրից գտնված կարասների ծավալի ճշգրիտ չափումներով:

Այս պահին Պուշկինի անվան կերպարվեստի պետական թանգարանում առկա վերը հիշատակված կարասը ուրարտական հնավայրերից հայտնաբերված մեզ հայտնի կարասներից ամենամեծն է:

ԱՐԱՄՈՒՍ ԱՄՐՈՑԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԿԱՐԱՍԱՅԻՆ ՍՐԱՀԸ


Վալտեր Կունտներ, Սանդրա Հայնշ, Հայկ Ավետիսյան

Արամուս հնավայրը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի համանուն գյուղից հարավ–արևմուտք՝ Երևանից մոտ 18 կմ հյուսիս–արևելք: Այստեղ առաջին հնագիտական պեղումները սկսվել են 1970–ականներին Էմմա Խանզադյանի գլխավորությամբ, և 1980–ականներին շարունակել է Հայկ Ավետիսյանը: 2004 թվականից ի վեր հայ–ավստրիական արշավախումբը Դաշտային հնագիտական դպրոցի միջազգային ծրագրի շրջանակում հնագիտական հետազոտություններ է իրականացնում Արամուսում: Արամուսը բաղկացած է հինգ հատվածներից, որոնք ընդգրկում են մոտ 10 հեկտար տարածք: Հուշարձանը ժամանակակից Հայաստանի ամենամեծ ուրարտական ամրոցներից է և սերտորեն կապված է Էրեբունու և Կարմիր բլուրի հետ:


Արամուսի հյուսիսային հատվածն ամենից վաղն է թվագրվում: Համաձայն ռադիոածխածնային թվագրման՝ այն հիմնադրվել է Ք. ա. 9–րդ դարի երկրորդ կեսին:

Ըստ Սուրբ Ստեփանոս եկեղեցու մոտ գտնված Էլարի ուրարտական սեպագիր արձանագրության՝ Արամուսը գտնվել է Էթիունի ցեղային համադաշնության Ուլուանի երկրի կազմում: Ամրոցի արևելյան հատվածի պեղումները Արամուսի բնակավայրի պատմության պարբերացման հիմք են տալիս: Այն բաժանված է հինգ ժամանակաշրջանների կամ փուլերի: V և IV փուլերը վերագրվում են ՈՒրարտուի թագավորության ժամանակաշրջանին: III փուլը վերաբերում է Երվանդունիների հայկական թագավորությանը, մինչդեռ II փուլն առնչվում է Աքեմենյան ժամանակաշրջանին: I փուլն էլ փաստում է միջնադարում արևելյան հատվածի կրկնակի օգտագործումը, որը թվագրվում է 11–14–րդ դարերով:

Կենտրոնական հատվածը Արամուսի առավել լավ ուսումնասիրվածն է՝ հատկապես Ք. ա. 7–5–րդ դարերի միջակայքում հուշարձանի բնակեցման հաջորդականությունը փաստելու համատեքստում *(Նկար 61)*: Այս հատվածն ունի մոտ 200 մ երկարություն և 25 մ լայնություն: Այն արևմուտքից հասանելի է մոնումենտալ մուտքի շնորհիվ: Այստեղից կենտրոնական հատվածի երկայնքով ձգվում է մոտ 5,20 մ լայնություն ունեցող բացօթյա ճանապարհ, որից դեպի հյուսիս և հարավ եզերվում են արտաքին պարիսպները: Դրանք էլ որոշ տեղերում ունեն մուտքեր դեպի հնավայրի հյուսիսային և հարավային հատվածները: Միջանկյալ պատերը կենտրոնական հատվածը բաժանում են առանձին մասերի: ZB–III տեղամասում բացված սենյակների խումբը կենտրոնական, հյուսիսային և հարավային հատվածները կապող առանցքն է:



Նկ. 61. Արամուսի ամրոցի կենտրոնական հատվածի հատակագիծը,
© Արամուսի հայ–ավստրիական հնագիտական արշավախումբ:



Նկ. 62. Արամուսի կարասային սրահի հատակագիծը,
© Արամուսի հայ–ավստրիական հնագիտական արշավախումբ:


Մեր ուսումնասիրության համատեքստում սենյակ R2–ն ունի կարևոր նշանակություն: Այն Ք. ա. 8–րդ դարից մինչև Ք. ա. 4–րդ դար ընկած ժամանակահատվածում շարունակել է լինել որպես զետեղարան: Ուրարտական ժամանակաշրջանում սենյակն ունեցել է 6,20 մ երկարություն և 4,70 մ լայնություն: Այս սենյակ կարելի էր մուտք գործել հյուսիսարևմտյան անկյունից *(Նկար 62)*:

Այստեղ կենտրոնական տարածքը մոտ 20 սմ ցածր է: Այն շրջանակված է U–աձև, մինչև 2,30 մ լայնությամբ և 30 սմ բարձրությամբ պատվանդան–հարթակով, որը տարածվում է սենյա–կի պատերի երկայնքով և կառուցված է քարերից ու հում աղյուսներից: Պատվանդան–հարթակի արևելյան հատվածը սալապատված է մոտ 1 մ լայնությամբ հարթ քարերով և կազմում է մեկ այլ մուտք դեպի հյուսիս–արևելք, որը տանում է անմիջապես դեպի հարավ՝ R3 սենյակ:

Պեղումների վերջնական արդյունքները վկայում են, որ այս սենյակի օգտագործման վերջին փուլը վերաբերում է հետուրարտական ժամանակաշրջանին: Այստեղ տասներկու կարասներ իջեցվել և տեղադրվել են հարթակի տարբեր հատվածներում: Մեկ այլ կարաս էլ գտնվել է հա–տակի վրա: Կարասներից երկուսը տիպիկ ուրարտական են՝ կարմիր մակերեսով: Դրանց վրա նորոգումների հետքերը ցույց են տալիս, որ օգտագործվել են բավական երկար ժամանակ: Բոլոր տասներեք կարասներն էլ միջին մեծության են *(Նկար 63)*: Շուրթերի տրամագիծը տատանվում է 25–45 սմ–ի, իսկ հատակինը՝ 20–40 սմ միջև: Հետուրարտական ժամանակաշրջանի կարաս–ները, ի տարբերություն ուրարտականների, ունեն մոխրագույն մակերես: Կարասներն իրարից առանձնացված են քարե շարերով *(Նկար 64)*:

Ռոման Հովսեփյանի կատարած հնաբուսաբանական հետազոտությունների շնորհիվ մշա–կութային շերտից վերցված հողանմուշներում հայտնաբերվել են սերմեր, որոնց մեծ մասը հա–ցազգի մշակաբույսեր են: Գլխավոր արդյունքները մատնանշում են, որ սենյակն առանց որևէ փոփոխության շարունակել է օգտագործվել որպես հաց պատրաստելու համար նախատեսված այլուրի շտեմարան:

Հնագիտական հետազոտությունների արդյունքները մատնանշում են, որ R2 սենյակը աքե–մենյան ժամանակաշրջանում պահպանել է իր գործառույթը, նույնիսկ վերափոխվել է հարթա–կի: Այս սենյակը բարձրացվել է ուրարտական պատերի ենթակառույցների վերին սահմանի մա–կարդակին, որտեղ տեղադրվել են սյան խարիսխներ: Այդ հանգամանքով պայմանավորված՝ R2 սենյակի հարավ–արևմուտքում տեղադրված չորս կարասները վերօգտագործվել են:




Նկ. 63. Արամուսի կարասային սրահից հայտնաբերված կարասներ, © Արամուսի հայ–ավստրիական հնագիտական արշավախումբ:



Նկ. 64 Արամուսի կարասային սրահը, © Արամուսի հայ–ավստրիական հնագիտական արշավախումբ:

ԿԱՐՄԻՐ ԲԼՈՒՐԻՑ ԳՏՆՎԱԾ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՐԽԵՈՄԵՏՐԻԿ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ[5]

Տիլդե դե Կարո, Մոհամմադ Քեշավարզ Դիվկոլաի, Միքայել Բադալյան, Ռոբերտո Դան




Նկար 65. Կարմիր բլուրից գտնված ուրարտական կարասի բեկորը:

Կարմիր բլուրից հայտնաբերված ուրարտական շտեմարանների ու կարասների մասին արդեն իսկ մանրամասն անդրադարձ է կատարվել սույն աշխատության մեջ: Այս համառոտ հոդվածում ներկայացվում են կարասի մեկ բեկորի վերաբերյալ կատարված արխեոմետրիկ վերլուծությունների առաջին արդյունքները: Այս վերլուծություններն իրականացվում են ուրարտական կարասների ուսումնասիրության մեծ նախագծի շրջանակում: Այդ նպատակով վերլուծություններ են իրականացվում Հայաստանի տարբեր ուրարտական հնավայրերից գտնված կարասների բեկորների նմուշների վերաբերյալ: Քննարկվող նմուշը հայտնաբերվել է 2019 թ. Կարմիր բլուր հնավայրի մակերեսին՝ Ռուսա Արգիշթորդու կառուցած Թեյշեբաինի ամրոցի շրջակայքում: Դա կարմրավուն մակերեսով, 2,60 սմ հաստությամբ տիպիկ ուրարտական կարասի բեկոր է *(Նկար 65)*: Խեցեղենի սահմանումը և կավե արտեֆակտների պատրաստման եղանակի վերաբերյալ առաջին վարկածը ձևակերպելու համար իրականացվել է վերը նշված բեկորի միկրոքիմիական և միկրոստրուկտուրային նախնական արխեոմետրիկ հետազոտություն:

Ըստ 2–րդ նկարի՝ բեկորը հաստ կարմիր խեցեղեն է՝ պատրաստված միատարր, ծակոտկեն մակրոբյուրեղային կառուցվածքով և սև ընդգրկումներով:

---

[5] Հոդվածի պատրաստման ընթացքում ցուցաբերած մասնագիտական խորհրդատվության համար մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում << ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի տնօրեն, երկրաբանության դոկտոր Խաչատուր Մելիքսեթյանին:



Նկար 66. Կարմիր բլուրից հայտնաբերված բեկորի մակերեսի (վերևի ձախ կողմի) և կտրվածքի օպտիկական պատկերները:


Սկանավորող էլեկտրոնային մանրադիտակի (ՍԷՄ/SEM) միջոցով արված պատկերները և բեկորի կտրվածքի էներգիայի ցրման սպեկտրոսկոպիական (ԵՑՍ/EDS) սպեկտրները ներկայացված են 3–րդ և 4–րդ նկարներում: ԵՑՍ սպեկտրները ցույց են տալիս խեցաբեկորի քիմիական կազմը:

Աղյուսակ 1–ում ներկայացված տվյալները մատնանշում են, որ խեցաբեկորը պարունակում է թթվածնի (50 %), սիլիցիումի (25 %), ալյումինի (7 %) և երկաթի (5 %) մեծ կոնցենտրացիա և կալցիումի, մագնեզիումի, կալիումի ու նատրիումի ցածր քանակություն:

O*	Na	Mg	Al	Si	K	Ca	Fe
50	1	4	7	25	2	4	5

Գծագիր 1. Խեցաբեկորի իրանի քանակական անալիզ, * կշռային % (քշ %), հարաբերական սխալը ՝ ± 0,2%






Նկար 67. Կարմիր բլուրից հայտնաբերված կարասի բեկորի կտրվածքի՝ սկանավորող էլեկտրոնային մանրադիտակի (ՍԵՄ) պատկերը՝ ստացված հետցրված էլեկտրոնների միջոցով, և ԵՑՍ սպեկտրները:

Խեցեղենի արտադրության գործընթացում վերջնական արտադրանքի որակը բարելավելու համար կավին որոշ նյութեր են ավելացվում, օրինակ՝ յուղազերծիչներ, որոնց նպատակն է նվազեցնել խառնուրդի պլաստիկությունը (օրինակ՝ կվարցը), և հալվածքներ, որոնց շնորհիվ հանքանյութերը միաձուլվում են ավելի ցածր ջերմաստիճանում (ինչպես, օրինակ, դաշտային շպատները և կարբոնատային ապարները):





Նկար 68. Կարմիր բլուրից հայտնաբերված կարասի բեկորի կերամիկական մարմնի՝ հետցրված էլեկտրոնների և էլեկտրոնային միացված տվյալների համակարգի սպեկտրների միջոցով ստացված սկանավորման էլեկտրոնային մանրադիտակի (ՍԷՄ) պատկերը:

Կավի չորացման և թրծման ընթացքում տեղի են ունենում ծավալի կրճատումներ, որոնք ազդում են դրա ծակոտկենության վրա և փոխում պատրաստի արտադրանքի հատկությունները: Ծակոտկենությունը կարող է քայքայել և՛ կառուցվածքը, և՛ մեխանիկական ամրությունը՝ միաժամանակ կանխելով ջերմության հետևանքով առաջացած լայնացումն ու սառեցման ընթացքում տեղի ունեցող նվազումը: Քանի որ սկզբնական թրծման շրջափուլի ընթացքում ջերմաստիճանը բարձրանում է, առարկաները սկսում են քիմիական փոփոխությունների ենթարկվել: Նյութը

100–200°C ջերմաստիճանում աստիճանաբար պլաստիկ վիճակից վերածվում է պինդ նյութի՝ սկզբում գոլորշիացման միջոցով կորցնելով ջուրը: Այնուհետև ջերմաստիճանի բարձրացման պատճառով տեղի են ունենում բյուրեղային ցանցում պարունակվող ջրի գոլորշիացումը (OH– իոնների տեսքով) և երկաթի օքսիդացումը: Սկզբնական քիմիական ռեակցիաները և մշակման փուլում գտնվող կավե հանքանյութերի բյուրեղային ցանցի քայքայումը տեղի են ունենում մոտ 400–500 °C ջերմաստիճանում: Հիմնական ռեակցիաները տեղի են ունենում 650–1000°C ջերմաստիճանում. դրանցից են կարբոնատների և սիլիկատների միջև տարրալուծումը և ռեակցիան: Մոտ 1000 °C ջերմաստիճանում հալման ցածր աստիճանի սիլիկատները (նրանք, որոնք առաջանում են տարրալուծման ընթացքում) հալվում են և պատվում սիլիցիումի հատիկների ու հանքանյութերի վրա՝ նվազեցնելով ծակոտկենությունը:

Վերլուծության ենթարկված խեցաբեկորի քիմիական բաղադրությունը վկայում է կվարցի (SiO_2), հեմատիտի (Fe_2O_3), գելենիտի և/կամ անորտիտի ($CaAl_2Si_2O8$), կալցիտի ($CaCO_3$) և տիտանի օքսիդի (TiO_2) առկայության մասին: Կալցիումի, սիլիցիում–ալյումինատների, գելենիտի և/կամ անորտիտի առկայությունը վկայում է, որ թրծման ջերմաստիճանը մոտ 900 °C է, այնուամենայնիվ, ապակե փուլի բացակայությունը ցույց է տալիս, որ ջերմաստիճանը 1000 °C–ի չի հասել:

Երկաթի օքսիդների առկայությունը խեցաբեկորին հաղորդում է կարմիր գույն, որին առավել բաց երանգ են տալիս տիտանի օքսիդները: Բացի դրանից՝ խեցաբեկորը հոծ է և ունի ցածր ծակոտկենություն, ինչը ցույց է տալիս զանգվածի գազի և հեղուկի համար անթափանցելիությունը:

ԿԱՐԱՍԸ ՀԵՏՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Արմինե Գաբրիելյան

Ուրարտական տերության անկումից հետո՝ Ք. ա. 7–րդ դարի վերջերին, Հայկական լեռնաշխարհում իշխանությունը ժառանգում է հայ Երվանդունիների արքայատոհմը, և Ուրարտական կայսրության հիմքերի վրա ստեղծվում է Երվանդունիների թագավորությունը: Այս ժամանակաշրջանում՝ մինչև Ք. ա. 6–րդ դարի կեսերը, խիստ ակտիվանում են Հին Հայաստանի և Մարաստանի փոխառնչությունները:

Ք. ա. 6–րդ դարի կեսերին Հայաստանն ընկնում է Աքեմենյան տերության գերիշխանության տակ: Ք. ա. 522 թ. Հայաստանը ապստամբում է Աքեմենյան կայսրության գահակալ Դարեհ I–ի դեմ: Աքեմենյան հզոր տիրակալը ստիպված է լինում հինգ արշավանք ձեռնարկել Հայաստանի դեմ: Այս հանգամանքը խոսում է այդ ժամանակաշրջանում Հայաստանում հզոր քաղաքական իշխանության գոյության մասին: Հայաստանն ընդգրկվում է Աքեմենյան կայսրության վարչաքաղաքական համակարգում: Հայերի ապստամբության մասին մանրամասն ներկայացված է Իրանի Բեհսիթունի արձանագրության եռալեզու տեքստերում, որտեղ էլամերեն տարբերակում Հայաստանը հիշատակված է որպես Հարմինույա, բաբելերենում՝ Ուրաշթու, իսկ հին պարսկերենում՝ Արմինա:

Աքեմենյան տերության անկումից հետո Արմենիայի սատրապ Օրոնտաս–Երվանդի տոհմից սերող Երվանդի գլխավորությամբ հայկական անկախ պետության կազմավորումը արդյունք էր հասարակության ներքին վերելքի: Երվանդը Գավգամելայի ճակատամարտում հայկական զորքի առաջնորդներից մեկն էր, որը շարունակում է իշխել Մեծ Հայքում Ք. ա. 331 թվականից հետո՝ մակեդոնացիների կռիվների խառը և խռովահույզ ժամանակաշրջանում: Այդ ժամանակ Արմավիրը դառնում է Երվանդունիների նստավայրը, իսկ Ք. ա. 3–րդ դարի վերջերին կառուցվում է նոր մայրաքաղաք՝ Երվանդաշատը:

Արաքս գետի ձախ ափին գտնվող մեծ, հարթ բարձունքի վրա է տեղակայված Երվանդաշատի որսորդական պալատական համալիրը (Ք.ա. 3–2–րդ դարեր), որը Երվանդ թագավորի նստավայր Երվանդաշատի մի մասն էր: Հուշարձանի նշանակալի և կարևորագույն մասը նրա կորիզը հանդիսացող 24,40 x 24,80 մ չափերի քառակուսի պալատական շինությունն է, որին տարբեր ժամանակաշրջաններում հավելվել են մի շարք օժանդակ և տնտեսական կառույցներ: Հիմնական կառույցի արևելյան պատին կցված է կարասային սրահը՝ մառանը (8,0 x 19,0 մ ներքին չափ–



Նկ. 69. Կարասային սրահ, Երվանդաշատ, 2011 թ., լուսանկարը՝ Արմինե Գաբրիելյանի:

սերով), որտեղ պեղումներով վավերացվել են կավածեփ հատակի մեջ միմյանցից 40–50 սմ հեռավորությամբ իջեցված 36 մեծադիր կարասներ *(Նկար 69)*: Դրանք դեկորատիվ հարդարանքով աղերսվում են ուրարտական ժամանակաշրջանի կարասներին (Կարմիր բլուր, Այանիս, Ներքին Խնձոր (Քայալը դերե)). ունեն հարթ կտրված շուրթեր, պսակները ձևավորված են երբեմն կրկնակի պարանահյուս, գալարուն զարդագոտիներով, իսկ իրանի ուսին և լայն հատվածում ունեն



Նկ. 70. Երվանդաշատի կարասային սրահի կարասներից մեկը, 2011 թ., լուսանկարը՝ Արմինե Գաբրիելյանի:

ուղղանկյուն և եռանկյուն փոսորակներ *(Նկար 70)*: Այս կարասներից մի քանիսը կրկնակի են, ինչը վկայում է նրա մասին, որ օգտագործելուց որոշ ժամանակ անց՝ հավանաբար Արտաշեսյանների օրոք (Ք.ա. 2–1–ին դարեր), կարասների վերգետնյա հատվածները կոտրվել, հեռացվել են, և դրանց մեջ իջեցվել են նոր, ավելի փոքրաչափ կարասներ: Երկրորդ փուլի կարասները հարթ նստուկով, դեպի վեր լայնացող իրանով, դուրս ձգված շուրթով անոթներ են, որոնց իրանի ամենալայն մասի տրամագիծը տատանվում է 86–126 սմ: Դրանք հարուստ են դեկորատիվ հարդարանքով. պսակները զարդարված են վերադիր ոլորուն կամ պարանահյուս զարդերով, իսկ իրանի լայն հատվածը գոտևորող մասերը՝ պարզ ժապավենաձև, փոքր–ինչ բարձրադիր զարդամոտիվներով *(Նկար 71)*: Այդ մոտիվներն աղերսվում են Հայաստանի անտիկ հուշարձաններից հայտնաբերված կարասների զարդամոտիվներին: Դրանցից որոշակիորեն տարբերվում է պսակի վրա հանդիպող վերադիր ուռուցիկ, վրան զիգզագաձև ատամնավոր նախշերով զարդամոտիվը, որն առայժմ վավերացված է միայն Երվանդաշատի հուշարձանում:

Մեծ կարասների մեջ իջեցված բոլոր փոքր կարասներում արձանագրվել է մեծ քանակությամբ սպիտակ կարծրացած նստվածք (նստվածքի հաստությունը տատանվում է 10–15 մմ)՝ առաջացած գինու երկար պահպանությունից, ինչը վկայում է կարասների անընդմեջ օգտագործման մասին:

Հայկական լեռնաշխարհում կարասներով պահեստային սրահներ՝ մառաններ, հայտնի են դեռևս ուրարտական ժամանակաշրջանից՝ Արին բերդից, Արգիշթիխինիլիից, Արմավիրից, Կարմիր բլուրից, Հայկաբերդից, Այանիսից, Ներքին Խնձոր (Քայալը դերե) ամրոցից և այլն: Չնայած այն հանգամանքին, որ Հայաստանի՝ անտիկ ժամանակաշրջանով թվագրվող հուշարձաններում առատ են կարասային թաղումների, կարասների և դրանց բեկորների գտածոները, այնուամենայնիվ, այդ շրջանի կարասային սրահ դեռևս չէր հայտնաբերվել:

Այսպիսով՝ Երվանդաշատի հուշարձանում բացված մառանը վկայում է զարգացած տնտեսության, մասնավորաբար՝ զարգացած այգեգործության, խաղողի մեծածավալ մշակության և գինու արտադրության մասին, ինչպես նաև ցույց է տալիս ուրարտական ավանդույթների հետ կապն ու դրանց ժառանգորդ լինելը:



Նկ. 71 Երվանդաշատ, Կարասային սրահում ֆիքսված կրկնակի կարասները, 2011 թ., լուսանկարը՝ Արմինե Գաբրիելյանի:

ԿԱՐԱՍԱՅԻՆ ԹԱՂՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀՈՒՄ

Արմինե Գաբրիելյան

Հանգուցյալին կարասի մեջ թաղելը տարբեր ժամանակաշրջաններում ընդունված է եղել բազմաթիվ ժողովուրդների թաղման ծեսում: Հայկական լեռնաշխարհում վաղագույն անոթային թաղումները հայտնաբերվել են Արենիից (Ք.ա. 4000–3500 թթ.): Միևնույն ժամանակաշրջանով են թվագրվում նաև մինչդինաստիական եգիպտոսի կարասային թաղումները: Ք.ա. 3–րդ հազարամյակից սկսած՝ դրանք հանդիպում են Միջագետքում, իսկ Ք.ա. 3–2–րդ հազարամյակներում լայն տարածում են ստանում Փոքր Ասիայում: Որոշակի դադարից հետո՝ Ք.ա. 7–րդ դարից, Փոքր Ասիայում կրկին հայտնվում են կարասային թաղումները: Արենիից հետո Հայաստանում կարասային թաղումներ արձանագրվել են Արգիշթիխինիլիում և թվագրվում են ուրարտական ու հետուրարտական ժամանակաշրջաններով: Անտիկ շրջանում այս թաղումները գրավում են ընդարձակ մի տարածաշրջան՝ ներառելով Անդրկովկասը՝ ընդհուպ մինչև Կուր գետ, տարբեր տարածքներում ձեռք բերելով որոշակի առանձնահատկություններ:

Հայկական լեռնաշխարհում հելլենիստական դարաշրջանում թաղման տարատեսակ կառույցների (հիմնահողային, սալարկղային, քարարկղային և այլ) շարքում կարասային թաղումները գերիշխող են դառնում, իսկ Ք.ա. 1–ին դարում դառնում են զանգվածային և հանդիպում ինչպես Հայաստանի (Արտաշատ, Գառնի, Դվին, Վաղարշապատ, Ավան, Շիրակավան, Բենիամին, Մաստարա, Ագարակ, Արցախի Տիգրանակերտ և այլն), այնպես էլ հարևան Վրաստանի և Կովկասյան Աղվանքի անտիկ դամբարանադաշտերում:

Կարասային թաղումներում հիմնականում դրված են լինում հորիզոնական դիրքով *(Նկար 72)*, թեև հանդիպում են նաև ուղղահայաց (Սևանա լճի ավազան) և շատ հազվադեպ՝ բերանքսիվայր դրված կարասներ (Ախթալա): Երբեմն դրանք ներառվում են այլ կառույցների մեջ (քարարկղ, կրոմլեխ. Օշական, Մաստարա, Նոր Արմավիր): Կարասային թաղման առավել հետաքրքիր ձևերից են Գառնիում, Սևանի ավազանում և Մուխանաթ–Թափայում հայտնաբերված երկկարասանի թաղումները: Կարասները, որպես կանոն, երկրի կողմերի նկատմամբ չունեն հստակ ուղղվածություն:

Հանգուցյալին անոթի մեջ են տեղավորել կարասի ուսի և շուրթի մի մասը կամ հատակը կոտրելուց հետո, այնուհետև բեկորները տեղադրել են իրենց տեղը, որից հետո կարասի շուրթը փակել են հարթ սալով կամ այլ անոթների բեկորներով:



Նկ. 72. Կարասային թաղում, Արցախի Տիգրանակերտ, 2018 թ.,
© Արցախի հնագիտական արշավախմբի արխիվ:

Կարասներում հանգուցյալին թաղել են կծկված դիրքով՝ աջ կամ ձախ կողքի վրա *(Նկար 73)*: Կարասն ինքնին նմանեցվել է ձվի և արգանդի՝ կապվելով ծննդյան խորհրդի հետ: Ըստ հավատալիքների՝ կարասում սաղմնային դիրքով թաղված հանգուցյալը պետք է վերածնվեր այլ աշխարհում:

Ուղեկցող գույքը, որպես կանոն, դրվում էր անոթի ներսում՝ անհատի դեմքի և ձեռքերի մոտ: Սակայն հանդիպում են նաև թաղման անոթի նստուկին կամ բերանին կից դրված տարատեսակ փոքրաչափ անոթներ (ծորակավոր անոթ, տափաշիշ, օյնոխոյա՝ հարթ նստուկով, ուռուցիկ իրանով, կարճ վզով, երեքնուկաձև շուրթով, մի ծայրով՝ շուրթին, մյուսով՝ ուսին ամրացրած, աղեղնաձև կանթով անոթներ): Այս երևույթը հանդիպում է հատկապես Արցախի և Ուտիքի՝ մինչև Կուր ընկած տափաստանային հուշարձաններում: Կարասային թաղումներից մի քանիսի շրջակայքում երբեմն արձանագրվում են թաղման ծեսի մաս կազմող հոգեհացի հետքեր՝ ներկայացված կենդանու ոսկորներ և բեկոտված խեցեղեն պարունակող հողախառն մոխրաշերտի ձևով:

Իբրև թաղման անոթ օգտագործվում էին տարբեր չափերի կարասներ, ձձումներ, ամֆորա (նեղ և երկար վզով, դեպի ներքև սեղմվող իրանով, վերձիգ զույգ բռնակներով անոթ՝ նախատեսված հիմնականում գինի և ձիթապտղի յուղ տեղափոխելու համար), մանկահասակ երեխաներին հուղարկավորում էին երկկանթ կճուճների մեջ: Որպես կանոն, դրանք տնտեսության մեջ օգտագործված անոթներ են, որոնցից մի քանիսը նույնիսկ կարկատված են և կրում են վերօգտագործման հետքեր: Ժամանակի ընթացքում տնտեսության մեջ կիրառվող կարասները ծիսական նշանակություն էին ստանում, քանի որ ընտանիքի համար կարևորվել էին՝ պահելով սնունդ, մթերք, որն ինքնին բարգավաճում և ծաղկում է խորհրդանշում: Տան անդամներից մեկի հուղարկավորումը նման անոթներում կարող էր մահացածի և ընտանիքի մյուս անդամների միջև կապը պահելու միջոց լինել:


Այդուհանդերձ, երբեմն հանդիպում են նաև շքեղ ձևավորված գունազարդ կարասներ, որոնք պատրաստվել կամ գունազարդվել են հատուկ թաղման ծեսի համար: Դրանց շարքում են Արցախի Տիգրանակերտի և Մարտակերտի գունազարդ կարասները:

Տիգրանակերտի Արևելյան դամբարանադաշտից հայտնաբերված, կարասային թաղման անոթ հանդիսացող գունազարդ կարասը հարթ նստուկով, լայն բերանով և տափակ, դուրս ձգված շուրթով, երկու մեծ բռնակներով անոթ է (բարձրությունը՝ 0,80 մ, լայնությունը՝ 0,60 մ), որի բաց մակերեսին կարմիր գույնով ներկայացված է եղջերուների որսի տեսարան՝ Կենաց ծառի ֆոնին *(Նկար 74)*:

Կարասի բռնակների և շուրթի մակերեսները ներկված են կարմիր: Վզի և իրանի միացումը ընդգծված է երկու կարմիր գծերով և մատնասեղմումով զարդարված ուռուցիկ գոտիով: Դրանից



Նկ. 73. Կարասային թաղում, Արցախի Տիգրանակերտ, 2017 թ.,
© Արցախի հնագիտական արշավախմբի արխիվ:



Նկ. 74. Կարասային թաղման գունազարդ կարաս, Արցախի Տիգրանակերտ, 2018 թ.,
© Արցախի հնագիտական արշավախմբի արխիվ:

ցած՝ անոթի իրանը վերևից մինչև միջնամասը, նկարազարդված է նույնատիպ կարմիր հինգ գոտիներով: Անոթը զարդարող երեք վերին հորիզոնական գոտիներից յուրաքանչյուրը հարդարված է մեկ զարդամոտիվով. առաջինը՝ աստղանման, ճառագայթավոր նշաններով, երկրորդը՝ գագաթները վեր ուղղած եռանկյունիներով, որոնք երբեմն հատվում են՝ հիշեցնելով լեռնային լանդշաֆտ: Այս գոտին ամբողջությամբ լցված է կետիկներով, որը կարող էր անձրև խորհրդանշել: Եվ վերջապես, երրորդը հարդարված է խիստ պայմանական կատարում ունեցող թռչնաձև պատկերով: Հաջորդ գոտին պատկերանկարային է, իսկ ստորինը ձևավորված է հոծ ներկած կամարաշարով:

Այս կարասի իրանի ամենալայն հատվածի վրա պատկերված է եղջերուների որսի տեսարան: Սյուժետային հորինվածքի առանցքը սփռված փարթամ ճյուղերով ծառն է: Ֆիգուրատիվ գոտու ամբողջ բարձրությունը զբաղեցրած Կենաց ծառը պատկերված է ուղիղ առանցքի երկու կողմերում վեցական փշատերև երկար ճյուղերով: Կարասի վրա պատկերված ծառը կարծես ցույց է տալիս անտառապատ լանդշաֆտը, որը հարմար բնամիջավայր էր եղջերուների ապրելու համար:

Ահա այս ծառից էլ սկսվում է գործողությունը, որի բոլոր 12 մասնակիցները շարժվում են մի ուղղությամբ (ձախից աջ)՝ կազմելով յուրօրինակ մոգական շրջան: Նիզակներով զինված հեծյալ և հետիոտն որսորդները շների ուղեկցությամբ հետապնդում են եղջերուներին: Որսի տեսարանում պատկերված են նաև խոշոր մարմնով, երկար ոտքերով և լայն բացված թաթերով երկու գայլակերպ կենդանիներ: Դրանցից մեկն արդեն հալածված է շների կողմից և խոցված՝ հետիոտնի նիզակով:

Մյուս՝ գունազարդ կարասը պատահաբար գտնվել է 2013 թ. Մարտակերտում ջրագծի անցկացման ժամանակ (պահպանված մասի բարձրությունը՝ 0,57 մ, նստուկի տրամագիծը՝ 0,15 մ): Մինչև վիզը վերականգնած անոթի բաց դեղնադարչնագույն ուռուցիկ իրանը վզից ցած զարդարված է երկու զարդագոտիներով, որոնցից առաջինը ներկայացնում է մարդկանց, եղջերուների, այծերի և շների ռիթմիկ հերթագայություն: Ինը կենդանիներից բաղկացած շարքի վերջում երկար, մինչև սրունքները հասնող մորթե հագուստով երկու մարդկային կերպարանք է պատկերված: Հագուստի փեշերը կենդանիների վերջույթներ են, դրանց արանքում երևում են մարդկային կերպարանքների ոտքերը: Շարքում վերջից երրորդը գնացող արու եղջերուն առանձնանում է մարմնի խոշոր չափերով և ճյուղավորված եղջյուրներով:

Բոլոր պատկերները ստատիկ են. այստեղ կա գործողություն, բայց չկա դինամիկա: Որսի տեսարաններին այնքան բնորոշ՝ օդում սավառնող նիզակների և վիրավոր կենդանիների տեսարանների բացակայությունը, ինչպես նաև երկար հանդերձանք կրող մարդկային ստատիկ ֆիգուրների առկայությունը թույլ են տալիս մտածել, որ կարասի վրա պատկերված է ծիսական երթի տեսարան:

Դրանից ցած հաջորդ գոտին կազմված է կարմիր ներկով կատարված, միմյանց ներգծված, գագաթները վեր ուղղված եռանկյունիներից, որոնք լեռնային լանդշաֆտ են պատկերում, ինչն էլ ավելի խորհրդավորություն է հաղորդում այս հորինվածքին:

Հայկական լեռնաշխարհի անտիկ շրջանի հուշարձաններում վավերացված կարասային թաղումների ուսումնասիրությունը թույլ է տալիս փաստագրել թաղման կարասային ձևի կիրառումը Ք.ա. 6–րդ դարի վերջից մինչև Ք. ա. 3–րդ դար: Վերոնշյալ կարասային թաղումների գույքի հետազոտությունը ցույց է տալիս, որ դրանք չեն տարբերվում այդ դամբարանադաշտերի մյուս կառույցաձևերի թաղումների ուղեկցող գույքից՝ մատնանշելով Հայաստանի համաժամանակյա հուշարձանների բնակչության թաղման ծեսի և դրան առնչվող արարողությունների միատիպությունը և ժողովրդի միատարրությունը:

ՆՈՐ ԱՐՄԱՎԻՐ ՀՆԱՎԱՅՐՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԿԱՐԱՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սիմոն Հմայակյան

Նոր Արմավիր գյուղը գտնվում է Արմավիրի մարզում՝ մարզկենտրոնից 9–10 կմ հարավ–արևմուտք: Նոր Արմավիրի տարածքում հայտնաբերված, Ք.ա. 7–6–րդ դարերով թվագրվող գյուղատեղին և դամբարանադաշտը Արգիշթիխինիլի անվանված հուշարձանախմբի մաս են կազմում: Գյուղի այժմյան հողատարածքները բնակեցվել են դեռևս Ք.ա. 3–րդ հազարամյակի սկզբում: Ք.ա. 8–րդ դարում այստեղ հիմնվում է Արգիշթիխինիլի քաղաքը, որի դամբարանադաշտը գտնվում է Նոր Արմավիր գյուղի շինությունների տակ և տնամերձ հողատարածքներում:



Նկ. 75ա. Նոր Արմավիր, Խ–6 փոսորակում պեղված կարասային և հիմնահողային թաղումները, © Նոր Արմավիրի հնագիտական արշավախումբ:



Նկ. 75բ. Նոր Արմավիր, Խ–6 փոսորակում պեղված կարասային և հիմնահողային թաղումները, © Նոր Արմավիրի հնագիտական արշավախումբ:



Նկ. 76 ա., բ., Նոր Արմավիր, մեծ կարաս,
© Նոր Արմավիրի հնագիտական արշավախումբ:

Նոր Արմավիրում գտնված կարասները տարբեր դարաշրջանների են, տարբեր չափերի և տարբեր կիրառություններ են ունեցել: Հայտնաբերվել են հիմնականում երեք տեղամասերից՝ 1. Արգիշթիխինիլիի արևմտյան ամրոցից, 2. Նոր Արմավիր գյուղի տնամերձ հողատարածքներից *(Նկար 75 ա., բ., 77 ա., բ., 78)*, 3. Պապի գյոլ տեղամասից *(Նկար 76 ա, բ)*:

Պայմանականորեն կարասները կարելի է բաժանել երեք տեսակների.


1. **Փոքր կարասներ** (մինչև 200 լիտր տարողությամբ): Ունեն 40–60 սմ բարձրություն, շուրջ 0,5 մետր իրանի տրամագիծ: Նոր Արմավիրում այս չափերի կարասներն օգտագործված են հիմնականում որպես դիանոթներ, որոնցում հուղարկավորել են դեռահասների: Նման կարասներից միայն մեկն է, որ ունի ավելի ուշ թվագրություն՝ Ք.ա. 4–3–րդ դարեր: Արտաքինից դարչնագույն է, ունի երեք կանթ: Այս կարասը, ի տարբերություն մյուսների, որոնց համար որպես խուփ են ծառայել խոշոր թասերը կամ քրեղանները, ծածկված էր ճեղքված տուֆ քարով:

2. Մեծ կարասներ (200–600 լիտր): Այս տեսակի կարասներն արտաքինից լինում են սև, դեղին և աղյուսագույն: Գոտեզարդ են, կարող են ունենալ փորագիր փոքրիկ պատկերներ. մեկ դեպքում ունի գինու մեծ կարասներին բնորոշ քառակուսի կամ եռանկյունաձև ոչ խորունկ սեղմվածքներ: Այսպիսի կարասներից երեքը ծառայել են որպես դիանոթներ: Դրանցից մեկում հուղարկավորված էին չորս անձ, երկրորդում և երրորդում՝ կանայք՝ իրենց զարդերով և գույքով: Կարասներից մեկը, օրինակ, որի մեջ հուղարկավորված էր, այսպես կոչված, «հեծյալ կինը», ունի հետևյալ չափերը. բարձրությունը 157 սմ է, իրանի պարագիծը՝ 288 սմ, հատակի պարագիծը՝ 88 սմ, շուրթի արտաքին տրամագիծը՝ 60 սմ, իսկ ներքինը՝ 50 սմ, շուրթի հաստությունը՝ 10 սմ: Կշռում է 182 կգ: Ուշագրավ է, որ կարասը թաց վիճակում ուներ այլ երանգավորում՝ բալագույնին մոտ: Չորանալուց հետո գույնը փոխվել էր: Կարասի խեցին բարակ է: Չնայած այն հանգամանքին, որ արտաքինից կարասն ուներ եռանկյունաձև խորունկ ճզմվածքներ, այն նախատեսված չէր գինի պահելու համար: Դրա վրա կային թրծումից հետո արված անկանոն գծեր:

3. Խոշոր կարասներ (600–1000 լիտր տարողությամբ): Գտնվել են միայն միջնաբերդի տարածքից: Դեղնավուն և աղյուսագույն են, անգոբապատ, հաստաբեստ պատերով, լայն շուրթերով, գոտեզարդ են, ունեն քառանկյուն և եռանկյունաձև սեղմվածքներ, սեպագիր և հիերոգլիֆ չափի նշաններ: Այսպիսի կարասները ծառայել են հիմնականում գինի պահելու համար և դրված են եղել մառաններում: Խոշոր կարասները վկայում են տվյալ բնակավայրում գոյություն ունեցող պետական տնտեսության առկայության մասին, ինչպիսին էր Արգիշթիխինիլի քաղաքը:



Նկ. 77ա. Նոր Արմավիր, ծածկով կարաս, մանկան կարասային թաղում,
© Նոր Արմավիրի հնագիտական արշավախումբ:



Նկ. 77բ. Նոր Արմավիր, մանկան կարասային թաղման չափագրությունը,
© Նոր Արմավիրի հնագիտական արշավախումբ:



Նկ. 78. Նոր Արմավիր, ծածկով կարաս, © Նոր Արմավիրի հնագիտական արշավախումբ:

ԿԱՐԱՍԸ ԱՆՏԻԿ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Արմինե Գաբրիելյան

Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներից հետո՝ Ք.ա. 4–1–ին դարերում, Միջերկրական ծովի արևելյան մասում, Մերձավոր և Միջին Արևելքում հունական և տեղական մշակույթների համադրությամբ ձևավորվում է հելլենիստական մշակույթը:

Հայաստանը ևս հաղորդակից է դառնում մշակութային այս նոր զարգացմանը: Երկիրն ապրում է տնտեսական վերելք, հայոց արքաները հիմնում են նկատելիորեն հելլենիստական բնույթ ունեցող զգալի թվով քաղաքներ և դրանցից մի քանիսը կոչում իրենց անուններով՝ Արշամաշատ, Արտաշատ, Տիգրանակերտ:

Զարգանում են արհեստներն ու առևտուրը, ընդարձակվում են երկրի շփումներն ու կապերը հարևան երկրների հետ: Այս ամենը հայ ժողովրդի դարավոր մշակութային ավանդույթների հետ դարձան այն հաստատուն պատվանդանը, որի վրա բարձրացավ տվյալ ժամանակաշրջանի Հայաստանի մշակույթը: Այդ մշակույթի զարգացմանը մեծապես նպաստեցին միավորված հայկական պետականության առաջացումն ու զարգացումը Ք.ա. 2–1–ին դարերում և երկրի անկախության պահպանումը 1–3–րդ դարերում (ուշ անտիկ):

Հելլենիստական և ուշ անտիկ ժամանակաշրջանի կարասներն ուրարտականից տարբերվում են ավելի փոքր չափերով, հարթ հատակով և ողորկ իրանով *(Նկար 79, 80)*: Ք.ա. 2–րդ դարից սկսած՝ կարասների իրանների վերին հատվածները հարդարվում են հարթ ժապավենաձև հարդարանքով, որոնք Ք.ա. 1–ին դարում սկսում են զարդարել փոսիկների շարքից կազմված, պարանահյուս կամ ուռուցիկ զարդագոտիներով: Այդ ժամանակաշրջանի կարասների համար բնորոշ են դեպի դուրս հակված, լայն, կլորավուն շուրթերը: Ք.ա. 1–ին դարի կարասների պսակների վրա հանդիպում են ռելիեֆ գոտիներ, որոնք զարդարված են սեղմումով իրականացված փոսիկներով:

Հեղուկ և սորուն մթերք պահելու և մշակելու համար նախատեսված կարասներն առատորեն հայտնաբերվում են Հայաստանի՝ անտիկ շրջանով թվագրվող բոլոր հուշարձաններից: Դրանք ըստ չափերի բաժանվում են երեք խմբի՝ մեծ, միջին և փոքր: **Մեծ կարասների** մեջ պայմանականորեն կարելի է ընդգրկել այն կարասները, որոնց բարձրությունը 150 սմ է և ավելի, շուրթի տրամագիծը՝ 35–50 սմ, նստուկինը՝ 17–26 սմ: **Միջին չափի կարասների** բարձրությունը 90–150 սմ է, շուրթի տրամագիծը՝ 20–45 սմ, նստուկինը՝ 15–20 սմ: **Փոքր կարասների** կամ **ծափերի** բարձրությունը տատանվում է 60–90 սմ–ի, շուրթի տրամագիծը՝ 25–30 սմ–ի, նստուկինը՝ 15–17 սմ–ի միջև:



Նկ. 79. Անտիկ շրջանի կարաս, Մաստարա, 2017 թ.: Հաջորդիվ՝ Karapetyan I., Gabrielyan A., Melikyan V., Hakhverdyan A., The Jar Burials of the Classical Period of Mastara, Review of Armenian Studies, 2022, pp. 93–104, Tab. 5/4:



Նկ. 80. Անտիկ շրջանի կարաս, Մաստարա, 2017 թ.: Հաջորդիվ՝ The Jar Burials of the Classical Period of Mastara, Review of Armenian Studies, 2022, pp. 93–104, Tab. 5/5:

Փոքրաչափ կարասների (**ծափերի)** անզարդ օրինակները, ըստ ամենայնի, կիրառվում էին մթերքի (յուղ, կաթ, թան, մեղր) ոչ մեծ քանակություն պահելու համար: Ծափով կերակուր չէին եփում: Հնարավոր է, որ հետուրարտական շրջանում դրանք կիրառվել են նաև գարեջուր պահելու համար, քանի որ Ուրարտուի խեցեղենին այդքան բնորոշ սիգարաձև անոթները դեռևս չեն հանդիպել ուշ հելլենիստական ժամանակաշրջանի խեցեղենի մեջ:

Զարդարված ծափերը կիրառվել են հանդիսությունների ժամանակ խմիչք մատուցելու համար և հայտնաբերվել են մյուս կարասների հետ ինչպես Հայաստանի համաժամանակյա հուշարձաններից, այնպես էլ հարևան երկրների հուշարձանների՝ աքեմենյան և ուշ հելլենիստական շերտերից:

Ըստ շուրթի և պսակի լուծումների՝ վերոնշյալ կարասները լինում են երկու տիպի՝ թմբիկավոր և հարթ կտրած շուրթերով:

Թմբիկավոր շուրթերով կարասները հարթ նստուկով, հաստապատ (2,0–2,5 սմ) կողերով, ուռուցիկ իրանի սահուն անցումներով անոթներ են, որոնց կլորավուն շուրթերը հանգչում են կարճ վզի վրա: Երբեմն էլ ուռուցիկ իրանը սկսվում է անմիջապես պսակի տակից: Կարճ վզից անմիջապես անցումն ուռուցիկ իրանին բնորոշ է դառնում ուշ հելլենիստական բոլոր կարասների համար: Սրանք բաց շագանակագույն են, արտաքին և ներքին մակերեսը կոկված է և թեթև փայլեցված: Թրծումը հավասարաչափ է: Կարասների իրանները հաճախ զարդարված են դրանց ամենալայն հատվածով անցնող մեկ կամ մի քանի ուռուցիկ և պարանահյուս զարդագոտիներով:

Հարթ կտրած շուրթերով կարասներն ունեն հարթ նստուկից դեպի վեր լայնացող իրան, որը ներճկումով վերածվում է ինչպես բարձր, այնպես էլ կարճ վզի: Դրա վրա սահուն կերպով նստած է դեպի դուրս լայնացող հորիզոնական, ուղիղ կտրած շուրթը. այդ կարասների մի մասն ունի շրթեզրին կամ տակը մատնասեղմումով արված զարդափոսիկներ, իսկ իրանի լայն մասում դրված են սեղմումով արված ալիքանախշ կամ պարանահյուս զարդագոտիներ: Այս խմբի կարասներն աչքի են ընկնում կավի բաղադրության որակով, համասեռությամբ, խեցու բարձրորակ մշակմամբ և ամրությամբ: Դրանց արտաքին մակերեսը հիմնականում դարչնագույն կամ կարմրավուն է, թեև հազվադեպ հանդիպում են նաև գորշ գույնի կարասների բեկորներ: Կարասների այս երկու տեսակները հայտնի են Հայաստանի և Անդրկովկասի համարյա բոլոր հնավայրերից և պահպանվում են նաև վաղ միջնադարում: Ոչ հստակ շերտագրությամբ անտիկ և վաղմիջնադարյան օրինակները շատ դժվար է տարանջատել: Փռված, լայն շուրթով, միջին տարողության կարասների մի մասը գունազարդված է:

Կարասների՝ վերը նկարագրված օրինակները լինում են նաև կանթավոր: Լայն, հարթ կամ ուղղահայաց կանելյուրներով հարդարված կանթերով կարասներ գտնվել են Գառնիից, անտիկ Շիրակավանից և Երվանդաշատից: Երկկանթ գունազարդ կարաս հայտնի է Ավանից: Բռնակավոր կարասները, լինելով տոնական անոթներ, հաճախ ունեցել են հարուստ դեկորատիվ հարդարանք, ինչպես, օրինակ, Գառնիի կարասը: Այն հարթ հատակով, գնդաձև իրանով, նեղ վզով և դեպի դուրս հակված կլոր շուրթով խոշոր անոթ է, որն ունի անգոբապատ, փայլեցված մակերես (բարձրությունը՝ 58 սմ, իրանի տրամագիծը՝ 62 սմ): Գառնիի կարասի իրանը գոտևորում են

նկարազարդ ցանցկեն, ալեձև, հոծ և ներգծված եռանկյունիներից կազմված զարդամոտիվները, որոնց բնույթն ու կատարման եղանակը հնավանդ են և աղերսվում են Հայաստանի Ք.ա. 2–1–ին հազարամյակների գունազարդ խեցեղենի զարդահարդարմանը: Իր դեկորատիվ հարդարանքով առանձնանում է Արտաշատից հայտնաբերված մեկ այլ կարաս (բարձրությունը՝ 72 սմ, իրանի տրամագիծը՝ 56 սմ): Այն ևս հարթ հատակով, կոնաձև իրանով, լայն պարանոցով և դեպի դուրս պտտած կլոր շուրթով երկկանթ անոթ է, որի կարմիր անգոբապատ իրանի լայն հատվածում ծեփման և վերադրման տեխնիկայով ներկայացված է ծիսական որսի տեսարան: Հեծյալ որսորդը շների ուղեկցությամբ հետապնդում է ազնվացեղ եղջերուին և այծյամներին: Հեծյալը մորուքավոր է և ունի խոշոր քիթ: Աչքերը նշված են փոսիկներով, գլխին սաղավարտ է: Եղջերուների գլուխներին՝ բազմաճյուղ, իսկ այծյամների գլուխներին դեպի հետ կեռված երկար եղջյուրներ են:

Ֆիգուրատիվ հորինվածքներով են հարդարված նաև Արցախի Տիգրանակերտի Արևելյան դամբարանադաշտից և Մարտակերտից հայտնաբերված շքեղ գունազարդված կարասները:

Կենցաղում և տնտեսության մեջ օգտագործվող կարասները հաճախ կիրառվել են նաև իբրև թաղման անոթներ Հայաստանում և նրա հարակից երկրներում անտիկ շրջանում տարածում գտած կարասային թաղումներում:

ԿԱՐԱՍԻ ՖԵՆՈՄԵՆԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

Ավետիս Գրիգորյան

Ներածություն

Հայաստանի հնագիտական հուշարձանների պեղումներով հայտնաբերված գտածոների տեսականիում ամենամեծաթիվը կավե տարբեր անոթներն են և հատկապես դրանց բեկորները: Կավե գտածոների թվում զգալի քանակություն են կազմում տարատեսակ կարասները, որոնք, ինչպես ավելի վաղ դարաշրջաններում, միջնադարում ևս մեծ մասամբ նախատեսված են եղել հեղուկների և չոր մթերքի երկարաժամկետ պահպանման և/կամ տեղափոխման համար: Յուրաքանչյուր դարաշրջանի, նաև միջնադարի տարբեր փուլերի համար բնորոշ են եղել կարասների ընդունված ձևեր, որոնք կապված են այդ ժամանակի տեխնոլոգիական հնարավորությունների, ճաշակի, վարպետների հնարամտության և այլ գործոնների հետ: Հայաստանի տարբեր հնավայրերից հայտնաբերված կարասների տեսականին թույլ է տալիս դիտարկել կարասների ձևերի զարգացումը միջնադարի տարբեր փուլերում և կատարել որոշ ընդհանրացումներ:

Ստորև ներկայացնում ենք միջնադարյան կարասների ձևաբանական և պատկերագրական առանձնահատկությունները, պատրաստման տեխնիկան, կիրառական նշանակությունները և թվագրության խնդիրները:

Միջնադարյան կարասի կառուցվածքը և պատկերագրությունը

Հայաստանի միջնադարյան կարասները սովորաբար ունեն 50–70 սմ միջին բարձրություն, մոտ 30 սմ բերանի, 50 սմ գոտկատեղի և 20 սմ հատակի տրամագիծ, 40– 100 լ միջին տարողություն: Կարասներն առանց բռնակի են, երբեմն 2 կամ 4, հազվադեպ նաև 6 բռնակներով:

Հայաստանի վաղ միջնադարյան ժամանակաշրջանի (5–9–րդ դդ.) կարասների լավագույն օրինակները հայտնի են Դվինից: Դրանք հարթ կամ ելուստաձև հատակով, եղեգնազարդ գոտիներով, գնդաձև իրանով և լայն պսակով մեծ անոթներ են: Որպես կանոն, կարասներն արտաքուստ լավ մշակված են, ունեն բաց դեղնավուն գույն, փայլեցված են և արտաքին տեսքով հիշեցնում են անտիկ դարաշրջանի նմանատիպ կարասները: Որոշ նմուշներ ունեն հայատառ արձանագրություններ: Դվինի պեղումներով հայտնաբերված մի կարասի բեկորի վրա պատ–

կերված են հայերեն երկու տառեր՝ «ժ» և «Ը», որոնք գուցե ցույց են տվել անոթի տարողության չափը՝ շարունակելով ուրարտական ժամանակներից եկող, տարողությունը ցույց տվող սեպագիր ու հիերոգլիֆ նշաններով կարասների ավանդույթը: Պեղումներով հայտնաբերվել են նաև վաղ միջնադարյան կարասների քարե և կավե կափարիչներ, որոնք մեծ մասամբ զանգվածեղ են, ունեն լավ մշակված, երբեմն նաև փայլեցված մակերևույթ, հազվադեպ ունեն նաև հայատառ արձանագրություն:

Ջարգացած միջնադարի վաղ փուլի (10–11–րդ դդ.)՝ պեղումներով հայտնաբերված կարասների լավագույն օրինակները ևս հայտնի են Դվինից: Դրանք համեմատաբար փոքր չափերով, երկարավուն, տափակ և նեղ հատակով նմուշներ են: Իրանի վրա ունեն վաղ միջնադարյան եղևնազարդի ոճով արված նեղ զարդագոտի: Կան նաև քիչ ուռուցիկ, ստորին մասում սեղմումով արված ալիքազարդերով օրինակներ: Ակնհայտ գեղարվեստական հարդարանքից զուրկ են այս կարասները. միայն 2–3 ուռուցիկ գոտիներ, որոնք սկսում են առավել տարածված դառնալ հաջորդ դարերում:

12–13–րդ դարերում շարունակում են կենցաղում մեծ կիրառություն ունենալ ոչ լայն բերանով, ընդգծված վզով, սլացիկ իրանով և նեղ հատակով անզարդ, երբեմն միայն պարանահյուս զարդով կարասները: Լայն տարածում են ստանում կարմիր փայլեցված դրոշմազարդ փոքր կարասները: Լայնաբերան այս կարասները սովորաբար ունեն 2–6 բռնակներ: Սրանց հիմնական հարդարանքն իրանի լայնացող գոտկամասի վրա անցկացված 3–5 սմ լայնությամբ զարդագոտին է, որը սովորաբար առնված է անոթը բոլորող երկու ուռուցիկ, իրար զուգահեռ շրջագծերի մեջ: Գոտին հարդարել են տարբեր կենդանիների՝ այծերի, եղնիկների, գայլերի, առյուծների, ուղտերի, թռչունների, երբեմն նաև մարդկային պատկերներով, բուսական ու երկրաչափական զարդերով: Կա տեսակետ, որ կարասները դրոշմելու կամ դաջելու միջոցով զարդարելու այս ավանդույթը վերցված է մետաղաձուլությունից:

Դվինից և Հայաստանի այլ հուշարձաններից պեղված դրոշմազարդ կարասների շարքում կան նաև զարդագոտուց վեր երեք–չորս ժապավենաձև դաջվածքներով օրինակներ: Պատահում են նաև օրինակներ, երբ կարասների կանթերի արանքում՝ գոտուց վեր, դեպի շուրթը ձգվող ժապավենը փոխարինված է երկրաչափական պատկերներով. իրար կից երկու եռանկյուններ, որոնց մակերեսի վրա կավի թաց վիճակում սուր գործիքով փորվածքներ, խորաքանդակ գծիկներ են արված: Հազվադեպ հանդիպում են նաև կանթավոր կարմրափայլ փոքրիկ կարասներ, որոնք ծորակավոր են:

Կարասների դրոշմազարդ գոտիների զարդապատկերների իմաստաբանության վերաբերյալ ուսումնասիրողները տարակարծիք են: Ոմանք դրանք համարում են խնջույքի, որսի տեսարաններ, ոմանք կապում են ժողովրդական հավատալիքների՝ մասնավորապես պտղաբերության գաղափարի հետ: Ուրիշներն այն դիտարկում են որպես կենցաղային տեսարաններ կամ համարում են, որ դրանք արտացոլում են հին հեթանոսական ժամանակներից եկող աշխարհայացքի, այլաբանական պատմությունների խորհրդաբանության արձագանքները կամ միջնադարյան ժողովրդական հանելուկները, առակներն ու վիպերգերը:

Ելնելով շերտագրական և պատկերագրական տվյալների համադրումից՝ ընդունված է համարել, որ Հայաստանում դրոշմազարդ գոտիներով կարասները տարածում են ունեցել հավանաբար սկսած 10–րդ դարից և հարատևել են առնվազն մինչև 15–րդ դարը:

Պեղումներով հայտնաբերվել են նաև կարասների դրոշմազարդ կափարիչներ: Դրանց բնորոշ են մեծ չափերը, իսկ դրոշմազարդերը շատ նման են այն նույն պատկերներին, որոնք կարասների վրա են՝ կլոր կամ քառակուսի մեդալիոններ, վարդյակներ, բուսական, երկրաչափական և կենդանական պատկերներ: Այս խուփերը հատկապես մեծ տարածում են ունեցել 10–11–րդ դարերում:

Ուշ միջնադարում (14–17–րդ դդ.) ևս կարասները շարունակում են կենցաղում լայն կիրառություն ունենալ: Ըստ արտաքին տեսքի և որակական հատկանիշների՝ բաժանվում են երկու փուլի. վաղ և ուշ: Վաղ փուլում շարունակվում են նախորդ դարաշրջանին բնորոշ հորինվածքները, իսկ 15–17–րդ դարերում ենթարկվում են որոշակի փոփոխությունների և գեղարվեստական մշակումով զիջում են նախորդ դարաշրջանում տարածված օրինակներին:

14–րդ դարի կարասները արտաքնապես շատ նման են նախորդ դարի նմուշներին, սակայն ավելի զանգվածեղ են, ունեն վերադիր մատնեքազարդ, ալիքազարդ կամ ատամնազարդ գոտիներով հարդարված շուրթ: Պսակներն ունեն բավականին լայն, տափակ ժապավենաձև, կիսակլոր հորինվածքներ՝ արտաքուստ շեշտված, երբեմն եզերված երկշերտ գոգավոր գոտիով, չունեն ընդգծված վիզ: Իրանի վերին հատվածում հարդարված են վերադիր ժապավենաձև, ելնդավոր կամ փորագիր ալիքագոտիով, ինչպես նաև զուգահեռ ձգվող և խաչվող շեղագծերի համադրությամբ ստացված փորագիր գոտիով: Ինչ վերաբերում է դրոշմազարդ կարմրափայլ կարասներին, ապա դրանք պայմանականորեն բաժանվում են երկու խմբի: Առաջինները համեմատաբար մեծ են (80–100 լ տարողությամբ), նման են պահեստներում տեղադրվող, տնտեսական նպատակների ծառայող կարասներին: Ունեն ձգված իրան, բերանի նեղ բացվածք և փոքր տրամագծով նստուկ: Երկրորդ խումբը լայնափոր, լայնաբերան, ցածրադիր, հարթ նստուկով և պարուրաձև հավելումներով 2–6 կանթերով կարասներն են: Ունեն դեպի դուրս լայնացող և երբեմն ատամնավոր կամ սեպաձև խորաքանդակ զարդերով շուրթ:

Ուշ միջնադարյան դրոշմազարդ կարմրափայլ կարասներ (հաճախ բեկորային վիճակում) հայտնաբերվել են Հայաստանի գրեթե բոլոր միջնադարյան հուշարձանների պեղումներով (Դվին, Անի, Ամբերդ, Գառնի, Լոռե բերդ և այլն): Դրոշմազարդ և երկու կողմից ուռուցիկ շրջագծերով երիզված, 3–5 սմ լայնությամբ գոտիները պարուրել են կարասների ամենալայն հատվածները: Գոտիները զարդարվել են այծերի, եղնիկների, եղջերուների, ուղտերի, գայլերի, առյուծների, տարբեր թռչունների, սողունների, երբեմն նաև մարդկային, բուսական ու երկրաչափական պատկերներով: Ուշ միջնադարյան կարմրափայլ կարասների մեջ հանդիպում են նմուշներ, որոնք չունեն դրոշմազարդ գոտի, փոխարենն ամբողջությամբ զարդարուն են: Այս խմբի կարասներն ունեն ուռուցիկ իրան և գալարաձև հավելումով կանթեր, իրանի ամենալայն հատվածով անցնող ելնդավոր շրջագծերով գոտի: Անոթի վերնամասը կարող է հարդարված լինել հաջորդաբար կրկնվող ելնդավոր խաչազարդերով, ռոմբաձև և եռանկյուն պատկերներով: Այսպիսի կարասները համարվում են դասական կարմրափայլ դրոշմազարդ կարասների ուշ միջնադարյան նմանակումներ:

Պեղումներով հայտնաբերվել են նաև ուշ միջնադարյան կարասների հաստապատ խուփեր, որոնց մեջ գերակշռում են եզրերը սեղմելու միջոցով ստացված ակոսազարդով օրինակները:

Միջնադարյան կարասների պատրաստման տեխնիկան

Միջնադարյան կարասների պատրաստման տեխնիկան ընդհանուր գծերով շարունակում է նախորդ դարաշրջաններից եկող ավանդույթները՝ դրանք կատարելագործելով և նոր մոտեցումներ ի հայտ բերելով: Միջնադարում դուրգի վրա պատրաստում էին մեծ կարասների նախ ստորին մասը՝ հատակից մինչև ուռուցիկ փորի ամենալայն հատվածը, ապա վերնամասը՝ կենտրոնից մինչև շուրթ, և միմյանց միացնում կավե ժապավենով: Իսկ փոքր կարասներն ամբողջությամբ պատրաստել են դուրգի վրա: Այնուհետև պատրաստում էին կեղծ կամ կիսակլոր կանթերն ու տեղադրում կարասի շուրթից անմիջապես ներքև: Միջնադարում կարասները պատրաստում էին տարբեր որակի՝ մանրահատիկ կամ խոշորահատիկ կավից՝ ավազի, կրի, երբեմն նաև հարդի խառնուրդով: Կախված հումքի աղբյուրից՝ տարբեր էին նաև կավի գունային երանգները՝ դեղնավունից մինչև կարմրավարդագույն:

Կավը մշակելուց և անոթը պատրաստելուց հետո թրծվում էր: Միջնադարում թրծման գործընթացն այնքան կարևոր է համարվել խեցեղենի արտադրության բնագավառում, որ 10–12–րդ դարերում Հայաստանում գոյություն ունեցած սոցիալ–իրավական հարաբերությունների վերաբերյալ կարևոր սկզբնաղբյուր համարվող Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» «Յաղագս դատաստանաց վաճառաց ամանաց» բաժնում հատուկ տուգանք էր նշանակված թրծող բրուտի համար վատորակ կարասի պատրաստման և դրանից առաջացող հնարավոր վնասների դեպքում. «Իսկ կարաս վաճառեալ և գնեալ հաստատեսցի, յորժամ լցեալ ողջ զարկեալն պահիցէ յինքն զգինին: Ապա թե կարծիք բեկման ի թրծմանէ իցե, և զգինին կորուսցէ, միմիայն զկարասն գործողն առնու, այլ և զկէս վնասուն տուժեսցի: Ապա թէ անկարծիս իցէ ի բեկմանէ, և ի թաղելն եղև կարծիսն, անտոյժ լիցի վաճառողն: Այլ եթէ յարդմանէ երկբայեսցի, զամանն միայն վաճառողն տուժեսցի: Այդ ըստ այդմ լիցի ի փոքունսն և ի մեծամեծսն»[6]:

Միջնադարում առանձնակի վարպետությամբ ու գեղագիտորեն են պատրաստվել հատկապես դրոշմազարդ կարմրափայլ կարասները, որոնք մեծ տարածում ունեին Հայաստանում և հարակից շրջաններում: Դրոշմումը սովորաբար իրականացվում էր կլոր, եռանկյունաձև կամ գլանաձև դրոշմիչների միջոցով: Կլոր և եռանկյունաձև դրոշմիչներով պատկերները ստացվում էին սեղմումով կրկնելով անոթի տարբեր հատվածներում, իսկ գլանաձև դրոշմիչով պատկերների շարքը ստացվում էր թաց կավի վրա գլորելու միջոցով: Կլոր և գլանաձև դրոշմիչների օգնությամբ, որոնցից բազմաթիվ օրինակներ են հայտնաբերվել Հայաստանի միջնադարյան հուշարձանների պեղումներով, զարդարում էին կարմրափայլ կարասների ուռուցիկ հատվածները բոլորող ժապավենաձև գոտիները: Դրոշմումն արվում էր թրծումից առաջ՝ խեցու դեռևս խոնավ վիճակում:

Դրոշմումից բացի՝ կարմրափայլ կարասների գոտիները զարդարել են նաև թաց կավի վրա արված գծազարդերով, ինչպես նաև կենդանիների վերադիր պատկերներով, որոնցից մեծ քանակությամբ հայտնաբերվել են հատկապես Անիի պեղումներից: Երբեմն կարասների գոտիները զարդարել են նաև կաղապարի օգնությամբ՝ ստանալով կնքադրոշմի համեմատ շատ ավելի բարդ և ոճավորված զարդաքանդակներ: Կաղապարի օգնությամբ զարդարված կարասներ ու դրանց բեկորներ են հայտնաբերվել Դվինից, Անիից, Լոռե բերդից և այլ հուշարձաններից: Միջնադարում ընդունված էր սեպաձև և ալիքաձև խորաքանդակ դրոշմազարդեր անել նաև կարասի՝ դեպի դուրս լայնացող պսակի ստորին մասում, իսկ պսակի շուրջը բոլորող գոտու վրա՝ ատամնաշար կամ փոսիկաշար հիշեցնող հարդարանք:

Դրոշմազարդելուց հետո կարասը չորացրել են, ապա հղկել են կոկիչով, ներկել են կարմիր օխրայով և փայլեցրել: Հանդիպում են նաև չներկված փայլուն կարասներ կամ կարասներ, որոնք կիսով չափ հողի մեջ են դրվել պատրաստելուց անմիջապես հետո, և ներկվել են միայն վերնամասերը: Միջնադարում գինու խմորման համար նախատեսված կարասները պատրաստման վերջին փուլում պատում էին նաև անգրբով՝ հեղուկի արտահոսքը բացառելու համար: Զարգացած միջնադարում մեծ տարողությամբ կարասները հազվադեպ նաև ջնարակապատել են:

[6] Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, աշխատ.՝ Խ. Թորոսյանի, Երևան, ԳԱ հրատ., 1975, էջ 339:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կարասի պատրաստման այս ամբողջ գործընթացում (անոթի պատրաստում, կանթերի ամրացում, թրծում, ներկում, փայլեցում և այլն) երբեմն կարող էր փոփոխվել գործողությունների հերթականությունը՝ կախված տվյալ տարածաշրջանի կամ ժամանակաշրջանի բրուտագործական ավանդույթներից, ինչպես նաև կոնկրետ խեցեգործի նախասիրությունից:

Միջնադարյան կարասների կիրառական նշանակությունը

Ինչպես նախորդ դարաշրջաններում, միջնադարում ևս տարատեսակ կարասները նախատեսված են եղել հեղուկների և չոր մթերքի երկարատև պահպանման և/կամ տեղափոխման համար: Միջնադարում (գուցե սկսած անտիկ դարաշրջանից) կարասները, հաճախ նաև երկրորդական օգտագործմամբ (կենցաղում կիրառությունից դուրս եկած կարասները), ձեռք են բերում նոր գործառույթ. օգտագործվում են տարբեր կառույցների՝ հատկապես եկեղեցիների ծածկերի շաղախի մեջ որպես իրենց դատարկ տարածությամբ թաղի վրա նստող ծանրությունը թեթևացնող միջոց՝ միաժամանակ նաև եկեղեցում ձայնի ինչեղություն ապահովելով:

Սկսած ուրարտական (գուցե նաև ավելի վաղ) ժամանակներից մինչև ուշ միջնադար՝ տարատեսակ կարասները լայնորեն օգտագործվել են գինեգործության մեջ՝ որպես գինու պահման, տեղափոխման և մատուցման միջոցներ: Գինեգործության ավանդույթը Հայաստանում ունի հնագույն արմատներ և կապված է զարգացած այգեգործության հետ: Միջնադարյան Հայաստանում պատրաստի գինին պահում էին գետնափոր մառաններում և հնձաններին կից կառուցվող գինետներում: Հնարավորության դեպքում դրանք կառուցում էին ժայռի մեջ, որտեղ ամբողջ տարին օդի ջերմաստիճանը և խոնավությունը գրեթե չէին փոխվում: Գինետները պատուհաններ չունեին, որպեսզի լույսի ազդեցությամբ օդը չտաքանար: Այդ կառույցներում գինին պահում էին կարասներով: Հաճախ այդ կարասները պատրաստում էին տեղում՝ մառանը կառուցելուց առաջ: Ուշագրավ է միջնադարյան նշանավոր հոգևոր կենտրոն Հաղպատի վանքի մառանում՝ սալահատակի տակ, կառույցի ամբողջ պարագծով տեղադրված 300–400 լ տարողությամբ 20 կարասների շարքը: Կարասներն օգտագործվել են նաև միջնադարյան հնձաններում՝ գինու արտադրության փուլում որպես քաղցուի հասունացման տարաներ: Լավագույն օրինակներից են Քոբայրավանքի մոտ 2018 թ. պեղված երկու հնձանները, որտեղ քաղցուն խողովակով դուրս է հոսել, կրաշաղախ հարթակի վրա արված ակոսներով լցվել տաքարի և նրա մոտ գտնվող հինգ կարասների մեջ: Նմանատիպ յոթ կարասներ են հայտնաբերվել նաև Շնող գյուղի հնձաններից մեկում, իսկ տարբեր տարիներին Գառնիում պեղված մի շարք հնձաններում հայտնաբերվել են յուրաքանչյուրից 3–8-ական գինու կարասներ: Գինու խմորման համար նախատեսված կարասները սովորաբար ունեն երկարաձիգ իրան և նեղ բերան:

Շարունակելով ուրարտական ժամանակներից եկող ավանդույթը՝ միջնադարյան մառաններում հաճախ կարասները կիսով չափ թաղում էին հողի մեջ՝ գինու կյանքը երկարացնելու համար. հողում թաղված կարասում գինին ուշ էր թթվում, և կարելի էր մինչև 3 տարի պահել: Կարասը հողում կիսով չափ թաղելու սովորույթը տարածված էր հատկապես Արարատյան դաշտում և Նախիջևանում, իսկ ավելի բարձրադիր տարածքներում կարասը հաճախ թաղում էին ամբողջությամբ, որը պայմանավորված էր բնակլիմայական պայմաններով: Գինին երկար և անվտանգ պահպանելու կարևորագույն երաշխիքներից մեկը կարասի մաքրությունն էր: Սա այնքան է կարևորվել միջնադարում, որ անգամ «Գիրք Վաստակոց» թարգմանական երկում խորհուրդ էր տրվում կարասը լվանալ ծովաջրով կամ մոխրաջրով, սպունգով մաքրել հատակը, ապա գարու ալյուրի, ձյութի և մոմի խառնուրդով օծել պատերը[7]: Գինի լցնելուց առաջ կարասի մեջ խունկ էին ծխում, վարդի ձեթով օծում ու աղաջրով ցողում: Հայտնի է նաև, որ ուշ միջնադարում կարասները մինչև գինի լցնելը մեղրամոմի բարակ շերտով էին պատում:

Միջնադարում կարասներն օգտագործվել են նաև գինու մատուցման համար. փոքր չափերով դրոշմազարդ շքեղ հարդարանքով կարմրափայլ կարասները հանդիսավոր խնջույքների ժամանակ դրվել են սեղանին, որոնցից մատռվակները գինի են մատուցել խնջույքի մասնակիցներին: Այդ կարասների գոտիների պատկերագրությունը ևս ուրախ և տրամադրող տեսարաններ է ներկայացնում, ինչպիսին կարող էր առաջացնել գինեխմությունը:

Միջնադարյան Հայաստանում կարասները հաճախ տեղադրում էին մառաններում և ամբարներում՝ չոր մթերքի և հացահատիկի պահեստավորման համար:

[7] Պոնիուս Անատոլիուս Պերիթացի, Գիրք Վաստակոց կամ Երկրավաստակք, Հետազոտութիւնք Նախնեաց Ռամկօրենի Վրայ, Ուսումնասիրութիւնք եւ քաղուածքներ, Գրեց Հ. Ղեւոնդ Վ. Յովնանեան, Մասն Առաջին, Ռամկօրեն Մատենագրութիւն, Տետր Ա., Ազգային Մատենադարան, ԻԳ, Մխիթարեան Տպարան, Վիեննա, 1897, էջ 92–112:



Նկ. 81. Մեղրիի Սբ Հովհաննես վանքի ընդհանուր տեսքը՝ հյուսիս–արևմուտքից, լուսանկարը՝ Արամ Դավթյանի։

ՆՇԱՆԱԳՐԵՐՈՎ ԿԱՐԱՍՆԵՐ ՄԵՂՐԻԻՑ

Արման Նալբանդյան

Ներկայիս Հայաստանի Հանրապետության հարավային սահմանի մոտ գտնվող Մեղրի քաղաքը և նրա շրջակայքը համապատասխանում են պատմական Հայաստանի Սյունիք աշխարհի Արևիք գավառի տարածքին: Մեղրիի ենթատարածքը աչքի է ընկնում մշակութային խայտաբղետությամբ և առանձնահատկություններով, որոնք առավելապես առնչություններ ունեն Նախիջևանի, Հյուսիսային Իրանի և հատկապես պատմական Վասպուրականի Արտազ գավառի մշակույթի հետ:

Այստեղ մշակութային զարթոնք է նկատվում հատկապես զարգացած և ուշ միջնադարյան ժամանակաշրջաններում, երբ կառուցվում են մեծաթիվ վանքեր, եկեղեցիներ, բերդեր, կամուրջներ, ջրանցույց և այլն: Մեղրիում երկար տարիներ հանգամանալից ուսումնասիրություններ չեն իրականացվել, և մշակութապես մեծ հետաքրքրություն ներկայացնող այս գոտին անհայտ է եղել գիտության համար: Այդ առումով չափազանց կարևոր էին Մեղրիի Սբ Հովհաննես (Անապատանաց) վանքում *(Նկար 81)* վերջին տարիներին իրականացված պեղումները[8]: Վանքն առաջին անգամ հիշատակվում է Ստ. Օրբելյանի աշխատությունում: Ինչպես պեղումները ցույց տվեցին, վանքի տարածքը հարուստ է 13–րդ դարից մինչև 20–րդ դարասկզբի մշակութային շերտերով: Դրանցում հայտնաբերվեցին բազմաթիվ տապանաքարերի և խաչքարերի բեկորներ, անջնարակ և ջնարակված խեցեղեն, մեծ քանակությամբ մետաղյա առարկաներ, հնատիպ գրքերի և ձեռագիր մատյանների բազմաթիվ պատառիկներ, մետաղադրամներ, ծխամորճներ, զարդեր, ապակյա սրվակներ, ծնծղա, մասունքատուփի կափարիչ, կտավի վրա արված սրբապատկեր և այլ արժեքավոր գտածոներ:

Բազմաթիվ գտածոների մեջ ուրույն տեղ են զբաղեցնում կարասները, որոնց բազմաքանակությունը վկայում է Անապաստանաց վանքում եռուզեռի և տնտեսական ակտիվ գործընթացների մասին *(Նկար 82)*: Տնտեսական նպատակներով օգտագործվելուց բացի՝ դրանք կիրառվել են նաև եկեղեցու շինարարության ժամանակ՝ տեղադրվելով հաստ պատերի մեջ: Մեծ քանակությամբ կարասների բեկորներ գտնվեցին վանքի մի քանի օժանդակ կառույցներից: Դրանք հիմնականում բեկորային վիճակում են, սակայն կան նաև իրենց նախնական տեղում անխաթար պահպանված նմուշներ: Կարասներից մի քանիսի մեջ գտնվեցին զանազան պտուղների կորիզներ և բույսերի սերմեր: Որոշ դեպքերում կարասների վրա նկատվում են դեռևս միջնադարում արված վերականգնման հետքեր՝ անցքերի, պղնձե լարերի և կրաքարի տեսքով: Սակայն ամենաուշագրավն այն է, որ երբեմն կավե այս խոշոր անոթների տարբեր հատվածներում կան զանազան նշանագրեր:

Մասնավորապես մի բեկորի վրա փորագրված են լատինական «P» և «T» տառերը հիշեցնող գրեր *(Նկար 83)*, որոնք կարող են լինել վարպետի նշաններ: Ուշագրավ է մոտ 80 սմ բարձրությամբ կարասը, որի ուսի հատվածում առկա է արաբատառ գիր: Այն թարգմանվում է «յոթանասուն», ինչը, կարծում ենք, ցույց է տալիս վերջինիս



Նկ. 82. Վանքի հարավ–արևմուտքում բացված տնտեսական կառույցը, լուսանկարը՝ Արման Նալբանդյանի:

[8] Սբ Հովհաննես վանքում պեղումներն իրականացվեցին 2016–2020 և 2024 թթ.՝ «Երկիր և մշակույթ» համազգային կազմակերպության նախաձեռնությամբ, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախմբի կողմից (Ա. Նալբանդյան, Հ. Բադալյան, Տ. Ալեքսանյան):



Նկ. 83. Լատինատառ գրություն հիշեցնող նշանագրերով կարասի բեկոր, լուսանկարը՝ Արման Նալբանդյանի:

տարողությունը[9]: Մեկ այլ կարասի շուրթի մոտ արված նշանագրերը առաջին հայացքից հիշեց–նում են հայերեն «ա» և «յ» տառերի հաջորդաբար կրկնվող շարք: Պետք է առանձնացնել 107 սմ բարձրությամբ կարասը, որի ամենից ուշագրավ մանրամասնը փորագիր խաչի պատկերն է *(Նկար 84 ա., բ.)*: Իրանի կենտրոնում կա գիր հիշեցնող ևս մեկ ուռուցիկ պատկեր: Մի բեկորի վրա էլ փորագրված է հայերեն արձանագրություն՝ «ԹՎ[ԻՆ] ՌՃՀԸ» (1729/1178), ինչը չափազանց կարևոր հայտնագործություն էր Մեղրիից հայտնաբերված կարասների թվագրման խնդիրների լուսաբանման տեսանկյունից:

Եզակի են 2024 թ. վանքի հարավարևմտյան հատվածում տնտեսական նշանակության կա–ռույցների տարածքում բացված կարասները *(Նկար 85)*: Միմյանց կից դրված այս երեք խոշորա–ծավալ կարասներից երկուսի վրա առկա են չորսական ձվածիր և քառակուսի կնքադրոշմներ, որոնց մեջ ելնդագիր մանր տառերով երկտող գրություններ են. Ք[րիստոս]ի Ծ[առայ]/ Մ[ե]սրոբ, Առ[ա]ք[ե]լի որդի/ Մ[ե]սրոբ Ծ[առայ] *(Նկար 86)*: Ակներև է, որ այստեղ գործ ունենք կավագործ վարպետի անվան հետ, որն իր կնիքն է թողել իր իսկ պատրաստած կարասների վրա: Նման կնքադրոշմները մեծ տարածում են ունեցել Մեղրիում 18–19–րդ դարերում, ինչպիսիք մենք տե–սանք մեղրեցիների բակերում պահպանված որոշ կարասների վրա[10]: Օրինակ՝ մի կարասի վրա

9 Կարասը վերականգնվել է «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց–թանգարանի վերականգնողներ Մանվել Ղալաչյանի և Սուրեն Մանուկյանի ջանքերով, իսկ գրության թարգմանության համար մեր շնորհա–կալությունն ենք հայտնում արաբագետ Տիգրան Միքայելյանին:

10 Մեր շնորհակալությունն ենք հայտնում մեղրեցի Պապ Օհանյանին՝ կարասների գտնվելու վայրերի մասին տեղեկություն տրամադրելու և մեզ ուղեկցելու համար:

Նկ. 84ա. Փորագիր խաչի պատկերով կարաս, վերականգնումը՝ Մանվել Ղալաչյանի, Սուրեն Մանուկյանի, լուսանկարը՝ Վռամ Հակոբյանի:





Նկ. 84բ. Կարասի վրայի խաչի պատկերը, լուսանկարը՝ Արման Նալբանդյանի:

արված դրոշմակնիքի մեջ կարդում ենք. Ք[րիստոսի] Ծ[առայ] ՈՒՍՏԱ/ ԱՒԱՆ/ 1838: Մեսրոպի դրոշմակնիք–ներով կարասներից մեկի արժեքը էլ ավելի է ընդգծում այն հանգամանքը, որ դրա վերադիր զարդագոտուց քիչ ցած կա նաև ելնդագիր խոշորատառ գրություն:

Այսպիսով՝ Մեղրիում ուշ միջնա–դարում ընդունված էր թողնել նշա–նագրեր կամ գրություններ, որոնք կա–րող էին արտահայտվել խորհրդա–նշանների, վարպետի նշանների,



Նկ. 85. 2024 թվականին հայտնաբերված կարասները, լուսանկարը՝ Արման Նալբանդյանի:

ծածկագրերի, հայերեն կամ օտար լեզվով արված գրությունների տեսքով: Այստեղ, իհարկե, ակնհայտ են Մեղրիի տարածաշրջանի՝ իրանական մշակույթի հետ փոխառնչությունները: Արա–բատառ պարսկերենով գրություններ կան ոչ միայն Սբ Հովհաննես վանքի կարասների, այլև ջնարակված թասերի ու մետաղական պնակների վրա, սակայն միևնույն ժամանակ առկա հայե–րեն գրություններն ու խաչերի պատկերները մեզ թույլ են տալիս դրանք համարել հայկական



Նկ. 86. Հայերեն գրությամբ կնքադրոշմներ՝ կարասներից մեկի մակերեսին, լուսանկարը՝ Աստղիկ Մելքոնյանի:

արտադրության արգասիք: Վերը նկարագրված կարասների լավագույն զուգահեռներից կարելի է համարել ԻԻՀ Ատրպատական նահանգի Գոլֆարաջի էկո–թանգարանում ցուցադրվող կարասը, որտեղ փորագրված է. «ՏԷՐ ԽԱ]Շ[ԱՏՈՒՅՐ» (հնարավոր է նաև՝ անվան ԽԱՀԵՐ տարբերակը)[11]:

Առանձնահատուկ պետք է նշել կարասի տարողությունը ցուցող արաբատառ գրությունը, որը հազվագյուտ երևույթ է Հայաստանի միջնադարյան հուշարձաններում *(Նկար 87)*: Ենթադր–վում է, որ տարողությունը ցուցող նշաններ կան Վաղարշապատի մշակույթի տան մոտ պեղված վաղմիջնադարյան ինձանում հայտնաբերված կարասների վրա, որոնց շուրթերին բրուտը փո–րագրել է «ԽԵ», «ԽՈ»» «ԽՈՒ» երկաթագիր գրեր[12]: Դվինի 7–րդ դարի պալատի տակ հայտնաբեր–ված կարասների բեկորներից մեկի լայն պսակի վրա պահպանվել են հայերեն Ժ և Ը տառեր, որոնք նույնպես ենթադրվում է, որ ցույց են տալիս անոթի տարողությունը[13]: Տարողությունը ցուցող գրություն հայտնի չէ անտիկ ժամանակաշրջանի հուշարձաններից, սակայն դրանք ընդունված էին ուրարտական պետության մշակույթում: Մասնավորապես՝ Կարմիր բլուրից հայտնաբերված կարասների վրա կան սեպագրեր կամ հիերոգլիֆ նշաններ, որոնք ցույց են տալիս գինու (կամ այլ հեղուկի) ծավալը կարասի մեջ՝ ըստ ակարկինների (մոտ 250 լ) և տերուսինների (1/10 ակարկի)[14]:

[11] Արձանագրության վերծանության հարցում ցուցաբերած օժանդակության համար մեր շնորհակալությունն ենք հայտնում վիմագրագետ Արսեն Հարությունյանին:

[12] Կարախանյան Գ., Սարգսյան Գ., Մելքոնյան Հ., Հայաստանի վաղ միջնադարի նորահայտ հուշարձանները, ԲԵՀ 2 (77), Երևան, 1992 էջ 159:

[13] Դաֆադարյան Կ., Քալանթարյան Ա., Դվին II, Հնագիտական պեղումները Հայաստանում, հ. 20, Երևան, 2002, էջ 80:

[14] Пиотровский Б., Кармир–Блур II: Результаты работ археолог. экспедиции Институтаистории АН Арм. ССР и Государственного Эрмитажа 1949–1950 гг. /. Հնագիտական պեղումները Հայաստանում, Հ. 2, Ереван, Изд–во АН АрмССР, 1952, с. 65:



Նկ. 87. Արաբատառ գրություն՝ կարասներից մեկի մակերեսին, լուսանկարը՝ Արման Նալբանդյանի:

ԿԱՐԱՍԸ 18–ՐԴ ԴԱՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ

Սուրեն Հոբոսյան, Անի Սարատիկյան

Ողկեյզ հաւողն հասեալ է,
Թուխ ու սպիտակ կախեալ է,
Կարասն՝ գինով լցեալ է[15]*:*

Հնագիտական և ազգագրական ուսումնասիրությունների համար շատ կարևոր են գեղարվեստական ամենատարբեր մոտեցումներով պատրաստված կավակերտ անոթները՝ կարասները: Դրանք անցել են զարգացման ու կատարելագործման երկար ճանապարհ, կիրառվել են ամենատարբեր նպատակներով: Հիմնականում օգտագործվել են գինի պահեստավորելու համար և մեծարժեք տեղեկություններ են հաղորդում ժամանակի տնտեսության, կենցաղավարության վերաբերյալ:

Ըստ բուսաբանական, հնագիտական, ազգագրական ուսումնասիրությունների՝ Հայաստանը երկրագործական մշակույթի, այգեգործության, հատկապես խաղողագործության օրրաններից մեկն է: Դրա վկայությունն է տարբեր դարաշրջանների վերաբերող գինու արտադրական կառույցների՝ հնձանների առկայությունը երկրի ամբողջ տարածքում, որոնցում դարեր շարունակ գինի են պատրաստել ու պահեստավորել կարասների մեջ:

Դարերի ընթացքում կարասի ձևը շատ քիչ փոփոխություններ է կրել՝ պահպանելով իր հիմնական հորինվածքը: 18–19–րդ դարերում Հայաստանի բոլոր գավառներում տարբեր նպատակներով շարունակում էին պատրաստել տարբեր տարողության կավանոթներ, այդ թվում կարասներ: Գինու կարասների տարողությունը կարող էր լինել 120–1000 լ, իսկ երբեմն՝ ավելի: Խոշոր կարասների հումքը մանրահատիկ կառուցվածքով կավն էր, որին թրծման ընթացքում ծծմբի ծուխ էին տալիս, որը նպաստում էր ներքին մակերեսի ողորկությանը:

Հայկական կավագործության մեջ ավանդաբար օգտագործվել են մածուցիկ կավատեսակները, որոնք խոսակցական լեզվում հայտնի են «շեկ հող» ընդհանուր անվամբ, մուգ դեղնավունից մինչև բաց մոխրագույն երանգներով: Արարատյան դաշտում, Վայոց ձորում և Սյունիքում դրանք հայտնի են «նվազ հող», իսկ Հայաստանի այլ վայրերում՝ «թույլ հող» անուններով և հանդիպում են ամենուր:

[15] Աս. Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956, էջ 429:

Կավի ընտրությունն ամենապատասխանատու և դժվարին գործն էր, ուստի փորձառու բրուտները, փորձելով կավի կոշտությունը, ավազի քանակությունը նրանում, ընտրում էին ամենաառաձգականն ու ամուրը: Բրուտները (հատկապես կարասներ պատրաստելու համար) առավելապես գերադասել են օգտագործել մաքուր, խիտ կառուցվածքով կավերը՝ դրանց ավելացնելով գետաբեր մանր ավազ, քան թե «նվազ հողերը»:

Հայոց ավանդույթում կարմիր կավը գերակշիռ կիրառություն է ունեցել հնուց ի վեր: Դրա վկայությունն են հնագիտական պեղումների արդյունքում հայտնաբերված բազմաթիվ ու բազմազան խեցեղեն նյութերը Արենիից, Լճաշենից, Կարմիր բլուրից, Անիից, Դվինից, Շնողից, Իգահատից և այլ հուշարձաններից:

18–19–րդ դարերում կարմիր կավի ավանդույթը շարունակվում էր Վայոց ձորում, Գեղարքունիքում, Արագածոտնում, Լոռիում և այլ վայրերում: Կարմիր էր բրուտագործական ամենահայտնի կենտրոններից մեկում՝ Նորքում պատրաստված խեցեղենը, որն իրացվում էր Երևանում, Արարատյան դաշտի, Արագածոտնի, Կոտայքի և այլ գավառների բնակավայրերում: Նորքեցիներին շրջակա բնակավայրերի բնակիչները «բրուտ» էին անվանում, թերևս, իրենց հանրահայտ արտադրանքի համար:

Վայոց ձորի Վերնաշեն գյուղի շրջակայքում կան որակյալ կավի պաշարներ, բայց տեղի վարպետները, ավանդաբար գործածելով կարմիր կավ, այն բերում էին 6–7 կմ հեռավորությունից: Նույն կերպ էին վարվում նաև Գեղարքունիքի Ջովաշեն գյուղի բրուտները, որոնք կարմիր կավը բերում էին Կոտայքի Կաքավաձոր գյուղի շրջակայքից:

Կարմիր խեցեղենի ավանդույթը խստորեն պահպանվում էր հատկապես Ապարանում և շրջակա գյուղերում, ու թեև Արագածի ստորոտները կավի տարբեր որակի ու գույնի հարուստ հանքեր ունեն, օգտագործվում էր առավելապես կարմիր կավը, ինչը Ալաշկերտից ու Մուշից 19–րդ դարի երեսնական թվականներին Արագածոտնի տարբեր գյուղերում վերաբնակվածների նախնիների մշակութային ժառանգության դրսևորումներից մեկն էր, որ սրբորեն պահպանվում էր մինչև 20–րդ դարի կեսերը:

Մեկ այլ օրինակ են Արարատի մարզի Շահումյան գյուղի կարասները, որոնք ունեն բաց գույն: Դրանք տարածված են Արարատյան դաշտում, Արագածոտնում և այլ գավառներում: Հետաքրքիր է նշել, որ 1920 թ. Վանից վերաբնակված բրուտ Ոսկան Պետրոսյանի վկայությամբ՝ նա սկզբնական շրջանում չէր համակերպվում այստեղի «սև, կապուտին տվող» կավին, փնտրում էր իրեն հանրածանոթ կարմիր կավ:

Կավահանքերը տարբեր բարբառներում տարբեր կերպ են կոչվում՝ կավանոց (Արագածոտն, Փամբակ, Շիրակ), հողանոց (Արարատյան դաշտ, Վայոց ձոր), բրուտի կզհար (Սյունիք) և այլն:

Կավահանքերը գտնվում էին տարբեր խորություններում՝ հողի մակերեսից մինչև մի քանի մետր: Սյունիքի Տանձատափ գյուղում բրուտագործության մեջ օգտագործվող կավահանքի խորությունը մոտ երեք մետր էր: Քանի որ այդ խորությունում կավը շատ խոնավ էր ու ամուր, կավաշերտը քլունգներով փորում, ապա բահերով կտրում ու դուրս էին հանում:

Կարաս պատրաստող բրուտները մասնակցում էին կավ հայթայթելու աշխատանքներին, շատ դեպքերում հենց իրենք էին ընտրում պիտանի շերտը՝ օգնական ունենալով աշակերտին կամ մի վարձու բանվորի: Արտադրանքի մեծ պահանջարկի դեպքում բրուտները որոշակի վարձատրության դիմաց դիմում էին հատուկ մասնագիտության տեր մարդկանց, որոնք հայտնի էին «հող փորողներ» անունով:

Արծվանիկ գյուղի կավահանքում կավը մոտ 0,8 մ խորության վրա էր: Այն երկու շերտ ուներ. վերին՝ սևագույն (ուժեղ հող), և ստորին՝ գայլախազի խառնուրդով կարմիր կավի շերտը (նվազ հող): Կավի ամուր շերտը քլունգներով քանդում ու բահերով կտրտում էին միջինը 2–4 կգ ծանրության կտորների և փոսից դուրս նետում: Հենց տեղում քլունգով և այլ սուր գործիքներով մանրում, տրորում ու խոշոր մաղով մաղում էին և հատուկ փայտե արկղերով տեղափոխում արհեստանոց:

Սյունիքի Տանձատափ գյուղի կավի հումքը (կարմիր հող) հատուկ մշակում չէր պահանջում, այն լցնում էին «հողատեղ» կոչվող մի փոսի մեջ, վրան ջուր լցնում ու մոտ 10 օր այդպես թողնում, որպեսզի «թրջվի» ու ավելի առաձգական դառնա:

Կարասների և այլ խեցեղեն անոթների հումքը՝ կավը, վերամշակման բավականին տևական ճանապարհ էր անցնում: Այն չորացնում էին, մանրացնում, փոշի դարձնում, մաղում, ավելացնում ջրաբեր մանր ավազ, բոված կավափոշի, մոխիր, որից այն կոշտանում ու ավելի կպչուն էր դառնում: Մեղրիում կավին խառնում էին նաև ձիու և այծի մազ:

Կավին ավելացվող նյութերը նպաստում էին թրծման բարձր որակ ստանալուն, խեցին դարձնում էին ավելի խիտ և ամուր, որն ապահովում էր նաև կայունություն ջերմաստիճանի կտրուկ փոփոխությունների դեպքում:

Բարձր որակ ստանալու համար շատ կարևոր էր կավին խառնվող ավազի քանակությունը: Որքան կավը մածուցիկ էր, այնքան շատ ավազ էին խառնում: Հումքը թրջում էին այնքան, որ ամբողջովին հագենա ջրով, խմոր դառնա, ոչխարի մորթիներով ու այլ պաստառներով ծածկում էին ու թողնում ամբողջ գիշեր: Հաջորդող երեք–չորս օրերին մի քանի ժամ հունցում էին (հասըլել) բոբիկ ոտքերով, հավասար մասերի բաժանում, մեկ օր թողնում արևի տակ, որպեսզի հումքը լավ հասունանար:

Հասունացած հումքը արհեստանոցի մի անկյունում կուտակում, տարբեր խոնավ պաստառներով ծածկում էին, որ չչորանա: Խոսակցական լեզվում այդ գործընթացը հայտնի է «նստեցնել»

և «թթվեցնել» բառերով, որ տևում էր 2–3 օր, որի ընթացքում այն առաձգական էր դառնում: Կախված կավի որակից ու բաղադրությունից՝ հասունացման այս գործընթացը կարող էր տևել անգամ մեկ ամիս:

Արարատի մարզի Շահումյան գյուղում ընդունված էր կավահումքը կուտակել տարին մեկ անգամ՝ մայիսին: Այն լցնում էին արհեստանոցի մեջ փորված հորի մեջ, վրան ջուր լցնում, որպեսզի «ուռչի»: Մոտ մեկ շաբաթ հետո արհեստանոցի հատակին մաղած ավազի բարակ շերտ էին անում, հումքի մի մասը հանում հորից, լցնում ավազի վրա ու սկսում ոտքերով տրորել (առաջին երես կավ ոտնել) այնքան, որ ստացվի մոտ 12 սմ հաստության շերտ: Այնուհետև երկաթե սուր գործիքով այն կտրտում էին 20 x 20 սմ չափերով, երկուական կտոր դնում իրար վրա և նորից ոտքերով տրորում (կավը շուռ տալ ու երկրորդ երես ոտնել)՝ ամեն անգամ գետնին լցնելով ավազի բարակ շերտ, այնքան ժամանակ, որ այն խմորատիպ զանգված դառնար:

Կավի հասունությունը որոշում էին ձեռքերի շփումով դրանից երկար գալար սարքելով, որն իր ծանրությունից չէր կտրվում: Պատրաստի հումքը կույտ էին անում՝ դրանից մետաղալարով ոչ մեծ կտորներ կտրում, հատուկ սեղանին (սալ) դնում ու ձեռքերով հունցում, միաժամանակ հանում դրա մեջ եղած մանր քարերը:

Սկզբում կավից պատրաստում էին ամանի հատակը, այն դնում տախտակի կամ հարթ սալաքարի վրա, կավի գոտիաձև շերտերը կպցնում դրան ու փայտի գործիքով կոկելով բարձրանում վերև: Անոթը ամբողջովին հավաքում էին մի քանի օրում ընդհատումներով՝ թողնելով, որ այն աստիճանաբար չորանա: Այդ գործընթացը տևում էր 15–20 օր: Դրանից հետո քերիչով հարթում էին ամանի մակերեսը և մոտ 20 օր թողնում չորանալու: Մանր և միջին չափի խեցեղեն ամանները տնային պայմաններում թրծում էին նաև թոնիրներում՝ դրանց շուրջը շարելով աթար ու վառելով այնքան ժամանակ, որ ամանները շիկանան ու կարմրեն: Ջավախքում և այլ վայրերում թրծված ամանի վրա շիճուկ կամ թան էին լցնում, որը կոչվում էր «ջանդրել»: Դեռևս տաք խեցանոթների վրա երբեմն ձյութով կամ պանրով նախշում կամ գրում էին:

Խոշոր չափի կարասները պատրաստում էին դուրգի անիվի և ձեռքի աշխատանքի համադրությամբ: Դուրգի անիվի վրա պատրաստում էին կարասի միայն հատակն ու ստորին մասը, այն դնում արհեստանոցի հատակին՝ բոլոր կողմերից հենելով հում աղյուսներին: Հաջորդ օրը աշխատանքը շարունակում էին՝ հասունացած կավից ձեռքերով պատրաստելով մոտ 10 սմ հաստության երկարավուն գլանիկներ, դրանք աջ ձեռքով դնում կարասի արդեն պատրաստի հիմքի վրա, իսկ ձախ ձեռքով ամրացնում և խնամքով հավասարեցնում հաստությունը: Ամեն մի գոտին ունենում էր մոտ 10 սմ լայնություն: Սովորաբար մեկ օրում երկու գոտուց ավելի չէին անում, քանի որ ծանրության ազդեցությամբ այն կարող էր փլվել: Աշխատանքն ընդհատելուց առաջ կավե գոտու վերին եզրին փոսիկներ կամ ակոսներ էին անում՝ հաջորդ գոտին կայուն ձևով ամրացնելու համար, և թաց շորով ծածկում էին, որ խոնավ մնար մինչև հաջորդ օրը:

Կարասն ամբողջովին պատրաստելուց հետո մոտ 20 օր թողնում էին, որ ամբողջովին չորանար, որից հետո տեղափոխում էին հնոց՝ թրծելու: Հնոցը աղյուսե պատերով, թաղակապ կիսագետնափոր կամ վերգետնյա շինություն էր, որի պատերից մեկը նաև որպես մուտք էր ծառայում: Թրծելուց հետո այդ պատը քանդում էին, կարասներն ու մյուս խեցեղեն իրերը հանում ու այնտեղ դասավորում չթրծված իրերի հաջորդ խումբը: Դրանից հետո աղյուսները նորից էին շարում կավի շաղախով, պատի ներքին մի անկյունում թողնելով 1 x 1 մ չափերի բացվածք՝ հնոցը ջեռուցելու համար: Անտառային շրջաններում հիմնական վառելիքը փայտն էր՝ առավելապես բոխի և աճարի, որոնք բարձր՝ մոտ 1000–1300 °C ջերմաստիճան են ապահովում, իսկ մյուս վայրերում օգտագործում էին նաև աթար, արքադ, հարդ և այլն: Կարասների թրծումը տևում էր 5–7 օր, որի ընթացքում հնոցն անընդհատ ջեռուցվում էր:

Մինչև գինի լցնելը կարասները մեղրամոմի բարակ շերտով պատում էին հետևյալ կերպ. գետնին թաղիք կամ կարպետ էին փռում, վրան պառկեցնում նախապես տաքացրած կարասը և, մեջը հալված մեղրամոմ լցնելով, գլորում տարբեր ուղղություններով: Երբեմն էժանության համար մեղրամոմի փոխարեն ճրագու էին գործածում: Գերադասելի էր մեղրամոմը, որ դիմանում էր 8–10 տարի, իսկ ճրագուն 3–5 տարի հետո պիտի նորոգվեր:

Կարասներն օգտագործվել են գետնափոր մառաններում գինին պահելու համար: Գինեգործական ցածրադիր շրջաններում կարասները կիսով չափ էին թաղում գետնի մեջ, իսկ նախալեռնային գոտում՝ ամբողջությամբ:

Գետնի մեջ թաղված կարասների ծակոտիներով գինին կարող էր պակասել, ալկոհոլը՝ նվազում, կարասը դրսից խոնավանում էր՝ դառնալով գինու զանազան հիվանդությունների պատճառ: Կարասն ու գինին խոնավությունից զերծ պահելու և գինին անփոփոխ ջերմաստիճանում պահելու նպատակով կարասի արտաքին մակերեսը, հիմքից մինչև կեսը կամ բերանը, եթե այն ամբողջությամբ թաղվելու էր, պատում էին կենդանու թարմ արյան, դարբնոցի հնոցի փոշու ու կրի շաղախով պատրաստված մածուկով, որը Արարատյան դաշտում կոչվել է «դուրս կանգնեցնել»:

Քաղցուն կարասներում և տաքարներում 20–40 օր խմորվում էր, որի ընթացքում զտում ու հեռացնում էին հատակին առաջացող նստվածքը: Ըստ ժողովրդական մտածողության՝ գինին լիովին հասունանում էր 40 օրում՝ «դուրս էր գալիս քառասունքից»:

Ավանդաբար հայոց մեջ կարասներն օգտագործվել են հեղուկներ, հացահատիկ և այլուր պահելու համար, կիրառել են նաև արհեստագործության տարբեր բնագավառներում, հատկապես ներկարարության մեջ:



Նկ. 88. Պտղնիի եկեղեցու կարասային զարդագոտին, VII դ., 2015 թ., լուսանկարը՝ Արսեն Հարությունյանի:


Թելեր և գործվածքներ ներկում էին աշնանը, երբ կարող էին տարբեր գույներ ստանալու համար օգտագործել տարվա ընթացքում հավաքած բույսերն ու պտուղները:

Օձունում 19–րդ դարի սկզբին եղել է ներկարարի արհեստանոց՝ մոտ 500 լիտր տարողությամբ երկու կարասով և բուխարի–կրակարանով: Կարասները լցնում էին տաք ջրով, խառնում մեկ գրվանքա կիր, կես գրվանքա մեղր, մեկ գրվանքա լեղակ: Մեղրը մերանի դեր էր կատարում, «հասցնում» ներկի լուծույթը, որը օրը երեք անգամ խառնում էին՝ բուխարիկում կրակը շարունակ թեժ պահելով: Թելը ներկելուց առաջ թրջում էին սառը ջրում, քամում, ապա փայտի կեռիկներով կախում կարասների մեջ: Մեղրի, կրի ու լեղակի խառնուրդով, տարբեր տևողությամբ ջրի մեջ թողնելով, ստանում էին կապույտի երեք երանգ՝ մավի (մուգ կապույտ), մեջ մավի (քիչ բաց կապույտ) և փիրուզ (շատ բաց կապույտ):

Մինչ օրս էլ, հատկապես հայկական քաղաքային ճարտարապետության մեջ՝ հրապարակներում, բնակելի և արտադրական նշանակության շինությունների պատերին, հարթաքանդակներում կարելի է տեսնել ժողովրդական մտածողությունն ու ավանդույթներն արտացոլող դրվագներ: Այս իմաստով աչքի են ընկնում հատկապես խորհրդային շրջանի հուշարձանները: Ուշագրավ են հատկապես հայ ճարտարապետության երախտավոր Ռաֆայել Իսրայելյանի աշխատանքները, որտեղ հաճախ կարելի է տեսնել խաղողի, գինու և կարասի պատկերներ: Այս մասին նա գրում է. *«Մեծ է ժողովրդի սերը դեպի բրուտագործությունը: Ոչ մի արհեստ երևի այնպիսի տարածում չունի ժողովրդի մեջ, ինչպես բրուտագործությունը: Հարգանքը դեպի այդ արհեստը հասել է այն աստիճանի, որ խիստ և լակոնիկ մեր ճարտարապետությունը կավեղեն ամաններին տեղ է տվել այնպիսի մի հիանալի ճարտարապետական կոթողում, ինչպիսին է Պտղնու եկեղեցին...» (Նկար 88):* Այս մտորումներն են, որ հետագայում արտացոլվել են Ռ. Իսրայելյանի արվեստում, երբ նախագծում էր Երևանի «Արարատ» կոնյակի–գինու–օղու կոմբինատի գինու մառանները. *«Քառորդ դարի ընդմիջումից հետո շարունակում եմ աշխատել «Արարատ» տրեստի մառանների կառուցապատման նախագծի վրա: Սա մի անհատնում խոսք է, մի բազմավեպ, որի գործող անձինք անընդհատ փոխվում են, ավելանում, որպեսզի շարունակեն նախորդների արածը, մեծացնեն ու հարստացնեն հայոց գինու հրաշալի ամբարները: Եվ ահա այդ գործարանը հետզհետե զարգացնելով, պիտի մոտենա իր հիմնական կերպարին, Հրազդանի ժայռապատ ձորի գլխին վեր խոյանա որպես մի հուժկու ժայռակոփ բերդ»:* Իսրայելյանը առանձնահատուկ ոգևորությամբ է խոսում շենքի հարդարանքի մասին՝ շեշտադրելով ազգային խորհրդանիշների կարևորությունը: Այդ մասին նա գրում է. *«Ներքևում՝ որմնախորշի մեջ, տեղադրված է մի կարաս, որ ասես պատկերացում է տալիս կառույցի*



Նկ. 89. «Արարատ» կոնյակի–գինու–օղու կոմբինատի գինու մառանների շենքի ճակատային կարասներից մեկը, Երևան, 2022 թ., լուսանկարը՝ Անի Սարատիկյանի:



Նկ. 90. «Արարատ» կոնյակի–գինու–օղու կոմբինատի գինու մառանների շենքի ճակատային կարասները, Երևան, 2022 թ., ©risraelyan.com:

բովանդակության մասին և դիտողին նախապատրաստում՝ ընկալելու կարասների այն խումբը, որը տեղադրված է դեպի հրապարակ նայող մասնաշենքի վրա» (Նկար 89, 90):

«Կուզենայի մի քանի խոսք ասել գինու գործարանի մառանների հետ կապված իմ հետագա ծրագրերի մասին, որովհետև դրանք ինձ շատ են ոգևորում: Ինչպե՞ս չոգևորվեմ, երբ մտածել եմ նորակառույց պատերի վրա, տարբեր տեղերում, տարբեր ձևերով մեր մշակույթի պատմության հետաքրքրական դրվագներ քանդակել»: Այս խոսքերի հավաստիքն է շենքի կենտրոնական ճակատի զարդարանքը՝ երեք վեհաշուք որմնափակ կարասները:

ԿԱՐԱՍԸ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐՈՒՄ, ԱՎԱՆԴԱՊԱՏՈՒՄՆԵՐՈՒՄ, ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Սուրեն Հոբոսյան, Անի Սարատիկյան

Հայ ժողովրդական ավանդապատումներում, հավատալիքներում, ծիսերգերում ու հեքիաթներում հաճախ են գովերգվում այգեկութը, գինին ու կարասը: Գրականության մեջ բազմաթիվ օրինակներ կան, որոնք արտացոլում են ժողովրդական պատկերացումները կարասի մասին, որոնք կապվում են առատության, հարստության, ոսկու և գանձերի հետ:

Բնական է, որ երկրագործ ժողովրդի պատկերացումներում հենց հողը կամ հողից պատրաստված ինչ–որ իր կարող էր կապվել առատության ու անսպառության գաղափարի հետ: Հատկապես հեքիաթներում, առասպելներում, ասացվածքներում ու հանելուկներում այն կարասն է՝ մեծ, հսկա, անհատակ «ոսկու կարասը»:

Հայ ժողովրդական հեքիաթներում այն արտացոլվել է հենց «Ոսկու կարասը» հեքիաթում. *«Էս հարևանի վարելու ժամանակ խոփը մի տեղ դեմ է ընկնում, դուրս է գալի մի կարաս, մեջը՝ լիքը ոսկի»*[16]: Կարասով ոսկին հեքիաթում ներկայացվում է իբրև պարգև՝ տրված ազնվության և արդար աշխատանքի դիմաց: Ժողովրդական պատկերացումներն արտահայտող տիպական օրինակ է Ակսել Բակունցի «Ալպիական մանուշակ» պատմվածքը, երբ հնագետը շրջում է բերդի պարիսպների մոտ. *«Եվ երբ պահակին հարցրեց, թե ովքեր են եկվորները, ինչ են փնտրում բերդի ավերակներում, պահակը նախ հանկարծակիի եկավ և պատասխանեց, որ գրքերում գրած է, թե Կաքավաբերդի գլխին կարասի մեջ թաղված են ոսկե գանձեր...»*[17]:

Դեռևս խոսակցական լեզվում չի մոռացվել «Բոյախանի կարաս» արտահայտությունը՝ կապված անսպառության գաղափարի հետ: Այդ կարասը իրականում կապույտ գույնով էր լցված լինում և դրվում էր ներկատներում, պարունակությունն էլ մշտապես թարմացվում էր:

Հայ գրականության մեջ բազմաթիվ օրինակներ կան, որտեղ գովերգվում է կարասը՝ որպես հացահատիկ և գինի պահելու տարա, ինչպես, օրինակ՝ Դանիել Վարուժանի «Հացին երգը» և «Հեթանոս երգեր» ժողովածուներում.

---

16 «Հասկեր», 1908, № 3, էջ 107–108:

17 Ակսել Բակունց, Ալպիական մանուշակ, Երկեր, «Սովետական գրող» հրատ., Երևան, 1986, էջ 135–143:

«...Ծոթրիններու բույրին մեջ, պառկած կատարը դեզին՝
Ես կը թողում որ սըրտիս դըպչի ամեն մեկ ճաճանչ.
Ու կ՛արբենամ գինիովն Անհունի մեծ կարասին՝
Ուր կը ճըմլվին ասուպներ քայլի մը տակ անճանաչ...»:[18]
«...եւ քովն իրենց՝ հընաբոյր լայն կարասներ
Նուիրագործուած ամէն տարի, ծոցիդ պէս,
Լեցո՛ւն էին գինիներով – ծոցիդ պէս...»[19]

Հետաքրքիր փաստ է, որ գինու արտադրության և պահպանման համար օգտագործվել են նաև քարանձավները՝ Արենի, Զարնի՝ Հաղպատի մոտ, Գավարզին[20]՝ Բերքաբեր գյուղի մերձակայքում *(Նկար 91)*, և այլ վայրերում, որտեղ մթերքի և գինու պահեստավորման մեծաթիվ կարասներ են հայտնաբերվել: Այդ քարանձավներում գինի պատրաստելու արարողության ժամանակ հնչել են գովքավետիսները, որտեղ հատուկ ընդգծվել են նաև կարասների բացումն ու գովերգությունը:.

Ես քեզ կարաս բանամ գերիս,
Եւ քեզ բերեմ անույշ գինիս,
Ջի դու խմես ու կարմրիս,
Ավետիս տամ հայոց ազգիս[21]*:*

Հայ ժողովրդական հանելուկներում նույնպես կարասի մասին դրվագներ հանդիպում ենք.



Նկ. 91. Կարաս, Տավուշի մարզ, Բերքաբեր գյուղի թանգարան, XVII–XVIII դդ., 2016 թ., լուսանկարը՝ Անի Սարատիկյանի:

[18] Դանիել Վարուժան, Հացին երգը, Կալերու գիշեր, Կ.Պոլիս, 1921 թ., էջ 65:
[19] Դանիել Վարուժան, Հեթանոս երգեր, Ո՛վ Լալագե, Կ. Պոլիս, 1912, էջ 160:
[20] Մեր երկրում պատրաստված ամենամեծ կարասներից մեկը (մոտ 2 մ բարձրության) պահպանվում է Գավարզին (Գավազան) ամրոցի մերձակա Բերքաբեր գյուղի թանգարանում *(Նկար 91)*:
[21] Կ. Կոստանյանց, Միջնադարյան հայոց տաղեր և ոտանավորներ, պր. Բ., Թիֆլիս, 1892, էջ 50:

Մին պան ասեմ,
Անուն ասեմ,
Կարաս ասես՝
Հի՞նչ եմ ասում[22]*:*

Հնուց ի վեր կարասը թաղման արարողակարգի հետ կապված հավատալիքների անբաժան մասն է կազմել որպես աճյունասափոր ու ննջեցյալի հետ դրվող գինու անոթ: Քրիստոնեական շրջանում այն անգամ թաղվում էր գերեզմանի մոտ՝ դրա մեջ լցված գինին հիշատակի օրերի արարողության ժամանակ օգտագործելու համար: Այս երևույթի արձագանքները հետագայում տեսնում ենք հայկական տապանաքարային արվեստում:

Ննջեցյալի գերեզմանի վերերկրյա հատվածը՝ տապանաքարը, նրա հիշատակի հավերժացման նպատակով կառուցվող կոթող է: Համանման կոթողների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու նաև տվյալ ժամանակաշրջանի մարդկանց աշխարհընկալման և հավատալիքների մասին:



Նկ. 92ա. Տապանքար, ՌՄԾԵ (1806 թ.), խնջույքի տեսարան՝ կարասի պատկերով, Տավուշի մարզ, գ. Կոթի, 2009 թ., լուսանկարը՝ Արամ Քալանթարյանի:

Նկ. 92բ. Տապանքար, ՌՄԾԵ (1806 թ.), խնջույքի տեսարան՝ կարասի պատկերով, Տավուշի մարզ, գ. Կոթի, գրչանկարը՝ Անի Սահակյանի:

Ժողովրդական արվեստի մի ուշագրավ նմուշ է Տավուշի մարզի Կոթի գյուղի գերեզմանոցի ՌՄԾԵ (1806) թվականը կրող տապանաքարը *(Նկար 92ա, բ, գ)*: Քարագործ վարպետն այստեղ աշ-

[22] Ս.Բ. Հարությունյան, Հայ ժողովրդական հանելուկներ, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան 1965, էջ 149:



Նկ. 92գ. Տապանքար, ՌՄԾԵ (1806 թ.), խնջույքի տեսարան՝ կարասի պատկերով,
Տավուշի մարզ, գ. Կոթի, 2009 թ., լուսանկարը՝ Արամ Քալանթարյանի:

խատել է հարազատ մնալ ավանդականին, հստակ ու պարզ գծային արտահայտչականությամբ պատկերել է մարդկանց ու կենցաղային որոշ իրեր՝ հավանաբար կարևորագույնները տվյալ ժամանակի, տվյալ համայնքի կամ տվյալ ընտանիքի համար:

Տապանաքարի հարավային նիստին՝ տապանագրի մոտ, առկա են հինգ առանձին կերպարներ, որոնք պատկերված են շարժման մեջ, որոշակի գործողություն կատարելիս: Ներքևի աջ ֆիգուրը պատկերված է կանգնած դիրքով, կարասի մոտ, հավանաբար գինի է մատուցում ձախ ձեռքում բռնած ինչ–որ առարկայով: Հնարավոր է, որ այդ ֆիգուրը ներկայացնում է քահանայի և խորհրդանշում է պատարագի արարողակարգ:

Նրանից աջ պատկերված է հեծյալ՝ մի ձեռքը հենած իրանին, մյուս ձեռքով բռնած ձիու սանձը, գոտկատեղին թուր է կապած, որը պատկերված է բավականին մանրամասնորեն, իսկ ձախ ուսին նստած է բազեն: Տեսարանը որսորդության գնացող անձի է պատկերում, իսկ բազեով որսն արդեն խոսում է նրա հասարակական բարձր դիրքի մասին: Նրանից ձախ առկա է ևս մի ֆիգուր, որը, հավանաբար, հրեշտակ է: Հրեշտակի ներկայությունը մարդու կողքին ցույց է տալիս նրա հոգու՝ երկնային երուսաղեմում լինելը:

Հեծյալից վերև տեսնում ենք մի կերպարի: Դատելով հագուստի ձևից՝ կին է, որի աջ ձեռքում երկանք կա, որը վկայում է ալյուր պատրաստելու և հաց թխելու մասին: Հաջորդ կերպարը գտնվում է նրանից աջ, պատկերված է ձիու հետ: Առաջին պլանում ձին է, հետևում՝ մի մարդ՝ ձեռքին անիվ բռնած (թերևս բախտի անիվ) հիշեցնող իր, հնարավոր է՝ հաց:

Առաջին հայացքից պարզ կենցաղային սյուժե ներկայացնող այս տապանաքարի պատկերագրությունը միահյուսված է քրիստոնեական խորհրդաբանությանը: Այս իմաստով հացն ու գինին հավանաբար հաղորդության խորհուրդն ունեն: Այստեղ քարագործ վարպետը միտք է ունեցել ոչ միայն հավերժացնելու հանգուցյալի հիշատակը, այլև պատկերելու նրա հոգու փրկության ճանապարհը:

Դատելով դրանց կատարման ոճից՝ կարելի է ասել, որ պատկերագրությունը թեմատիկ աղերսներ ունի մանրանկարչական արվեստի հետ: Ինչպես հայ մանրանկարչության մեզ ավանդված մեծարժեք պատկերներում, որտեղ հարուստ նյութ կա ժամանակի կենցաղավարության մասին, այնպես էլ այս պարագայում կենցաղային պատկերները անկախ չեն հոգևոր թեմաներից և կազմում են մեկ օրգանական ամբողջություն:

Հայոց կենցաղում կարասն այնքան մեծ տեղ և նշանակություն ուներ, որ արտացոլված է թե՛ բանահյուսության մեջ, թե՛ հավատալիքներում, ի վերջո նաև ժողովրդական արվեստում՝ իր ուրույն տեղն ունենալով, ինչպես, օրինակ՝ խաղողի որթը, ողկույզն ու նուռը: Այն նույնանում է օջախի հետ՝ դառնալով հարստության, բարեկեցության, արդար վաստակի խորհրդանիշ:

ԿԱՐԱՍՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՆԵԳՈՐԾԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ. ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Ավագ Հարությունյան

Կավից տարաները հայկական գինեգործական մշակույթում կիրառվել են Ք. ա. առնվազն 3–րդ հազարամյակից: Այսօր էլ դրանք մեծ հաջողությամբ արտադրական–կիրառական դաշտում են և միջազգային հեղինակավոր տարաբնույթ մրցույթներում հայկական գինիներին բազում ոսկե մեդալներ են բերում:

Այդ ամբողջ ընթացքում, ըստ գինեգործական տեխնոլոգիայի, օգտագործվել են չորս տեսակի կարասներ՝ վերգետնյա, հողի մեջ կիսաթաղված, մինչև բերանը թաղված և լրիվ թաղված: Տեխնոլոգիական մոտեցումներով պայմանավորված՝ այս եղանակներն էլ հիմնականում թելադրել են բուն կարասի կառուցվածքի առավել կարևոր տեխնիկական չափորոշիչները:

Ասվածն առաջին հերթին վերաբերում է կարասի պատի հաստությանը, արված խորություններին, զարդանախշերին, դատարկ կարասը գինուն նախապատրաստելուն և լցված տարան փակելուն: Ընդ որում, որքան մեծ է եղել տարողությունը, այնքան ակնհայտ է եղել գինեգործական ու բրուտագործական տեխնոլոգիական հնարքներով փոխպայմանավորված կապը:

Այս առումով ավելի հետաքրքրական են հողի մեջ կիսաթաղված կարասներ: Փաստը, որ կարասի մի մասը գտնվել է գետնի տակ, իսկ մյուսը՝ երեսին, ինչ–որ չափով թելադրել կամ բացատրում է վերջինիս կառուցվածքային նրբությունները: Բուն գետնի տակ գտնվելը թույլ է տվել, որ կարասի պատերը լինեն առավել հաստ: Դա հավանաբար պայմանավորված է մի քանի պատճառներով: Նախ՝ գետնի տակ ջերմաստիճանը համեմատաբար կայուն է: Այդ հանգամանքը հնարավորություն է տվել ունենալու հաստ պատեր՝ առանց վախենալու ջերմաստիճանային տատանումների պատճառով առաջացող հնարավոր լարումներից, ինչն էլ իր հերթին առավելագույնս չեզոքացրել է ինչպես դրսի խոնավության ներթափանցումը, այնպես էլ գինու միկրոարտահոսքը պատով:

Երկրորդ պատճառը վերաբերում է կիսաթաղված կարասների վերգետնյա մասին: Այստեղ, իհարկե, պատերի հաստությունը նույնն է, սակայն տարվա ընթացքում մառանում ջերմաստիճանային մեծ տատանումների պատճառով առաջացած լարումներն առավելագույնս հանելու համար կարասի վերգետնյա մակերևույթի պարագծով արվել են մի քանի միլիմետր, հիմնականում եռանկյունաձև, ներս ընկած տիրույթներ:

Կարծում ենք, որ սա չափազանց կարևոր տեխնոլոգիական լուծում էր, մանավանդ ջերմաստիճանային արտամառանային կտրուկ փոփոխությունների պարագայում: Իսկ նման իրավիճակները հաճախադեպ են եղել, մանավանդ, երբ անհրաժեշտ էր պատրաստել հատուկ գինի, որի համար ցրտաշունչ ձմռանը ստեղծվում էին բաց հարթակներ՝ այն սառեցնելու միջոցով խտացնելու կամ ամռանը արևային ուղիղ ջերմային մշակման ենթարկելու համար:

Կիսաթաղված կարասի վերգետնյա և ստորգետնյա մասերը որոշ դեպքերում իրարից բաժանել են նախշագոտիով: Այն, ինչպես և վերը նշված խորությունները, ունեցել է նաև գեղագիտական նշանակություն, ինչը գրեթե միշտ միախառնվել է տեխնոլոգիայի թելադրած կառուցվածքային պահանջներին: Սակայն հաճախ այդ նախշագոտիները արվել են զուտ որպես գեղագիտական լուծում:

Հողի տակ թաղված կարասները հիմնականում եղել են հաստ պատերով և առանց մակերևույթին վերաբերող տեխնոլոգիական և գեղագիտական ակնհայտ մոտեցումների: Ավելին՝ որոշ դեպքերում կարասի դրսի պատերը սվաղվել են կրաշաղախով:

Եթե մինչև պռունկը թաղված կարասների շարքում որպես բացառություն հանդիպել են նաև տեխնոլոգիական ու գեղագիտական մշակումներ, ապա լրիվ թաղվածները, որպես կանոն, ունեցել են պարզ և համեմատաբար ողորկ մակերևույթ:

Հետաքրքիր է, որ ավելի խոր թաղվածները, երբ հաճախ հողի շերտի հաստությունը գերազանցում էր մեկ մետրը, շատ դեպքերում ունեցել են ոչ սիմետրիկ կառուցվածք: Նման օրինակների մենք հանդիպում ենք պատմական Փայտակարանի և դրանից արևելք՝ Կասպից ծովի հարավային ափամերձ շրջանների հայկական գինեգործական մշակույթում: Այդտեղ անվտանգային առումով կարասներն այնքան խորն են թաղված եղել, որ հողաշերտի վրայով քայլել են մարդիկ, անցել սայլեր:

Արարատյան գոգահովտում, Վասպուրականում, Նախիջևանում, Վայոց ձորում և Սյունիքում առավել շատ հանդիպում են վերգետնյա կարասներ: Սրանց պատերը եղել են համեմատաբար բարակ: Ամենայն հավանականությամբ, դա նախ և առաջ բացատրվում է ջերմաստիճանային համեմատաբար մեծ տատանումներով, որոնց պատճառով, ինչպես արդեն նշել ենք, պատերի մեջ առաջանում են վտանգավոր լարումներ:

Երկրորդ պատճառը կշռի նկատմամբ պահանջներն էին: Ի տարբերություն գետնի տակ թաղվածների, որոնք անշարժ էին, վերգետնյա կարասները շարժական էին. անընդհատ տեղափոխվում էին տեղից տեղ, ուստի պետք է հնարավորինս թեթև լինեին:

Հայքի՝ վերը նշված շրջաններում, իհարկե, հանդիպում են նաև կիսաթաղ կարասներ: Վերջիններս նախատեսված էին հնացված գինիների համար: Բանն այն է, որ վերգետնյա կարաս–

ների գինին սպառվում էր մինչ հաջորդ բերքահավաք, քանի որ մառաններում ամառվա բարձր ջերմաստիճանը թույլ չէր տալիս գինին երկար պահել: Մինչդեռ կիսաթաղ կամ լրիվ թաղված կա–րասներում երեք տարին դեռևս վտանգավոր շեմ չէր պահպանման համար: Ջերմաստիճանային գործոնն այնքան կարևոր էր, որ նույնիսկ համեմատաբար զով գինեգործական շրջաններում, ինչպիսիք են Գուգարքը, Ուտիքը կամ Արցախը, կարասը թաղվել է մինչև պռունկը:

Կարասներում խմորման անհրաժեշտ ջերմաստիճան ապահովելու համար կիրառվել են բավականին հետաքրքիր լուծումներ: Այս առումով չի բացառվում, որ սպիտակ գինիների համար, որոնք պահանջել են խմորման համեմատաբար ցածր ջերմաստիճան, օգտագործել են «կարա–սը կարասի» մեջ տեխնոլոգիական հնարքը: Որպես ապացույց կարող են լինել Երվանդաշատում և Էրեբունիում հայտնաբերված զույգ պատերով տարաները:

Այդ համատեքստում դրսի կարասը եղել է խիստ մեծ պռնկով, իսկ ներսի կարասը տեղավոր–վել է մեծի մեջ այնպես, որ երկուսի պատերի միջև մնացել է մի քանի սանտիմետր ազատ տեղ: Ամենայն հավանականությամբ, երկու կարասների արանքում սառը ջուր են լցրել, ինչի արդյուն–քում էլ խմորվող հեղուկի ջերմաստիճանը իջել է:

Եղել են նաև հակառակ իրադրությունում խնդրի լուծման տեխնոլոգիական հետաքրքիր մո–տեցումներ: Դա հիմնականում վերաբերել է այն շրջաններին, որտեղ եղել է ուշ բերքահավաքի մշակույթ, կամ խաղողի վերամշակման շրջանում հաճախ է նկատվել ջերմաստիճանի կտրուկ նվազում:

Նման դեպքերում խմորման բարեհաջող ընթացք ստանալու, այն է՝ ցանկալի բարձր ջեր–մաստիճան ապահովելու, ինչպես նաև ստերիլ մոխիրը գինեգործական նպատակներով հնա–րավորինս արագ օգտագործելու համար, կարասները տեղադրել են վերգետնյա կամ ստորգետ–նյա թոնիրների հարևանությամբ: Այդ դեպքում հաց թխելը ժամանակային առումով հարմարեց–րել են խմորման ջերմաստիճանի կարգավորմանը:

Կարասները եղել են տարբեր գույների՝ պայմանավորված կավի հանքի գտնվելու վայրով: Այսպես, Հայաստանի հիմնական կարասագործական վայրում՝ այսօրվա Արարատի մարզի Շա–հումյան (նախկին Յուվա) գյուղում, կարասները ստացվել են բաց գույնի: Նորքի և Քանաքեռի կա–վից պատրաստված տարաները եղել են ավելի վառ, հաճախ՝ կարմրագույն:

Այս շրջանների կարասներն իրարից տարբերվել են ոչ միայն գույնով, այլ նաև որոշ տեխնո–լոգիական նրբություններով. օրինակ՝ տարբեր դպրոցներում հում կավին խառնել են մարդու և այծի մազեր, հատուկ բույսերից ստացված մազաթելեր, դարման, ծղոտ և նման բաներ:

Դա արվել է մի քանի նպատակով, որոնցից կարևորագույնը թեթևություն ապահովելն էր: Ավելացրած մարմիններն այրվել են, և տեղ–տեղ ստեղծվել են ոչ հոծ ծավալներ: Միևնույն ժամա–նակ, ամենայն հավանականությամբ, նման միկրոփուչերը նպաստել են կարասի պատի ներսում վտանգավոր լարումների նվազեցմանը:

Առանձին մշակույթ էր կարասի նախապատրաստումը գինեգործական շրջանին: Մշակվում էին թե՛ կարասի ներքին պատը, թե՛ մակերևույթը: Վերջինս վերաբերում էր կիսաթաղված և լրիվ թաղված կարասներին: Դա, մի կողմից, նպատակ էր հետապնդում ստեղծելու համեմատաբար ասեպտիկ միջավայր, մյուս կողմից՝ թույլ էր տալիս լավագույնս պաշտպանվելու ավելորդ խոնա–վությունից: Դրա համար թաղվող կարասի տակ և պատերին կից տեղադրում էին չորացրած հա–տուկ դեղաբույսեր, հականեխիչ հատկություններով կենսաբանական ծագմամբ զանգվածներ և բուրավետ խոտեր: Բոլոր դեպքերում էլ հողով վերջնական ծածկելուց առաջ կարասի տակը և շուրջը լցրել են «թարմ» մոխիր:

Նկատելիորեն բարդ էր ներքին պատերի խնդիրը: Տարիների ընթացքում հատուկ մշակված, անցանկալի համերից ու հոտերից ազատած կենդանական ճարպին (ճրագու) ավելացնում էին սերկևիլի, թզի և խնձորի փոշի, վարդի չոր թերթիկներ և նման այլ բաղադրիչներ: Հետո ստացված խառնուրդը եռացնում և քսում էին կարասի տաքացրած պատերին:

Առավել ապահովված տնային տնտեսություններում մշակված ճարպի փոխարեն օգտագոր–ծում էին մեղրամոմ: Հանդիպում էին նաև համակցված տարբերակներ:

Գինին լցնելուց առաջ կամ դատարկելուց հետո կարասները ախտահանել են այրվող ծծմբի գազով: Որոշ դեպքերում ծծմբի երկօքսիդով ախտահանմանը զուգահեռ կամ դրանից հետո կա–րասները օծել են խնկով: Ի դեպ, այս երկու նյութերը օգտագործվել են ոչ միայն տարան լցնելուց առաջ, այլև գինու պատրաստման ու պահպանման ամբողջ ընթացքում:

Բավականին հետաքրքիր բազմազանության ենք հանդիպում նաև կարասների կափա–րիչների դեպքում: Միշտ աշխատել են լիքը կարասները փակել հերմետիկ: Գրեթե միշտ կարա–սի բերանը կապել են ճրագուով կամ մեղրամոմով պատված կտորով: Մի պարագայում բերանը հետո ծեփել են կավով, մեկ այլ դեպքում վրան դրել են սալաքար: Նավթով հարուստ շրջաննե–րում կտորը ներծծել են աղաջրով, իսկ սալաքարը ծածկել են մածուցիկ բիտումով: Ի դեպ, այդ վայրերում կարասի ներսը հաճախակի պատել են հնարավորինս մաքուր բիտումով կամ աս–ֆալտով:

Այնքան բարձր էր հայկական կարասների վարկանիշը, որ դրանք պատվիրվում էին շատ հեռուներից: Հայտնի են դեպքեր, երբ Յուվայի կարասները հասցրել են նույնիսկ Երուսաղեմ: Դրանք տարվել են սայլերով: Ընդ որում, եղել են հատուկ այդ գործի համար հարմարեցված սայ–լեր, և այդ գործն ամենաապահովն արել են Էջմիածնի Խաթունարխ (այժմ՝ Գայ) գյուղից մի քանի սայլապաններ:

Այդ գործը շարունակվել է մինչև նախորդ դարի երեսնական թվականները: Բարեբախտաբար, պահպանվել են որոշ մարդկանց մասին հուշեր: Յուվայի վերջին հանրահայտ բրուտներից էին Գնգոեյի Վարդանը, Չետրիի Գալուստը, Դալեյ Արմենը և Թարոյենց Արամը: Իսկ վերջին «կարասի» սայլապաններից արժե հիշել խաթունարխեցի Սամսոնին, Պարգևին ու Արշավիրին:

ՎԵՐՋԱԲԱՆ

Նախաուրարտական ժամանակաշրջանում կարելի է խոսել կարասատիպ անոթների և կարասի նախապատմության մասին: Իսկ ահա մեզ հայտնի կարասները սկսել են կիրառվել Արարատի թագավորությունում: Այստեղ կարասը դառնում է ուրարտական տերության տնտեսության կարևորագույն բաղադրիչներից և խորհրդանիշներից մեկը: Ինչպես ՈՒրարտուում, այնպես էլ մեր օրերում կարասները գլխավորապես տեղադրվում էին հատուկ սրահներում և/կամ սենյակներում: Դրանք պարունակում էին գինի, հացահատիկ և այլ տեսակի հեղուկներ: Կարասների վերնամասում տարողության միավորների մատնանշումը ինքնին վկայում է Վանի թագավորությունում խիստ համակարգված տնտեսության և պետականության ձևաչափի մասին:

Առնվազն ուշ ուրարտական ժամանակաշրջանից ի վեր կարասները սկսել են օգտագործել նաև թաղման համար: Ըստ երևույթին, կավից պատրաստված կարասը ասոցացվել է երկրի և/կամ արգանդի հետ, որտեղ պետք է տեղադրեին հանգուցյալին՝ հավանաբար վերջինիս վերածնվելու ակնկալիքով: Ակնհայտորեն, կարասներն առնչվել են կյանքի, ծննդի և մահվան, առատության ու բարեկեցության գաղափարներին:

Ըստ երևույթին, Արարատի թագավորության ժամանակաշրջանից մինչև մեր օրերը Հայաստանում կարասների տեսքի, ձևի, պատրաստման և կիրառման եղանակների առումով փոփոխություններ գրեթե չեն եղել: Այս համատեքստում մենք կարող ենք միանշանակորեն նշել Հայաստանում կարասի և դրա ավանդույթի չընդհատվող շարունակականության և ժառանգականության մասին:

Հայաստանում արտադրված կարասները եղել են այնքան բարձրորակ և պահանջված, որ առնվազն երկաթի դարաշրջանից արտահանվել են այլ երկրներ: Այս առումով խիստ ուշագրավ է այն փաստը, որ Հայաստանում պատրաստված կարասները հասցվել են նույնիսկ Երուսաղեմ:

Կարասները, իհարկե, փաստում են, Հայաստանում գինեգործության՝ հազարամյակների ավանդույթների մասին:

Մեր օրերում առավել քան կարևոր է հայոց ինքնությունը խորհրդանշող յուրաքանչյուր տարրին, երևույթին տեր լինելու առաքելությունը: Առանցքային նշանակություն ունի նման խորհրդանիշների հանրահռչակումը: Այդպիսիք են, օրինակ, վիշապ քարակոթողները, խաչքարերը, գորգերը, խազերը և հայոց ինքնության շատ ու շատ այլ վկաներ: Նշված բոլոր արժեքները ոչ միայն հայկական, այլ նաև համաշխարհային ժառանգության անքակտելի մաս են կազմում: Նման խորհրդանիշներից է կարասը:

Այսօր խիստ հրատապ խնդիրներ են Հայաստանում կարասի պատրաստման ավանդույթների վերականգնումը, ինագույն տեխնոլոգիաներով նոր կարասային սրահների ստեղծումը, դրանց շարունակական օգտագործումը, կարասի հանրահռչակումը՝ որպես Հայաստանի կարևորագույն խորհրդանիշներից մեկը:

Ի վերջո, ինչպես արդեն նշել ենք նախաբանում, հայկական կարասն արժանի է տեղ զբաղեցնելու մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների ցանկում:

Միքայել Բադալյան, Արսեն Բոբոխյան

ԽՄԲԱԳԻՐՆԵՐ

Բադալյան Միքայել – ՊԻ
Բոբոխյան Արսեն – ՀԱԻ

ՆԱԽԱԳԾԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂՆԵՐ

Հարությունյան Հռիփսիմե – «Բնօրրան» պատմական հուշարձանների պահպանման հայկական ընկերություն»
Բադալյան Միքայել – ՊԻ

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Ավետիսյան Հայկ – ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոն
Բադալյան Միքայել – ՊԻ
Բոբոխյան Արսեն – ՀԱԻ
Գաբրիելյան Արմինե – ՀԱԻ
Գրիգորյան Ավետիս – ՀԱԻ
Դան Ռոբերտո – Միջերկրածովյան և արևելագիտական հետազոտությունների միջազգային ասոցիացիա (Իտալիա)
Դե Կարո Տիլդե – Նանոստրուկտուրային նյութերի ինստիտուտ (Իտալիա)
Դեշամպ Ստեֆան – Ֆրանսիայի մշակույթի նախարարություն
Դիվկոլաի Մոհամմադ Քեշավարզ – Միջերկրածովյան և արևելագիտական հետազոտությունների միջազգային ասոցիացիա (Իտալիա)
Ենգիբարյան Նորա – ՀԱԻ
Ջաքյան Տիգրան – ՊՄԱԹՊՄՊԾ
Իսկրա Մատեուչ – Միջերկրածովյան հնագիտության լեհական կենտրոն
Լյուրո Օրելյա – անկախ հետազոտող (Ֆրանսիա)
Կունտներ Վալտեր – Իննսբրուկի համալսարան (Ավստրիա)
Հայնշ Սանդրա – Իննսբրուկի համալսարան (Ավստրիա)
Հարությունյան Ավագ – Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարան, Գինու ազգային կենտրոն, «Մարան» ՍՊԸ
Հմայակյան Սիմոն – ՀԱԻ
Հոբոսյան Սուրեն – ՀԱԻ
Մարտիրոսյան Հրաչ – MagEIA ծրագրի հետազոտող, Վյուրցբուրգի համալսարան, Գերմանիա
Յասենովսկայա Անաստասիա – Պուշկինի անվան կերպարվեստի պետական թանգարան (Ռուսաստանի Դաշնություն)
Նալբանդյան Արման – ՊՄԺԳՀԿ, ՀԱԻ
Սարատիկյան Անի – ՀԱԻ
Սարգսյան Վահե – ՊԻ
Ֆիշե դը Կլեֆոնտեն Ֆրանսուա – Ֆրանսիայի մշակույթի նախարարություն

ՔԱՐՏԵԶԻ ԵՎ ԵՌԱՉԱՓ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿ

Հենրիկ Դանիելյան – անկախ հետազոտող (Հայաստան)

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՊՀ – Երևանի պետական համալսարան
ՀԱԻ – ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

ՀՀ ԳԱԱ – Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա

ՀՀ ԿԳՄՍՆ – Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ՀՊԹ – Հայաստանի պատմության թանգարան

ՊԻ – ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

ՊՄԱԹՊՄՊԾ – ՀՀ ԿԳՄՍՆ «Պատմամշակութային արգելոց–թանգարանների և պատմամշակութային հուշարձանների պահպանության ծառայություն» ՊՈԱԿ

ՊՄԺԳՀԿ – ՀՀ ԿԳՄՍՆ «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ

ՊՈԱԿ – Պետական ոչ առևտրային կազմակերպություն

ՍՊԸ – Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

MagEIA – Magic Between Entanglement, Interaction and Analogy

ԿԱՐԱՍ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Խմբագիրներ՝ *Միքայել Բադալյան, Արսեն Բոբոխյան*

Նախագծի համակարգողներ՝ *Հռիփսիմե Հարությունյան, Միքայել Բադալյան*

Համակարգող՝ *Տաթևիկ Դավթյան*
Կազմը՝ *Հռիփսիմե Մինասյանի, Աննա Մարգարյանի*
Ձևավորումը՝ *Վիտալի Ասրիևի*
Սրբագրությունը՝ *Նելլի Հայրապետյանի*

Կազմին՝ Ավան–Առինջից հայտնաբերված կարաս, Ք. ա. 2–1 դդ:
© Երևան քաղաքի պատմության թանգարան, ՄՄ 3328_5 ՀՆ1261:

Չափը՝ 60x90/8: Ծավալը՝ 19 տպ. մ.
Թուղթը՝ կավճապատ: Տպագրությունը՝ օֆսեթ
Տառատեսակը՝ GHEA Granshan

Անտարես

ՀՀ, 0009, ք. Երևան, Մաշտոցի 50ա/1
Հեռ. +(374 10) 58 10 59
antares@antares.am, antares@antares.am